

ԱՅԺՄԵԱԿԱՆ ԳԻՏԵԼԻԶ ՇԱՀԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Ուսումնական-տեղեկատվական
Նյութերի ձեռնարկ ԶԷԿ-ների համար

**ԱՅԺՄԵԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ
ՇԱՅԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ**

**Ուսումնական-տեղեկատվական նյութերի ձեռնարկ
ՔՀԿ-ների համար**

Երևան, 2019



«Այժմեական գիտելիք շահերի արդյունավետ պաշտպանության համար». ուսումնական-տեղեկատվական նյութերի ձեռնարկ ԸՀԿ-ների համար

Ա 540 Այժմեական գիտելիք շահերի արդյունավետ պաշտպանության համար:
Ուսումնական-տեղեկատվական նյութերի ձեռնարկ ԸՀԿ-ների համար.- Եր.:
Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, 2021.— 200 էջ:

Ձեռնարկը մշակվել է՝ օգնելու քաղաքացիական հասարակության կազմակերպություններին (ԸՀԿ) համալրել իրենց գիտելիքները բնապահպանության, կրթության, տնտեսության, ձեռնարկատիրության, երիտասարդության և գենդերային հավասարության ոլորտներում, մասնագիտական, բայց և հանրամատչելի ոլորտային տեղեկատվություն ներկայացնելով: Ձեռնարկը կարող է օգտագործվել ինչպես տարբեր ոլորտներում գործող ԸՀԿ-ների կողմից՝ սեփական կարողությունների զարգացման նպատակով, այնպես էլ ԸՀԿ ոլորտում դասավանդող և խորհրդատու փորձագետների կողմից: Ձեռնարկի նախագծման, հրատարակչական և տպագրության աշխատանքները իրականացրել է ԵՀՀ-ն:



Այս հրապարակումը պատրաստվել էվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Եվրասիա համագործակցություն հիմնադրամը և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:



Սույն ձեռնարկը մաս է կազմում «ԵՀՀ համալսարան» խորագրի ներքո հրապարակվող ձեռնարկների շարքի՝ **«Քաղաքացիական հասարակություն» (ԸՀ)** թեմայով: Շարքն ընդգրկում է զրույցներ չորս ծավալուն թեմաների վերաբերյալ.

Ըննադատական մտածողություն (ԸՄ)

Ըննադատական մտածողություն (ԸՄ)

Պատերազմ և խաղաղություն (ՊԽ)

Պատերազմ և խաղաղություն (ՊԽ)

Քաղաքացիական հասարակություն (ԸՀ)

Քաղաքացիական հասարակություն (ԸՀ)

Կրթություն, պատմության մեթոդաբանություն, մշակույթ և արժեքներ (ԿՊՄՄԱ)

Կրթություն, պատմության մեթոդաբանություն, մշակույթ և արժեքներ (ԿՊՄՄԱ)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Օգտագործված հապավումներ	1
Ներածություն.....	3
ՀՀ տնտեսության կառուցվածքը և ձեռնարկատիրական միջավայրը.....	7
Սոցիալական ձեռնարկությունը որպես սոցիալական ազդեցության միջոց.....	37
Բնապահպանական կառավարման և վերահսկողության համակարգը և հիմնախնդիրները	43
Հայաստանի բնապահպանական հիմնախնդիրները և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից դրանց արձագանքման գործիքները.....	61
Հայաստանի կրթական համակարգը.....	89
Հավասարության, արդարության և ներառականության հիմնախնդիրները կրթության մեջ	107
Երիտասարդների մասնակցությունը և համայնքային ակտիվությունը խթանող մոդելներ և գործիքներ	131
Գենդերային հավասարություն	145
Գենդերային հիմնահարցերը և կանանց հզորացման ուղիները.....	165
Կոնֆլիկտի նկատմամբ զգայունություն. Համառոտ ներածություն.....	172
Abstract	185

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԱՀ	Ավելացված արժեքի հարկ
ԱԺ	Ազգային ժողով
ԲՀԴՏ	Բնության հատուկ պահպանվող տարածքներ
ԲՄԹ	Բազմամասնագիտական թիմ
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ
ԵՀՀ	Եվրասիա համագործակցություն հիմնադրամ
ԵՄ	Եվրամիություն
ՁԼՄ	Ձանգվածային լրատվամիջոց
ԿԶ	Կոնֆլիկտի նկատմամբ զգայունություն
ԿԶՆ	Կայուն զարգացման նպատակ
ԿՎ	Կոնֆլիկտի վերլուծություն
ԿՏ	Կանաչ տնտեսություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀԿԶԿ	Հանուն կայուն զարգացման կրթություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՇՄԱԳ	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՍՁ	Սոցիալական ձեռնարկություն
ՍԴԸ	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ՎԷ	Վերականգնվող էներգիա
ՎԿ	Վիճակագրական կոմիտե
ՏԱՑ	Տնտեսական ակտիվության ցուցանիշ
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՓՄՁ	Փոքր և միջին ձեռնարկություն
ՓՄՁ ԶԱԿ	Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն
ԶՀԿ	Զաղաքացիական հասարակության կազմակերպություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«ԶԳ Կամուրջ» ծրագիրը նախաձեռնելու խթաններից մեկը եղավ այն փաստը, որ մինչ այդ հայաստանյան քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ԶԳ) համար իրականացված կարողությունների զարգացման ծրագրերի գերակշիռ մասն ուղղված էր ԶԳ-ների կազմակերպական զարգացման ընդհանուր կարողությունների զարգացմանը (օրինակ՝ ռազմավարական կառավարում, ֆոնդահայթայթում, մարդկային ռեսուրսների կառավարում և այլն): Ի լրումն, բազմաթիվ ծրագրեր են իրականացվել հանրային քաղաքականության ոլորտում ԶԳ-ների մասնակցության ընդլայնմանն ու ամրապնդմանը նպաստելու նպատակով: Սակայն մասնակցությունը քաղաքականության մշակման և իրականացման գործընթացներում չի կարող արդյունավետ լինել, եթե ԶԳ-ները այդ գործընթացում չեն ներկայանում որպես տվյալ ոլորտում տեսական գիտելիքներին տիրապետող, ներկա իրավիճակին քաջաձանոթ, փաստերն ու փաստարկները գրագետ և հստակ շարադրող կազմակերպություններ: Փաստարկված ու գրագետ մոտեցումը քաղաքականության ցանկացած ոլորտում շահերի պաշտպանության նախաձեռնությունների հաջողությանը հասնելու գրավականներից է:

«ԶԳ Կամուրջ» ծրագիրը նպատակ դրեց ամրապնդել հայաստանյան քաղաքացիական հասարակության կարողությունները՝ նպաստելու Հայաստանում որոշումների կայացման գործընթացներին: Այս նպատակին հասնելու համար ծրագրի շրջանակներում իրականացվել են մի շարք մասնագիտական դասընթացներ և խորհրդատվություններ տարբեր ոլորտներում (օրինակ՝ կրթություն, բնապահպանություն, մշակույթ, սոցիալական ձեռնարկատիրություն և այլն) աշխատող ԶԳ-ների համար: Այս ձեռնարկի հրապարակումը

«ԹՀ Կամուրջ» ծրագրի յուրօրինակ ամփոփում է, որը ինչպես ծրագրին մասնակցած, այնպես էլ մյուս հետաքրքրված ԹՀԿ-ներին հնարավորություն կտա օգտվել ծրագրի շրջանակներում ստեղծված ռեսուրսից և մասնագիտական գիտելիքներից՝ ծանոթանալով բնապահպանության, կրթության, տնտեսության, ձեռնարկատիրության, երիտասարդության և գենդերային հավասարության ոլորտների հիմնական հասկացություններին, գաղափարներին, ինչպես նաև կոնկրետ ոլորտներում Հայաստանում առկա իրավիճակին և զարգացման միտումներին: Ձեռնարկը կոչված է օգնելու համապատասխան ոլորտներում աշխատող կամ սկսնակ ԹՀԿ-ներին՝ հիմնարար գիտելիքներ և շահերի պաշտպանության ուղղություններ առաջարկելով այս կամ այն բնագավառում: Մինևույն ժամանակ, այն օգտակար կլինի նաև ԹՀԿ-ների անդամների, ինչպես նաև պետական աշխատողների և ընթերցողների լայն շրջանի համար՝ գիտելիքների ընդհանուր մակարդակը բարելավելու, որևէ ոլորտին ծանոթանալու և համապատասխան փաստերին ու զարգացումներին կշռադատված մոտեցում ցուցաբերելու համար: Հայաստանի քաղաքական և տնտեսական կյանքում տեղի ունեցած և ընթացիկ զարգացումները հիմք են տալիս համոզվելու, որ ակտիվ քաղաքացիական հասարակությունը կարող է նշանակալի դեր ու ազդեցություն ունենալ իրականացվող բարեփոխումների և ընդունվող որոշումների վրա՝ լինեն դրանք բնապահպանական, կրթական, տնտեսական թե՛ այլ ոլորտներում: Ոչ միայն այս կամ այն ուղղությամբ մասնագիտացած ԹՀԿ-ների ներկայացուցիչը, այլև տվյալ հարցով հետաքրքրված ցանկացած կազմակերպություն և ակտիվ քաղաքացի կարիք ունի ծանոթ լինել ոլորտի հիմնական հասկացություններին, տեղեկանալու իրավական կարգավորումներին և գործնականում առկա իրավիճակին:

«ԹՀ Կամուրջ» ծրագրի մեկնարկային փուլում իրականացվեց ԹՀԿ-ների մասնագիտական կարիքների ուսումնասիրություն՝ նպատակ ունենալով ավելի լավ պատկերացում կազմել հայաստանյան ԹՀԿ-ների կարիքների և բացերի մասին՝ կապված մասնագիտական և ոլորտային կարողությունների հետ, ինչպես նաև նախնական տվյալներ հավաքել «ԹՀ Կամուրջ» ծրագրի համար: Ի թիվս այլ եզրահանգումների, հետազոտությունը փաստեց, որ գրեթե բոլոր բնագավառների ԹՀԿ-ների առջև ծառայած է քաղաքականության մակարդակում ներգործություն ունենալու մարտահրավերը, իսկ իրավական գիտելիքները և շահերի պաշտպանությունը ամենապահանջված հմտություններից են գործունեության բոլոր ասպարեզներում¹: Անգամ այն դեպքում,

1. Հայաստանյան ԹՀԿ-ների մասնագիտական կարիքների գնահատում. եզրահանգումների ամփոփում, Քաղաքացիական զարգացման և համագործակցության հիմնադրամ, Երևան, 2017, էջ 3, <http://ngoc.am/wp-content/uploads/2018/10/Հայաստանի-ԹՀԿ-ների-մասնագիտական-կարիքների-գնահատում.pdf>

երբ ԶԻԿ-ները զբաղվում են ծառայությունների մատուցման, իրազեկման միջոցառումների, տարբեր սոցիալական խմբերին աջակցություն տրամադրելու գործունեությամբ և մտադիր չեն շահերի պաշտպանության նախաձեռնություններ իրականացնել, կազմակերպության զարգացման և գործունեության ընդլայնման հետ մեկտեղ վաղ թե ուշ նրանք ստիպված են երկխոսության մեջ մտնել քաղաքականություն կերտողների և իրականացնողների հետ: Ավելին, ԶԻԿ-ների կողմից պետական քաղաքականության մոնիտորինգը առավել պահանջված ու բաց մնացած ոլորտներից է, որը կարողանում են լրացնել միայն հմուտ և ոլորտում մասնագիտացած սակավաթիվ ԶԻԿ-ներ: Փորձագետներն արձանագրել են նաև գիտելիքների ու կարողությունների պակասը պետական քաղաքականության մշակմանը մասնակցության՝ քաղաքական երկխոսության հարցում²: Ինչպես նշվում է «ԶԻ Դեպո» ծրագրի շրջանակում մշակված վերլուծական զեկույցում, «փորձագետները համարում են, որ Հայաստանի ԶԻԿ-ները դեռևս թույլ են պետական քաղաքականության վրա ազդեցություն ունենալու տեսանկյունից, քանի որ չեն կարողանում ճիշտ ձևակերպել իրենց ուղերձը, քաղաքականության փաստաթուղթ մշակել, փաստարկված հիմնավորումներ բերել, ինչպես նաև համախմբված ներկայանալ»³: Վերլուծության մեջ նշվում է նաև, որ փաստարկված շահերի պաշտպանության և համապատասխան ծառայությունների մատուցման համար կարևոր են իրավական գիտելիքները և տեղեկացվածությունը համապատասխան պետական կառույցների մասին:

Ըստ այդմ, ձեռնարկում ներառված նյութերում անդրադարձ է կատարվել բնապահպանության, կրթության, զենդերային հավասարության և այլ ոլորտներում առկա իրավական կարգավորումների, ոլորտային քաղաքականությունը մշակող և իրականացնող պետական կառույցների վերաբերյալ: Հեղինակներն ուրվագծել են նաև օրենսդրական ու իրավակիրառ բնագավառներում առկա այն ոլորտային բացերը, որոնց ուղղությամբ հետագա աշխատանքի կարիք են տեսնում: ԶԻԿ-ներն ազատ են ընդունելու այս առաջարկները և աշխատելու բացերը լրացնելու, քարոզարշավներ նախաձեռնելու, ինչպես նաև բարձրացված հարցերին քննադատաբար մոտենալու և լրացուցիչ վերլուծություն կատարելու ուղղությամբ: Ձեռնարկում կան նաև ուսուցողական նյութեր՝ սոցիալական ձեռնարկությունների սոցիալական

2. ԶԻԿ ոլորտի շուկայի համապարփակ հետազոտության արդյունքները. Վերլուծական զեկույց, Հետազոտական ռեսուրսների կոլկապյան կենտրոն-Հայաստան, Երևան, 2015, https://www.crrc.am/wp-content/uploads/2019/03/CSO-Market-Research_Full-Report_Armenian_final.pdf

3. Նույն տեղում, էջ 107

ազդեցության, գենդերային հիմնահարցերի, կոնֆլիկտի նկատմամբ զգայունության հասկացությունների սահմանումների և մոտեցումների վերաբերյալ: Եվ վերջապես, ձեռնարկի մի շարք նյութեր ներկայացնում են Հայաստանում տվյալ ոլորտին առնչվող վիճակագրական տվյալներ, գնահատականներ և ուսումնասիրություններ, որոնք թե՛ ուսուցանող և թե՛ շահերի պաշտպանության նախաձեռնությունների համար լրացուցիչ տեղեկատվություն տրամադրող բնույթ ունեն:

Ձեռնարկի հեղինակները հույս ունեն, որ այն հնարավորություն կտա ԶՅԿ-ներին հարստացնել շահերի պաշտպանության իրենց փաստարկները վերոնշյալ ոլորտներում, ինչպես նաև կոգեչնչի առկա խնդիրների լուծման ուղղությամբ նոր նախաձեռնություններ սկսել: Վստահ ենք, որ հայաստանյան ԶՅԿ-ները շարժիչ ուժ են եղել և լինելու մեր երկրի զարգացման, մարդու իրավունքների պաշտպանության և իշխանության ու հասարակության միջև երկխոսության ապահովման ուղղությամբ:

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Հասմիկ Հովհաննիսյան, Արմինե Չոբանյան, Շուշանիկ Իսահակյան
Երիտասարդ տնտեսագետների միություն

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՀԱՄԱԽԱՈՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆԸ

ՀՆԱ-ի էությունը, կառուցվածքը և կարևորությունը տնտեսությունում

Համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) տնտեսագիտական 4 հիմնական հասկացություններից է: Այն ցուցանում է մեկ երկրում արտադրված ապրանքներն ու ծառայությունները ինչպես սեփական, այնպես էլ ներմուծված ռեսուրսների օգտագործմամբ: Այլ կերպ ասած՝ ՀՆԱ-ն տնտեսությունում մեկ տարում արտադրված վերջնական ապրանքների և ծառայությունների շուկայական արժեքն է⁴: ՀՆԱ-ում կրկնակի հաշվարկից խուսափելու նպատակով նկատի են առնվում վերջնական ապրանքների և ծառայությունների գները, քանի որ միջանկյալ ապրանքների ու ծառայությունների ծախսն արդեն իսկ հաշվարկված է վերջնական ապրանքների և ծառայությունների գնի մեջ:

4. Intermediate Macroeconomics: Textbook, Julio Garin, Eric Sims, Robert Lester, 2018, p. 24, https://www3.nd.edu/~esims/1/gls_int_macro.pdf

ՀՆԱ-ն հնարավորություն է տալիս՝

- գնահատելու տնտեսության ներկայիս վիճակը,
- հստակ պատկերացնելու, թե ինչ փոփոխություններ և միտումներ են գրանցվել տնտեսության մեջ,
- համեմատելու այն նախորդ տարիների ՀՆԱ-ի հետ,
- համեմատելու այլ երկրների ՀՆԱ-ի հետ,
- իրականացնելու արդյունավետ տնտեսական պլանավորում պետության համար, ներառյալ տնտեսական ռազմավարության, հարկային, դրամավարկային և հարկաթյուղջտային քաղաքականությունների մշակումն ու իրականացումը: Ինչպես նաև ներդրողներին հնարավորություն է տալիս գնահատելու ներդրումների արդյունավետությունը և այլն⁵:

Գոյություն ունի ՀՆԱ-ի հաշվարկման 3 եղանակ՝

- 1. արտադրական.** ՀՆԱ-ն հաշվարկվում է ըստ գործունեության տեսակների՝ արտահայտված շուկայական գներով՝ արտադրված համախառն ավելացված արժեքի ու արտադրանքի զուտ հարկերի հանրագումարը,
- 2. եկամուտների ձևավորման.** ՀՆԱ-ն հաշվարկվում է ֆինանսական և ոչ ֆինանսական կազմակերպությունների, տնային տնտեսությունների, պետական հիմնարկների, ինչպես նաև տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների ստացած սկզբնական եկամուտների հիմամբ:
- 3. եկամուտների օգտագործման կամ ծախսային.** այստեղ ՀՆԱ-ն ապրանքների և ծառայությունների վերջնական սպառման ծախսերի, համախառն կուտակման ու զուտ արտահանման հանրագումարն է:⁶

5. What Is Gross Domestic Product?, Tim Callen, Finance and Development, December, 2008. <https://bit.ly/35vDGoL>

6. Վիճակագրական ցուցանիշների մեթոդաբանական պարզաբանումներ, ՀՀ վիճակագրական կոմիտե, էջ 244, https://www.armstat.am/file/article/sv_12_11a_6400.pdf

Տնտեսական փոփոխությունները բնութագրող մեկ այլ ցուցանիշ է տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ), որը վերջերս են սկսել հաշվարկել: Այն երկրի տնտեսությունում արտադրանքի թողարկման իրական ծավալի փոփոխության ամսական ագրեգացված ցուցանիշն է՝ ընդգրկելով տնտեսական գործունեության բոլոր տեսակները և հիմք ընդունելով նախորդ տարվա միջին տարեկան գները: Ի տարբերություն ՅՆԱ-ի, որը գնահատում է ավելացված արժեքի փոփոխությունը, ամսական ՏԱՑ-ը գնահատում է տնտեսությունում թողարկված ապրանքների և ծառայությունների ծավալների միտումները:

Կարևոր է նաև տարբերակել անվանական (նոմինալ) և իրական ՅՆԱ-ի ցուցանիշները, որտեղ


- անվանական ՅՆԱ-ն ընթացիկ գներով հաշվարկված տնտեսության արդյունքն է,
- իրական ՅՆԱ-ն թողարկված արտադրանքի փաստացի ծավալն է՝ հաշվարկված բազիսային տարվա գներով:

ՅՆԱ-ն հիմնականում հաշվարկվում է երկրի վիճակագրական կազմակերպությունների կողմից՝ հիմք ընդունելով միջազգային ստանդարտները: Հայաստանում ՅՆԱ-ի վերաբերյալ վիճակագրությունը կազմվում է ՀՀ վիճակագրական կոմիտեի (ՎԿ) կողմից՝ հիմք ընդունելով ազգային հաշիվների համակարգի մեթոդաբանական առաջարկությունները⁷: ՅՆԱ-ի եռամսյակային և տարեկան ցուցանիշների հաշվարկի համար հիմք են հանդիսանում ՀՀ ՎԿ, ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ ֆինանսների նախարարության տվյալները:

Հայաստանի Հանրապետության ՅՆԱ-ի ընդհանուր պատկերը

Անկախության տարիներից ի վեր ՀՀ-ում ընդհանուր առմամբ գրանցվել է ՅՆԱ-ի աճ, իսկ գրանցված բացասական միտումը հիմնականում պայմանավորված է եղել համաշխարհային և տարածաշրջանային շուկաների ճգնաժամներով (տես գծապատկեր 1-ը):

7. System of National Accounts 2008, European Commission International Monetary Fund, Organisation for Economic Co-operation and Development (OECD), United Nations, World Bank, New York 2009, <https://unstats.un.org/unsd/nationalaccount/docs/SNA2008.pdf>



Գծապատկեր 1. ՀՀ ՀՆԱ-ի տարեկան միտումները 2008-2018 թթ., (տոկոսներով)⁸

Գծապատկեր 2-ում ներկայացված է ՀՀ ՀՆԱ-ի ոլորտային կառուցվածքը:



Գծապատկեր 2. ՀՀ ՀՆԱ-ի կառուցվածքը 2018 թ., (տոկոսներով)⁹

Վերջին 10 տարիներին ՀՀ տնտեսության առաջատար ոլորտ է հանդիսացել գյուղատնտեսությունը, որին հաջորդում են մեծածախ և մանրածախ առևտուրը, ավտոմեքենաների և մոտոցիկլետների նորոգումը, մշակող արդյունաբերությունը, անշարժ գույքի հետ կապված գործունեությունը և շինարարությունը:

8. Ժամանակագրական շարքեր, ՀՀ վիճակագրական կոմիտե, համախառն ներքին արդյունք, շուկայական գներով/2019, <https://www.armstat.am/am/?nid=12&id=01001&submit=Փնտրել>

9. Ազգային հաշիվներ, ՀՆԱ արտադրությունը, ՀՆԱ, ՀՀ վիճակագրական կոմիտե, <https://www.armstat.am/am/?nid=202>

Արդյունաբերության հիմնական ճյուղերը

Արդյունաբերությունը երկրի տնտեսության շարժիչ ուժն է, որտեղ արտադրվում են բազմազան արտադրատեսակներ: Արդյունաբերության հիմնական ճյուղերն են՝

- հումքի արդյունահանումն ու մշակումը,
- էներգիայի տարբեր տեսակների արտադրությունը,
- մշակող արդյունաբերությունը:


ՀՀ արդյունաբերության կառուցվածքը և հիմնական միտումները

Հայաստանում արդյունաբերական արտադրանքը ներառում է հետևյալ բաղադրիչները.

1. հանքագործական արդյունաբերություն և բաց հանքերի շահագործում,
2. մշակող արդյունաբերություն,
3. էլեկտրաէներգիայի, գազի, գուլորշու և լավորակ օդի մատակարարում,
4. ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում:

Նշենք, որ 2017 թ. դրությամբ Հայաստանում գործում է 2866¹⁰ արդյունաբերական կազմակերպություն, որտեղ առաջատարը մշակող արդյունաբերական ընկերություններն են:

10. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2018, ՀՀ վիճակագրական կոմիտե, էջ 273:



Գծապատկեր 3. ՀՀ արդյունաբերության կառուցվածքն ըստ հիմնական ճյուղերի, 2018 թ., (տոկոսներով)¹¹

Գյուղատնտեսության հիմնական ճյուղերը

Գյուղատնտեսության հիմնական ճյուղերն են.

- բուսաբուծությունը,
- անասնաբուծությունը,
- անտառաբուծությունը,
- ձկնորսությունը և ձկնաբուծությունը,
- որսորդությունը:

Անասնաբուծական հիմնական արտադրանքը ներառում է միս, կաթ, ձու, բուրդ, մեղվաբուծության արտադրանք և այլն:

Բուսաբուծության արտադրանքի հիմնական տեսակներն են՝ հացահատիկ և հատիկալնդեղեն, տեխնիկական մշակաբույսեր, կարտոֆիլ, բանջարեղեն, բոստանային մշակաբույսեր, պտուղ և հատապտուղներ, խաղող, կերային մշակաբույսերի արտադրանք, գյուղատնտեսական մշակաբույսերի սերմեր և բազմամյա տնկարկների տնկանյութ և այլն:

11. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թ. հունվար-դեկտեմբերին, ՀՀ վիճակագրական կոմիտե, էջ 13, https://www.armstat.am/file/article/sv_12_18a_121.pdf

Գյուղատնտեսության կառուցվածքը և հիմնական միտումները

Գյուղատնտեսության և ձկնորսության համախառն արտադրանքը կազմում է 926,4 մլրդ դրամ: Դրա գերակշիռ մասը՝ 96,04 տոկոսը, կազմում է գյուղատնտեսությունը, որից 46,2 տոկոսը բաժին է ընկնում բուսաբուծությանը և 53,8 տոկոսը՝ անասնաբուծությանը: 36,7 մլրդ դրամ էլ ձկնորսությունն է կազմում:¹²

Ծառայությունների հիմնական ոլորտները

Ծառայությունների ոլորտը ներառում է առևտրային և ոչ առևտրային ծառայությունները: Ծառայությունների ոլորտի մեջ են մտնում.

- տնտեսության ենթակառուցվածքների արտադրության և ծառայությունների մատուցման ոլորտը,
- տնտեսության ոչ արտադրական և իրավաբանա-ֆինանսական կամ սոցիալական ծառայությունների ոլորտները:

Ծառայությունների մատուցման ենթաոլորտներն են.

- կոմունալ-կենցաղային,
- շինարարական,
- էլեկտրաէներգետիկա,
- գազամատակարարում,
- ջերմամատակարարում,
- տրանսպորտային,
- կապի և հեռահաղորդակցության,
- թվային և կենցաղային տեխնիկայի վերանորոգման,
- առևտրային,
- հանրային սննդի,
- կենցաղային,
- ապահովագրական:


12. Նույն տեղում, էջ 20:

Սոցիալական ծառայությունների ենթաօլորտներն են.

- վարձույթի,
- բժշկական-սանիտարական,
- կրթական,
- տեղեկատվական,
- իրավաբանական,
- ֆինանսական,
- թարգմանչական,
- հյուրանոցային,
- անվտանգության ապահովման,
- զբոսաշրջային,
- ժամանցային և հանգիստ:

ՀՀ ծառայությունների ոլորտը

ՀՀ ծառայությունների արտադրանքը 2016 թ. կազմել է ավելի քան 1,268,934 մլն դրամ: Այստեղ առաջատար ոլորտներն են ֆինանսական և ապահովագրական գործունեությունը, մշակույթը և զվարճալիքները, հանգիստը, տեղեկատվությունը և կապը:



Գծապատկեր 4. ՀՀ ծառայությունների ոլորտի կառուցվածքն ըստ հիմնական ճյուղերի, 2016 թ.(տոկոսներով)¹³

Արտաքին ապրանքաշրջանառության կարևորությունը տնտեսությունում

Ապրանքաշրջանառությունն առք ու վաճառքի գործողություն է, որն ապահովում է ապրանքների ու ծառայությունների հոսքն արտադրությունից դեպի սպառողը: Առևտրական գործարքների տեսակներից կախված՝ ապրանքաշրջանառությունը կարող է լինել՝

- **մեծածախ ու մանրածախ:** Մեծածախ է համարվում առևտրի այն տեսակը, երբ գնորդը մեծ խմբաքանակով ապրանքներ է ձեռք բերում հիմնականում վերավաճառքի համար: Մանրածախ առևտուրն ապրանքների առուծախն է՝ նախատեսված անձնական, ընտանեկան, տնային կամ այլ օգտագործման համար:
- **Ներքին ու արտաքին:** Ներքին ապրանքաշրջանառությունը ենթադրում է ապրանքի շարժ մեկ երկրի սահմանների ներսում, իսկ արտաքինը՝ երկու և ավելի երկրների միջև: Ապրանքների «արտահոսքը» երկրից անվանում ենք արտահանում, իսկ «ներհոսքը» դեպի երկիր՝ ներմուծում: Այն վիճակագրական աղյուսակը, որը գրանցում է նյութական կամ շոշափելի ապրանքների արտահանումն ու ներմուծումը արժեքային արտահայտությամբ, կոչվում է առևտրային հաշվեկշիռ: Երբ արտահանվող ապրանքներն արժեքային արտահայտությամբ գերազանցում են ներմուծվող ապրանքները, առևտրային հաշվեկշռում

13. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2016 թվականի հունվար-դեկտեմբերին, ՀՀ վիճակագրական կոմիտե, Էջ. 44-46, https://www.armstat.am/file/article/torg_2017_3.pdf

առկա է դրական սալոդ, առևտրի ավելցուկ կամ պրոֆիցիտ, իսկ հակառակի դեպքում՝ բացասական սալոդ կամ դեֆիցիտ:

Արտաքին ապրանքաշրջանառությունն արտահանման և ներմուծման գումարն է: Այն կարգավորվում է երկրի արտաքին առևտրային քաղաքականությամբ, որի հիմնական գործիքներն են մաքսադրույքները, քվոտան և այլն:

ՀՀ արտաքին ապրանքաշրջանառությունը

Հայաստանի արտաքին առևտրի քաղաքականությունը վերջին տարիներին միտված է արտաքին առևտրի ազատական քաղաքականության սկզբունքին, Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորությունների պահպանմանը, արտաքին առևտրում ներգրավված տնտեսվարողների համար առավել բարենպաստ դաշտի ձևավորմանը, ինչպես նաև հայրենական արտադրության ապրանքների արտահանման խթանմանը: 2015 թվականից Հայաստանը ԵԱՏՄ անդամ է, որի արդյունքում ՀՀ մաքսային քաղաքականությունը պետք է համապատասխանեցվի ԵԱՏՄ քաղաքականությանը: Այն ազատ մուտք է ապահովում դեպի ԵԱՏՄ անդամ երկրների շուկա:

ՀՀ արտաքին ընդհանուր ապրանքաշրջանառությունը 2018 թ. կազմել է 7,37 մլրդ ԱՄՆ դոլար, որից արտահանումը՝ 2,41 մլրդ, իսկ ներմուծումը՝ 4,96 մլրդ ԱՄՆ դոլար¹⁴: Հայաստանի առևտրային հաշվեկշիռը մշտապես բացասական է եղել, այսինքն՝ ներմուծումը գերազանցել է արտահանմանը: Ինչից էլ կարելի է ենթադրել, որ Հայաստանի տնտեսությունը կախյալ է ներմուծվող ապրանքներից:

«Արտադրված է Հայաստանում» արտադրանքը հիմնականում արտահանվում է Ռուսաստան, Բուլղարիա, Նիդեռլանդներ, Գերմանիա, Շվեյցարիա և Չինաստան: Հայաստան ներմուծվում են ապրանքներ հիմնականում Ռուսաստանից, Ֆրանսիայից, Նիդեռլանդներից, Գերմանիայից, Իտալիայից, Բելգիայից, Ամերիկայի Միացյալ Նահանգներից, Արաբական Միացյալ Էմիրություններից, Իրանի Իսլամական Հանրապետությունից, Շվեյցարիայից, Թուրքիայից և Չինաստանից:

Հայաստանն արտահանել է մասնավորապես պատրաստի մենդամթերք,

14. Ժամանակագրական շարքեր, ՀՀ վիճակագրական կոմիտե, ներմուծում, մլն ԱՄՆ դոլար/2019, <https://www.armstat.am/am/?nid=12&id=10004&submit=Փնտրել>, արտահանում, մլն ԱՄՆ դոլար/2019, <https://www.armstat.am/am/?nid=12&id=10003&submit=Փնտրել>, արտաքին առևտրաշրջանառություն, մլն ԱՄՆ դոլար/2019, <https://www.armstat.am/am/?nid=12&id=10001&submit=Փնտրել>

հանքահումքային արտադրանք, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք ու ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր, մանածագործական արտադրանք և այլն: Իսկ ներմուծվող հիմնական ապրանքներն են մեքենաները, սարքավորումներն ու մեխանիզմները, հանքահումքային արտադրանքը, պատրաստի սննդամթերքը, քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերական ճյուղերի արտադրանքը, վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցները և այլն¹⁵:

Աշխատաշուկայի ընդհանուր պատկերը

Աշխատաշուկան մի յուրահատուկ համակարգ է, որը ներկայացնում է աշխատուժի նկատմամբ առաջարկն ու պահանջարկը: Այս շուկայում կարևորվում են գործատուների և աշխատողների աշխատանքային հարաբերությունները, այդ թվում՝ աշխատանքի տեղավորման, զբաղվածության, վարձատրության, աշխատանքային պայմանների և այլ հարցեր: Ցանկացած տնտեսության համար կարևորվում է լրիվ զբաղվածությունը, որը վկայում է երկրի աշխատուժի արդյունավետ օգտագործման մասին:

Աշխատուժի «գինը» աշխատավարձն է, որը հարկվում է հիմնականում եկամտահարկով: Սա այն հարկատեսակն է, որը կիրառվում է ֆիզիկական անձի գործունեության արդյունքից ստացված եկամտի վրա:

ՀՀ աշխատաշուկայի ընդհանուր պատկերը

Հայաստանի աշխատանքային ռեսուրսները կազմում են 2,021 մլն մարդ, որից տնտեսապես ակտիվ բնակչությունը 1,23 միլիոնն է, ոչ ակտիվը՝ 0,79 միլիոնը¹⁶:

2018 թ. գործազրկությունը կազմել է 219 հազար մարդ, որից պաշտոնապես գրանցված են 76,9 հազարը, ինչը նախորդ տարվա համեմատ պակաս է 3,1 տոկոսով¹⁷: 2017 թ. զբաղվածների թիվը կազմել 1,01 մլն մարդ, որից 52,3 տոկոսը տղամարդիկ են, 41,7-ը՝ կանայք: Վերջին 10 տարում մշտապես զբաղված տղամարդկանց քանակն ավելի շատ է եղել, քան կանանցը:

15. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թ. հունվար-դեկտեմբերին, ՀՀ վիճակագրական կոմիտե, էջ 132, https://www.armstat.am/file/article/sv_12_18a_411.pdf

16. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2018, ՀՀ վիճակագրական կոմիտե, էջ 55, <https://www.armstat.am/file/doc/99510748.pdf>

17. Աշխատանքային ռեսուրսներ (15-75 տարեկաններ)՝ ըստ ցուցանիշների և տարիների, ՀՀ վիճակագրական կոմիտե, <https://bit.ly/2AODVgL>

2017 թ. զբաղվածների 13,1 տոկոսը ներգրավված էր արդյունաբերության, 31,3 տոկոսը՝ գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսության, 3,7 տոկոսը՝ շինարարության, իսկ 51,9 տոկոսը՝ ծառայության ոլորտում¹⁸:

Գնաճ

Գնաճը կամ սղաճը տնտեսությունում գների ընդհանուր մակարդակի բարձրացումն է, որն ուղեկցվում է ազգային դրամական միավորի արժեզրկմամբ: Երբ տնտեսությունում գրանցվում է գնաճ, ապա ազգային դրամական յուրաքանչյուր միավորով հնարավոր է լինում գնել ավելի քիչ ապրանքներ և ծառայություններ: Գնաճի գլխավոր ցուցանիշը ընդհանուր կամ սպառողական գների ինդեքսն է, որը ցույց է տալիս տարեկան տոկոսային փոփոխությունը գների մակարդակում: Գոյություն ունի գնաճի չորս մակարդակ՝

- նորմալ կամ սողացող, որի դեպքում գների աճի միջին տարեկան տեմպը կազմում է մինչև 5 %,
- չափավոր, որի ժամանակ գների աճի միջին տարեկան տեմպը չի գերազանցում 5-10 %-ը,
- թռիչքային կամ քառատրոփ, որի պարագայում գներն աճում են տարեկան 10 %-ից ավելի,
- գերգնաճ, որը գնաճի բարձր միտում է՝ շրջանառու դրամաբանական և ապրանքային գների մակարդակի չափազանց ու անկանխատեսելի աճ, որի ժամանակ գնաճը դուրս է գալիս հսկողությունից և սպառնում ամբողջ տնտեսության կազմալուծմանը: Սա սովորաբար վերաբերում է ամիսներ շարունակվող և սոցիալական ցնցումներով ուղեկցվող գների աճին: ¹⁹

18. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2018, ՀՀ վիճակագրական կոմիտե, էջ 35, <https://www.armstat.am/file/doc/99510748.pdf>

19. Թամարա Տոնյան, Տնտեսագիտության հիմունքներ, Երևան, Ֆինանսաբանկային բոլեջ, 2003, էջ 87:

ՀՀ գնաճի միտումները

Հայաստանում գնաճի միտումները ներկայացված են գծապատկեր 5-ում:



Գծապատկեր 5. Գնաճի միտումները 2008-2018 թթ., (տոկոսներով)²⁰

Փոխարժեք

Արժույթը նույն փողն է, սակայն կատարում է դրա միայն մեկ գործառույթը՝ փոխանակումը, ընդ որում՝ արտաքին տնտեսական հարաբերություններում: Արժույթները փոխանակվում են՝ ելնելով դրանց փոխանակման գնից, որը կոչվում է փոխարժեք, իսկ այն մեխանիզմը, որով սահմանվում է փոխարժեքը, անվանում ենք գնանշում (quotation): Գոյություն ունեն փոխարժեքի հետևյալ հիմնական տեսակները.

- **Ֆիքսված**, որը սահմանվում է պետության կողմից,
- **լողացող**, որը սահմանվում է շուկայի առաջարկով և պահանջարկով,
- **կարգավորվող-լողացող**, որի դեպքում արժույթի փոխարժեքը որոշակի սահմաններում հաստատվում է շուկայի առաջարկով և պահանջարկով, սակայն այդ սահմանների խախտման պարագայում պետությունը միջամտում է և փոխարժեքը բերում թույլատրելի սահմանների:

Արժույթների գնանշման համար օգտագործվում է հիմնականում երեք եղանակ՝

1. ուղղակի. արտարժույթի գնի արտահայտումը տեղական արժույթով (օրինակ՝ 1 USD = 360 AMD),

20. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թ. հունվար-դեկտեմբերին, ՀՀ վիճակագրական կոմիտե, էջ 62, https://www.armstat.am/file/article/sv_12_18a_130.pdf

2. անուղղակի. տեղական արժույթի արտահայտումը արտարժույթով (օրինակ՝ 1 AMD = 0,003 USD),
3. քրոս-կուրս, երբ փոխարժեքը որոշվում է երրորդ արժույթի միջոցով (օրինակ՝ 1 USD = 480 AMD, 1 USD = 0.9 EUR, հետևաբար 1 EUR=533 AMD):²¹

Արժույթի փոխարժեքի տատանումը ներազդում է արտահանման և ներմուծման տնտեսական ակտիվության, ինչպես նաև գնաճի վրա:

ՀՀ փոխարժեքի միտումները

ՀՀ-ում փոխարժեքը տարիների ընթացքում բավականին տատանվել է: Ընդ որում ԱՄՆ դոլարը և եվրոն գրանցել են միջին փոխարժեքի աճ, իսկ ռուբլին՝ նվազում:



Գծապատկեր 6. Արտարժույթային փոխարժեքներ, դրամ/1 ԱՄՆ դոլար, դրամ/1 եվրո և դրամ/ 1 ռուբլի միջին փոխարժեքները 2008-2018 թթ., միջին²²

Ֆինանսական համակարգը

Ֆինանսական համակարգը ներկայացնում է դրամական հարաբերություններն արտադրական գործընթացի բոլոր սուբյեկտների միջև: Ֆինանսական համակարգի վարած քաղաքականությունը կոչվում է ֆինանսական քաղաքականություն:

21. Essentials of International Economics: Questions & Answers, Yuriy Kozak, Tadeusz Sporek, Kiev-Katowice: CUL, 2014, pp. 103-105.

22. Ժամանակագրական շարքեր, ՀՀ վիճակագրական կոմիտե, արտարժույթային փոխարժեքներ, դրամ/1 եվրո միջին փոխարժեքը/2019, <https://www.armstat.am/am/?nid=12&id=17012&submit=Փնտրել>, արտարժույթային փոխարժեքներ, դրամ/1 ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը/2019, <https://www.armstat.am/am/?nid=12&id=17010&submit=Փնտրել>, արտարժույթային փոխարժեքներ, դրամ/1 ՌԴ միջին փոխարժեքը/2019, <https://www.armstat.am/am/?nid=12&id=17011&submit=Փնտրել>

Ֆինանսական համակարգի հիմնական հաստատություններն են՝ կենտրոնական բանկը, բանկերը, վարկային կազմակերպությունները, ապահովագրական համակարգը, գրավատները, արժեթղթերի շուկան, վճարահաշվարկային կազմակերպությունները, արժուբային շուկան և այլն: Ֆինանսական հարաբերությունների սուբյեկտներն են՝ պետությունը, ձեռնարկությունները, տարբեր միավորումները, հիմնադրամները, հասարակական կազմակերպություններն ու անհատ քաղաքացիները:²³

ՀՀ ֆինանսական համակարգը

ՀՀ ֆինանսական համակարգը կարգավորող և վերահսկող կառույցը ՀՀ կենտրոնական բանկն է, որը պետական անկախ կառավարման կառույց է և որի գործունեության հիմնական նպատակը գների կայունության ապահովումն է ՀՀ տարածքում: Կենտրոնական բանկը գործում է ՀՀ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան: Ներկայումս ՀՀ պետական ֆինանսական քաղաքականությունը հիմնականում ուղղված է տնտեսական կայունության ապահովմանը, պետական բյուջեի պակասուրդի կրճատմանը և տնտեսական աճի նախադրյալների ստեղծմանը²⁴:

ՀՀ ֆինանսական շուկայի խոշորագույն մասնակիցն է բանկային համակարգը, որին բաժին է ընկնում ֆինանսական համակարգի ակտիվների 85.5%-ը²⁵:

Ֆինանսական ոլորտում սպառողների իրավունքների և շահերի պաշտպանության, նրանց պահանջների արագ, արդյունավետ և անվճար քննության, ֆինանսական համակարգի նկատմամբ հանրային վստահության բարձրացման և ֆինանսական միջնորդության ավելացման նպատակով ստեղծվել է Ֆինանսական համակարգի հաշտարարը²⁶:

Գործարար միջավայրը Հայաստանում

Տնտեսությունում ներդրումների և գործարարության աճը պայմանավորված է տվյալ երկրի գործարար միջավայրով: Այն ներքին և արտաքին

23. Ավետիսյան Ս., Թովմասյան Ռ., Տնտեսագիտության տեսություն, Երևան, Նահապետ, 2010, էջ 155:

24. ՀՀ օրենքը «Կենտրոնական բանկի մասին», 30 հունիսի, 1996 թ., https://www.cba.am/AM/lalaws/Kentronakan_banki_masin.pdf

25. Ֆինանսական համակարգ և վերահսկողություն, ՀՀ կենտրոնական բանկ, <https://www.cba.am/am/SitePages/fscintroduction.aspx>

26. ՀՀ օրենքը «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին», 17 հունիսի, 2008 թ., <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=64647>

գործոնների ամբողջությունն է, ինչպիսիք են՝ առկա աշխատուժի որակը և քանակը, սպառողների գնողունակությունն ու քանակը, իրավական և հարկային դաշտերը, առկա ենթակառուցվածքները, հարկային արտոնությունները, տնտեսական ու ֆինանսական կայունությունը, կառավարության կողմից իրականացվող գործողությունները, տեխնոլոգիաների նորարարության աստիճանը, սոցիալական և շուկայական միտումները, տնտեսական փոփոխությունները և այլն, այսինքն՝ բոլոր այն գործոնները, որոնք ազդում են ընկերության գործառույթների վրա: Գործարար միջավայրը հնարավորություն է տալիս բացահայտելու բիզնեսի հնարավորությունները: Գործարար միջավայրի հիմնական գործոնները ներկայացվում են նաև միջազգային տնտեսական և գործարարության մի շարք ցուցանիշների օգնությամբ, մասնավորապես.

1. ըստ Գլոբալ մրցունակության ցուցանիշի՝ 2018 թ. Հայաստանը զբաղեցրել է 70-րդ տեղը (140 երկրների շարքում)²⁷,
2. ըստ Համաշխարհային բանկի տվյալների՝ 2018 թ. Հայաստանը հանդիսացել է բարձր միջին եկամուտ ունեցող երկիր²⁸,
3. ըստ «Թրանսփարենսի ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի կոռուպցիայի ընկալման համաթվի՝ 2018 թ. Հայաստանը զբաղեցրել է 105-րդ տեղը (180 երկրների շարքում)²⁹,
4. «Մուդիս» գործակալության սուվերեն վարկային վարկանիշով 2019 թ. Հայաստանը գնահատվել է Ba3՝ կայուն³⁰,
5. «Ֆիտչ» գործակալության՝ տնտեսության վարկունակությունը գնահատող վարկանիշով 2019 թ. Հայաստանը գնահատվել է B+ դրական շարժով³¹,

27. The Global Competitiveness Report 2018, World Economic Forum, <http://www3.weforum.org/docs/GCR2018/05FullReport/TheGlobalCompetitivenessReport2018.pdf>

28. World Bank Armenia Data, <https://data.worldbank.org/country/armenia>

29. Corruption Perceptions Index 2018, Transparency International, <https://www.transparency.org/cpi2018>

30. Rating Action: Moody's upgrades Armenia's rating to Ba3; changes outlook to stable from positive, Moody's Investors Service, 27 August, 2019, https://www.moody's.com/research/Moodys-upgrades-Armenias-rating-to-Ba3-changes-outlook-to-stable--PR_404870

31. Fitch Affirms Armenia at 'B+'; Outlook Positive, Fitch Ratings, 24 May, 2019, <https://www.fitchratings.com/site/pr/10076538>

6. Doing Business-ի 2019 թ. գնահատականով Հայաստանը զբաղեցրել է 41-րդ տեղը (190 երկրների շարքում)³²:

ՀՀ ձեռնարկատիրական միջավայրը և ձեռնարկատիրության տեսակները

Ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է³³:

Ձեռնարկության տնտեսվարման հիմնական սկզբունքներն ամփոփվում են չորս «ի»-երով՝ ինքնակառավարում, ինքնաֆինանսավորում, ինքնուրույնություն և ինքնաձախսահատուցում, որոնց նշանակությունը մեծ է հաջողություն գրանցելու համար:

Ձեռնարկատիրության տեսակներն առանձնանում են ըստ գործունեության բովանդակության և ընթացքի: Կախված գործունեության բովանդակությունից՝ տարբերում են արտադրական, առևտրային, ֆինանսավարկային, ապահովագրական և միջնորդային ձեռնարկատիրական գործունեություններ:

Գոյություն ունեն նաև ձեռնարկատիրական գործունեության երեք հիմնական ձևեր՝ սոցիալ-տնտեսական, կազմակերպական-տնտեսական և կազմակերպական-իրավական: Սոցիալ-տնտեսականի մեջ տարբերում են ձեռնարկատիրական գործունեության պետական, կոլեկտիվ և անհատական տեսակները: Կազմակերպական-տնտեսական ձևերը դասակարգելիս հիմք են ընդունվում ոչ միայն սեփականության ձևերը, այլև ձեռնարկատիրության կազմակերպական տեսակը: Առանձնացվում են երեք հիմնական տիպեր՝ անհատական (միանձնյա) ձեռնարկատիրություն, ընկերակցություն (գործընկերություն), կորպորացիա (բաժնետիրական ընկերություն): Ստորև ներկայացված են ՀՀ-ում առկա ձեռնարկատիրական գործունեության կազմակերպարավական ձևերը (տե՛ս գծապատկեր 7):

32. Doing Business 2019: Armenia, World Bank Group, <https://www.doingbusiness.org/content/dam/doingBusiness/country/a/armenia/ARM.pdf>

33. ՀՀ քաղաքացիական օրենսգրք, 5 մայիսի, 1998 թ., <http://www.irtek.am/views/act.aspx?aid=150008>



Գծապատկեր 7. Ձեռնարկատիրական գործունեության կազմակերպատիրական ձևերը³⁴

Միևնույն ժամանակ, ձեռնարկատիրական գործունեությանը ներհատուկ են այնպիսի բնութագրիչներ, ինչպիսիք են ճկունությունը, բազմաֆունկցիոնալությունը, նպատակաուղղվածությունը, ինքնուրույնությունը, ինչպես նաև անորոշությունը: Գործնականում կարևորագույն հիմնախնդիրներից է ձեռնարկությունների ֆինանսավորման հարցը: Որպես ֆինանսավորման աղբյուր՝ կարող ենք առանձնացնել պետական բյուջեն, սեփական միջոցները, միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հատկացումները (դրամաշնորհները կամ ցածր տոկոսադրույքներով վարկերը), նվիրատվությունները, վարկային փաթեթները և այլն:

34. Տնտեսագիտության տեսություն (ուսումնական ձեռնարկ), խմբ.՝ տ. գ. դ., պրոֆ. Գ. Ե. Կիրակոսյանի և տ. գ. թ., պրոֆ. Ի. Ե. Խլիլայանի, Եր., Տնտեսագետ, 2009, էջ 426-434, http://ijevanlib.yzu.am/wp-content/uploads/2018/06/tntes.tes_.pdf

Գործունեության արդյունավետությունը կարելի է դիտարկել շահույթի և ծախսերի հարաբերակցությամբ: Սակայն ձեռնարկատիրական գործունեության արդյունավետությունը կարելի է տեսնել նաև սպառողների պահանջների բավարարման տեսանկյունից:³⁵

Ձեռնարկատիրական գործունեության արդյունավետությունն էապես կախված է հետևյալ բաղադրիչներից.

- գործունեության ոլորտի, սպառողների ընտրությունից և նրանց պահանջների առավելագույն բավարարումից,
- արտադրական տեխնոլոգիայի ընտրությունից,
- մրցակիցների բացահայտումից (սույն սպառողների շրջանակում),
- իրացվող ապրանքների և ծառայությունների գնահատականից,
- Նոր շուկաների որոշարկումից և նվաճված շուկաների պահպանումից³⁶:

Մյուս կողմից՝ «անորոշություն» բնութագրիչի առանձնացմամբ պետք է նկարագրենք նաև ձեռնարկատիրական ռիսկը: Այն արտահայտում է անորոշության պայմաններում ձեռնարկատիրական գործունեության՝ սպասվելիք արդյունքներին հասնելու, չհասնելու կամ նպատակից շեղվելու հավանականությունը:

Կարելի է առանձնացնել ռիսկի մի քանի հիմնական տեսակներ, որոնց ձեռնարկատերերն առնչվում են իրենց գործունեության ընթացքում.

- **ձեռնարկատիրոջ ռիսկ**, որին առնչվում է յուրաքանչյուրը, ով որոշում է զբաղվել այս գործունեությամբ: Ձեռնարկատերը կամ ձեռնարկատիրությունը շրջանառության մեջ է դնում իր դրամագլուխը, և առաջանում են ռիսկեր սույն գործունեության շահութաբերության հարցում,
- **վարկատուի ռիսկ**. կա կասկած, որ վարկատուն կարող է սնանկանալ և չկատարել իր պարտավորությունները (ունի սուբյեկտիվ բնույթ),
- **դրամական միջոցի արժեզրկման ռիսկ**, որը կախված չէ տնտեսվարող սուբյեկտների կամքից ու ցանկությունից և համեմատաբար դյուրավ կանխատեսելի է,
- **արժութային ռիսկ**. պայմանավորված է արտարժույթի նկատմամբ ազգային դրամական միավորի հնարավոր արժեզրկմամբ,

35. Галенко В. П., Страхова О. А., Файбушевич С. И., Как эффективно управлять организацией?, Москва, Бератор – Пресс, 2003 г., стр. 85.

36. Баканов М. И., Мельник М. В., Шеремет А. Д., Теория экономического анализа, Москва, Финансы и статистика, 2005 г., стр. 33-34.

- **Ներդրումային ռիսկ**, որը կարող է ի հայտ գալ ինչպես սկզբնական փուլում, այնպես էլ ձեռնարկատիրոջ կողմից պարբերաբար ներդրումներ կատարելիս:³⁷

Հարկ է փաստել, որ ռիսկը գոյություն ունի միշտ, սակայն դրանից կարելի է խուսափել մասնագետի կողմից կանխավ իրականացված՝ իրավիճակի գնահատման հանգամանալից և ամբողջական գործընթացի միջոցով:

2017 թ. ՀՀ ՎԿ տվյալներով Հայաստանում տնտեսվարողների ընդհանուր քանակը կազմել է 59575 միավոր, իսկ նախորդ տարում՝ 60044: Հետևաբար 2016 թ. համեմատ այն փոքր-ինչ նվազել է:

	Ընդամենը	այդ թվում			
		գերփոքր	փոքր	միջին	խոշոր
Մշակող արդյունաբերություն	5 771	5 004	596	128	43
Շինարարություն	1 224	856	295	68	5
Մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլետների նորոգում	40 183	39 264	787	112	20
Փոխադրումներ և պահեստային տնտեսություն	1 016	775	203	28	10
Կացության և հանրային սննդի կազմակերպում	2 559	2 148	357	53	1
Տեղեկատվություն և կապ	1 636	1 351	233	42	10
Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	1 552	1 449	94	9	-

37. Ն. Հայրապետյան, Ն. Հայրապետյան, Գործարարության հիմունքներ, Երևան, Ֆինանսաբանկային քոլեջ, 2003:

Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն	3 030	2 812	191	26	1
Վարչարարական և օժանդակ գործունեություն	1 596	1 426	130	36	4
Այլ	1008	347	145	13	14
Ընդամենը	59 575	55 921	3 031	515	108

Աղյուսակ 1. Հիմնական տնտեսվարողների քանակն ըստ տնտեսական գործունեության, 2017 թ. (միավոր)

Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ:

Ինչպես երևում է վիճակագրությունից, տնտեսվարողների կեսից ավելին՝ 52 տոկոսը, կենտրոնացած է Երևանում, որին հաջորդում են Կոտայքի և Արարատի մարզերը:

ՀՀ ձեռնարկատիրական միջավայրը կարգավորող հիմնական օրենսդրությունը

Ամեն ոք իրավունք ունի զբաղվելու ձեռնարկատիրական գործունեությամբ: Այդ նպատակով քաղաքացին կարող է ստեղծել ինչպես տնտեսական ընկերություն, այնպես էլ հանդես գալ որպես անհատ ձեռնարկատեր:

Երկրում ձեռնարկատիրության զարգացման համար անհրաժեշտ է համապատասխան օրենսդրաիրավական դաշտի առկայություն և ձեռնարկատերերի իրավական պաշտպանվածություն: Ձեռնարկատիրությանն առնչվող ՀՀ հիմնական օրենքներն են՝ «Անհատ ձեռնարկատիրոջ մասին», «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» և «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին»: Ստորև ներկայացնենք այդ օրենքների հիմնական դրույթներից մի քանիսը:

Ըստ «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի՝ «Անհատ ձեռնարկատերն այն ֆիզիկական անձն է, որն իրավունք ունի, առանց իրավաբանական անձ կազմավորելու, ինքնուրույն, իր անունից և իր ռիսկով իրականացնելու գործունեություն, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ

մատուցելուց շահույթ (եկամուտ) ստանալն է»:³⁸

«Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» օրենքի համաձայն՝ ՀՀ ՓՄՁ սուբյեկտները դասակարգվում են ըստ հետևյալ տեսակների.

1. գերփոքր՝ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչև 10 մարդ, իսկ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը չեն գերազանցում 100 մլն դրամը,
2. փոքր՝ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչև 50 մարդ, իսկ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը չեն գերազանցում 500 մլն դրամը,
3. միջին՝ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչև 250 մարդ, իսկ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը չեն գերազանցում համապատասխանաբար 1500 մլն դրամը և 1000 մլն դրամը:³⁹

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքն սահմանում է, որ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ) է համարվում մեկ կամ մի քանի անձանց հիմնադրած ընկերությունը, որի կանոնադրական կապիտալը բաժանված է ընկերության կանոնադրությամբ սահմանված չափերով բաժնեմասերի:⁴⁰

Դրանից զատ, ձեռնարկությունների վերաբերյալ որոշ դրույթներ կարգավորվում են «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին», «Առևտրի

38. ՀՀ օրենքը «Անհատ ձեռնարկատիրոջ մասին», 3 ապրիլի, 2001 թ., <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=76780>

39. ՀՀ օրենքը «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին», 5 դեկտեմբերի, 2000 թ., <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=64617>

40. ՀՀ օրենքը «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին», 24 հոկտեմբերի, 2001 թ., <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=100223>

և ծառայությունների մասին» և այլ օրենքներով⁴¹:

Լշենք, որ ՀՀ ԿԿ տվյալներով Հայաստանում տնտեսվարողների կողմից արտադրված ապրանքների ու մատուցված ծառայությունների ընդհանուր շրջանառությունը 2017 թ. կազմել է 5 609 126.3 մլն դրամ (տե՛ս աղյուսակ 2):


	Ընդամենը	այդ թվում՝			
		գերփոքր	փոքր	միջին	խոշոր
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	340 374.8	7 987.4	6 750.7	5 449.6	320 187.0
Մշակող արդյունաբերություն	1 158 737.1	106 445.1	160 788.5	313 971.1	577 532.5
Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	586 131.4	14 343.5	19 287.3	85 648.7	466 851.9
Շինարարություն	335 602.7	57 000.2	101 711.8	155 704.3	21 186.4
Մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլետների նորոգում	2 347 912.1	854 477.4	529 648.6	480 016.8	483 769.3
Փոխարդյուններ և պահեստային տնտեսություն	219 378.7	35 674.7	66 528.3	22 346.2	94 829.4
Կացության և հանրային սննդի կազմակերպում	1 116 040.0	34 761.7	36 141.7	42 691.7	2 444.9
Տեղեկատվություն և կապ	222 326.3	33 174.3	41 602.1	35 646.4	111 903.5

41. Օրենքներին կարելի է ծանոթանալ ՀՀ իրավական տեղեկատվական համակարգի պաշտոնական կայքում՝ <https://www.arlis.am>

Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն	102 523.8	54 704.2	31 598.5	15 207.9	1 013.2
Այլ	1 101 833	72 833	49 318	26 825,6	3 110,1
Ընդամենը	5 609 126.3	1 271 422.4	1 043 375.8	1 183 508.3	2 110 819.7

Աղյուսակ 2. Տնտեսվարողների կողմից արտադրված ապրանքների ու մատուցված ծառայությունների ծավալը (շրջանառությունը)՝ ըստ տնտեսական գործունեության տեսակի, 2017 թ. (մլն դրամ)
Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ:

Տնտեսվարողների շրջանառության կառուցվածքն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, ինչպես Երևում է գծապատկեր 8-ից, բաշխված է անհամաչափ: Առաջատար է Երևանը, որտեղ գրանցված տնտեսվարողների շրջանառությունը կազմում է 4 046 905.8 մլն դրամ:



Գծապատկեր 8. Տնտեսվարողների շրջանառության կառուցվածքն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2017 թ.
Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ:

Միևնույն ժամանակ, ՀՀ ձեռներեցության ոլորտում նկատվում է կանանց դերի աճ: Հատկապես հարկ է առանձնացնել գյուղաբնակ կանանց նախաձեռնությունները՝ ուղղված համայնքների զարգացմանը: Կանանց ձեռներեցությունը հիմնված է առևտրի և ծառայությունների, իսկ ավելի փոքր չափով՝ արտադրության վրա: Միջազգային մի շարք կազմակերպությունների ֆինանսավորմամբ աշխատանքներ են իրականացվում

կանանց շրջանում ձեռներեցության հմտությունները զարգացնելու և նրանց նախաձեռնություններին ֆինանսապես օժանդակելու ուղղությամբ:

Առանձնահատուկ ուշադրության է արժանանում նաև սոցիալական ձեռնարկատիրության զարգացումը Հայաստանում: Սա ձեռնարկատիրության մի տեսակ է, որի հիմքում սոցիալական նպատակն է: Սոցիալական ձեռնարկատիրությունը ներառում է ինչպես ավանդական ձեռնարկատիրության սկզբունքները, այնպես էլ սոցիալական նպատակներին հասնելու միջոցները: Սոցիալական ձեռնարկություն (ՍՁ) նախաձեռնող անձինք կարող են հանդես գալ որպես կոոպերատիվ, հասարակական կազմակերպություն (ՀԿ), բարեգործական կազմակերպություն, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ), հիմնադրամ և այլն: Գործականում սոցիալական ձեռնարկատիրությամբ զբաղվում են հիմնականում ՀԿ-ները: «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ 2016 թ. օրենքն սահմանում է, որ «կազմակերպությունն իրավունք ունի իր կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան իրականացնելու ձեռնարկատիրական գործունեություն, այդ նպատակով տնօրինելու իր գույքը և գործունեության արդյունքները, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ստեղծելու առևտրային կազմակերպություն կամ դառնալու նրա մասնակից»:

Պետք է նշել, որ ՍՁ-ները գործում են նույն օրենսդրական դաշտում, ինչ ՓՄՁ-ները և հետևաբար ունեն նույն խնդիրները, սակայն հաշվի առնելով նրանց առանձնահատկությունները (բիզնես բաղադրիչի թույլ առկայություն՝ ի համեմատ սոցիալականի)՝ ՍՁ-ները ֆինանսավորման և խորհրդատվության ավելի մեծ կարիք են զգում⁴²:

ՀՀ ձեռնարկատիրությանն առնչվող հարկային համակարգը

Հայաստանում հարկային դաշտը բավական խճճված է, ինչը մի շարք խոչընդոտներ է առաջացնում սկսնակ ձեռնարկատերերի համար: Սա բացասական ազդեցություն է ունենում նաև ձեռնարկատիրական միջավայրի դինամիկ զարգացման վրա: Հայաստանում գործում է յոթ հիմնական հարկատեսակ՝ ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ), շահութահարկ, եկամտահարկ, գույքահարկ, հողահարկ, պարզեցված հարկ և ակցիզային հարկ: Պարզեցված հարկերի տարբեր ֆիքսված վճարումներ կարող են սահմանվել նաև հատուկ օրենսդրությամբ:

42. ՓՄՁ ոլորտի գնահատման հետազոտություն Հայաստանում, Հայկական բիզնես կոալիցիա, Երևան, 2018, https://ccd.armia.am/wp-content/uploads/2018/12/SME-assessment_2018_November-20.pdf

Հայաստանում ավելացված արժեքի հարկը (ԱԱՀ) գործունեության տեսակների մեծամասնության համար կազմում է 20 %:

Ակցիզային հարկը գանձվում է գարեջրի, գինու, գինու նյութերի, ակոհոլի և ակոհոլային խմիչքների, ծխախոտի փոխարինիչների, ծխախոտային ապրանքների, բենզինի, չմշակված նավթի և նավթամթերքի, դիզելային վառելիքի, նավթային գազերի և այլ գազային ածխաջրերի (բացառությամբ բնական գազի) ներմուծման կամ ՀՀ տարածքում այդ ապրանքներն արտադրողների կողմից դրանց օտարման համար:

Շահութահարկը գործունեության տեսակների մեծամասնության համար կազմում է 20 %:

ՀՀ-ում գործում է եկամտահարկի եռամակարդակ սանդղակ՝ 24.4 %, 26 % և 36 %՝ կախված եկամտի ամսական չափից:

2018 թ. Հայաստանում ՓՄՁ ոլորտի գնահատման հետազոտության արդյունքները վեր հանեցին մի շարք տվյալներ բիզնեսի զարգացմանը խոչընդոտող գործոնների վերաբերյալ: Այսպես, հարցմանը մասնակցած 523 ՓՄՁ-ների պատասխանների ամփոփման հիմամբ առանձնացվել են 16 խոչընդոտող գործոններ, որոնցից կհատկանշենք հինգը.

1. շուկայի փոքրություն, գերհագեցվածություն, գնողունակ պահանջարկի բացակայություն, ոլորտի ցածր շահութաբերություն բարձր մրցակցության պատճառով,
2. ֆինանսական ռեսուրսների դժվար հասանելիություն,
3. հարկային ծանր բեռ ՓՄՁ հատվածի համար, մասնավորապես՝
 - հարկային հաշվետվությունների վարման դժվարություններ,
 - եկամտահարկի և արձակուրդային վճարների մուծման դժվարություններ,
 - ԱԱՀ և շրջանառության հարկ վճարող ձեռնարկությունների համագործակցության դժվարություններ,
 - կադրային քաղաքականություն,
4. որակյալ կադրերի բացակայություն աշխատաշուկայում,

5. պետական ոլորտի կողմից աջակցության բացակայություն⁴³:

ՀՀ կառավարության 2019-2023 թթ. ծրագրում մեծապես կարևորվում է փոքր և միջին ձեռնարկատիրությունը Հայաստանում: Նշվում է նաև, որ համալիր քայլեր են ձեռնարկվելու ոլորտում, որոնք ուղղված կլինեն խոչընդոտների վերացմանը: Մասնավորապես խոսվում է ձեռնարկատիրական մշակույթի զարգացման, նպաստավոր օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտերի կայացման, ՓՄՁ կարողությունների զարգացման մասին: Ըստ ծրագրի՝ մինչև 24 մլն դրամ իրացման շրջանառությամբ միկրոձեռնարկություններն ազատված կլինեն շրջանառության և եկամտային հարկերից⁴⁴:



ՕԳՏԱԿԱՐ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Գործարարության հիմունքներ, Նունե Հայրապետյան, Նաիրա Հայրապետյան, Երևան, Ֆինանսաբանկային քոլեջ, 2003:
2. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգիրք, 04.10.2016, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=132329>
3. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թ. Հունվար դեկտեմբերին, ՀՀ վիճակագրական կոմիտե, էջ 13, https://www.armstat.am/file/article/sv_12_18a_121.pdf
4. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք, 05.05.1998, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=126332>
5. Հայաստանի վիճակագրական տարեգրքեր 2013–2018, ՀՀ վիճակագրական կոմիտե, <https://www.armstat.am/am/?nid=586>
6. ՀՀ կառավարության ծրագիր 2019-2023՝ ընդունված ՀՀ կառավարության N65-Ա որոշմամբ, 08.02.2019, <https://www.gov.am/files/docs/3133.pdf>

43. Նույն տեղում:

44. ՀՀ կառավարության ծրագիր 2019-2023՝ ընդունված ՀՀ կառավարության N65-Ա որոշմամբ, 08.02.2019, <https://www.gov.am/files/docs/3133.pdf>

7. ԶԶ օրենքը «Անհատ ձեռնարկատիրոջ մասին», 03.04.2001, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=76780>
8. ԶԶ օրենքը «Զբաղվածության մասին», 11.12.2013, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=118159>
9. ԶԶ օրենքը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին», 30.06.1996, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121585>
10. ԶԶ օրենքը «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին», 24.10.01, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=100223>
11. ԶԶ օրենքը «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին», 05.12.2000, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=64617>
12. ԶԶ օրենքը «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին», 17.06.2008, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121567>
13. Միջազգային տնտեսագիտություն. տեսություն և քաղաքականություն, ուսումնական ձեռնարկ, Չ. Ա. Թադևոսյան, Դ. Ռ. Գալոյան, Երևան, 2015:
14. Սոցիալական ձեռնարկատիրության զարգացման հայեցակարգի նախագիծ, 2018, https://www.e-draft.am/projects/1180/about#_Toc505349616
15. Վիճակագրական ցուցանիշներ, ԶԶ վիճակագրական կոմիտե, <https://www.armstat.am/am/?nid=12>
16. Տնտեսագիտության հիմունքներ, Թամարա Տոնոյան, Երևան, Ֆինանսաբանկային քոլեջ, 2003:
17. Տնտեսագիտության տեսություն (ուսումնական ձեռնարկ), խմբ.՝ տ.գ.դ., պրոֆ. Գ.Ե. Կիրակոսյանի և տ.գ.թ., պրոֆ. Ի.Ե. Խլղաթյանի, Երևան, Տնտեսագետ, 2009:
18. Տնտեսագիտության տեսություն (ուսումնական ձեռնարկ), Ս. Ավետիսյան, Ռ. Թովմասյան, խմբ.՝ Ի. Խլղաթյան, Երևան, Նահապետ, 2010:

19. ՓՄՁ ոլորտի գնահատման հետազոտություն ՀՀ-ում, Հայկական բիզնես կոալիցիա, Երևան, 2018, https://ccd.armia.am/wp-content/uploads/2018/12/SME-assessment_2018_November-20.pdf
20. Ֆինանսական համակարգ և վերահսկողություն, ՀՀ կենտրոնական բանկ, <https://www.cba.am/am/SitePages/fscintroduction.aspx>
21. Ֆինանսական համակարգի հաշտարարի պաշտոնական կայք, <https://fsm.am/>
22. Corruption Perceptions Index 2018, Transparency International, <https://www.transparency.org/cpi2018>
23. Doing Business 2019: Armenia, World Bank Group, <https://www.doingbusiness.org/content/dam/doingBusiness/country/a/armenia/ARM.pdf>
24. Essentials of International Economics: Questions & Answers, Yuriy Kozak, Tadeusz Sporek, 2014.
25. Fitch Affirms Armenia at 'B+'; Outlook Positive, Fitch Ratings, 24 May, 2019, <https://www.fitchratings.com/site/pr/10076538>
26. Intermediate Macroeconomics: Textbook, Julio Garin, Eric Sims, Robert Lester, 2018, https://www3.nd.edu/~esims1/gls_int_macro.pdf
27. Macroeconomics, N. Gregory Mankiw, Harvard University, 2010.
28. National Competitiveness Report of Armenia 2017, EV Consulting, Economy and Values Research Center, 2017, https://ev.am/sites/default/files/attachments/pdf/National%20Competitiveness%20Report%20of%20Armenia%202017_eng.pdf
29. Rating Action: Moody's upgrades Armenia's rating to Ba3; changes outlook to stable from positive, Moody's Investors Service, 27 August, 2019, https://www.moody's.com/research/Moodys-upgrades-Armenias-rating-to-Ba3-changes-outlook-to-stable--PR_404870
30. The Global Competitiveness Report 2018, World Economic Forum, <http://www3.weforum.org/docs/GCR2018/05FullReport/TheGlobalCompetitivenessReport2018.pdf>
31. What Is Gross Domestic Product?, Tim Callen, Finance and Development, December 2008.

32. World Bank Armenia Data, <https://data.worldbank.org/country/armenia>
33. Баканов М. И., Мельник М. В., Шеремет А. Д., Теория экономического анализа, Москва, Финансы и статистика, 2005г.
34. Галенко В. П., Страхова О. А., Файбушевич С. И., Как эффективно управлять организацией?, Москва, Бератор – Пресс, 2003 г.

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ

Սոցիալական ձեռնարկատիրության գաղափարը

Սոցիալական ձեռնարկությունների քարտեզագրման⁴⁵ գեկույցի համաձայն՝ սոցիալական ձեռնարկությունը մի կազմակերպություն է, որը կիրառում է առևտրային գործելակարգ՝ ի շահ մարդու և շրջակա միջավայրի բարելավված բարեկեցության, այլ ոչ թե արտաքին շահառուների շահույթը հնարավորինս մեծացնելու նպատակով:

«Սոցիալական ձեռնարկատիրության զարգացման հայեցակարգի»⁴⁶ համաձայն՝ կազմակերպությունը կարելի է համարել սոցիալական ձեռնարկություն, եթե այն, ի թիվս այլ կետերի, հիմքում սահմանել է որևէ սոցիալական խնդրի լուծում և կիրառում է «սոցիալական խնդիր – բիզնես մոդել – բիզնես լուծում – սոցիալական դրական տրանսֆորմացիա» մոտեցումը՝ չխախտելով կանաչ մտածողության սկզբունքը, և/կամ ստեղծվել է բացառապես սոցիալապես խոցելի խավի աշխատանքային ինտեգրումն ապահովելու

45. Սոցիալական ձեռնարկությունների քարտեզագրում, «Աջակցություն Հայաստանում ժողովրդավար կառավարմանը» ծրագիր (Բրիտանական խորհուրդ), 2015, http://hkdepo.am/up/docs/Social Enterprise Mapping_BC.pdf

46. Սոցիալական ձեռնարկատիրության զարգացման հայեցակարգ, Նախագիծ, Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, <https://drive.google.com/file/d/0Bwf5a-uYsW4oeXEzZzRuXy1lVTZvMTJFb2RRdW1JMVRuWU9n/view?usp=sharing>

Նպատակով, ինչպես նաև՝ եթե աշխատողների առնվազն 40%-ը, բայց 4 հոգուց ոչ պակաս, հաշմանդամություն ունեցող մարդիկ են: Բացի դրանից՝ սոցիալական ձեռնարկությունը շահույթի առնվազն 50%-ը պետք է ներդնի կազմակերպության զարգացման կամ կանոնադրությամբ սահմանված սոցիալական ազդեցության ապահովման ուղղությամբ:

Ըստ հայեցակարգի՝ սոցիալական ազդեցության գնահատումը ներառում է, բայց և չի սահմանափակվում հետևյալ ոլորտներով.

- մարդկանց կենսակերպը. ինչպես են մարդիկ ապրում, աշխատում, հանգստանում և հաղորդակցվում միմյանց հետ.
- մարդկանց մշակույթը. համոզմունքները, սովորույթները, արժեքները և լեզուն.
- համայնքը. կայունությունը, ծառայությունները և ենթակառուցվածքները.
- որոշումների ընդունումը. որքանով են մարդիկ իրավունակ մասնակցելու այն որոշումների ընդունմանը, որոնք ազդում են իրենց կյանքի վրա.
- շրջակա միջավայրը. օդի և ջրի որակը, սննդի հասանելիությունը և որակը, վտանգների և աղետների ռիսկի մակարդակը, սանիտարական վիճակի համապատասխանությունը, ֆիզիկական անվտանգությունը, ռեսուրսների հասանելիությունը և դրանց նկատմամբ վերահսկողությունը.
- առողջությունը և բարեկեցությունը. առողջությունը ներկայացվում է որպես համալիր ֆիզիկական, մտավոր, սոցիալական և հոգևոր բարեկեցություն, այլ ոչ միայն որպես հիվանդությունների բացակայություն:

Միաժամանակ անհրաժեշտ է նաև տարանջատել և սահմանել կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը՝ որպես իրականացվող սոցիալական ազդեցությամբ միջոցառում:

Ինչ է սոցիալական ազդեցությունը⁴⁷

Սոցիալական գնահատման ուղեցույցների և սկզբունքների միջկազմակերպական կոմիտեն սոցիալական ազդեցությունը սահմանում է որպես «պետական կամ մասնավոր ցանկացած գործողությունների հետևանք

47. Այս բաժնի տեքստը վերցված է հետևյալ փաստաթղթից՝ Սոցիալական ազդեցություններ և տեղական օգուտներ: ՇՄԱԿԳ աշխատանքային խմբի առաջարկություններ, 2013, <https://www.energi.no/docman/international/279-esia-wg-report-b-social-impacts-and-local-benefist-arm/file>

բնակչության համար, որն ազդում է մարդկանց ապրելակերպի, աշխատանքի, զվարճանքների, միմյանց հետ հարաբերակցվելու, իրենց կարիքները բավարարելու ձևերի և, ընդհանրապես, նրա վրա, թե ինչպես են մարդիկ գործում որպես հասարակության անդամներ»:

Սոցիալական ազդեցությունը զարգացման միջոցառումների ազդեցությունն է մարդկանց վրա: Սոցիալական ազդեցության գնահատման ուշադրության կենտրոնում մարդն է: Այն ձգտում է որոշել՝ ովքեր շահեցին և ովքեր վնաս կրեցին: Ազդեցության գնահատումն օգնում է հավաստիանալ, որ համայնքի տարբեր խմբերի և մարդկանց ծայնն ու կարիքները հաշվի են առնվում: Նշանակալից սոցիալական ազդեցություն ունեցող ծրագրերի օրինակներ են աղբավայրերը և վտանգավոր թափոնների հեռացման վայրերը (գիտակցված առողջապահական ռիսկեր, հարմարությունների կորուստ), էլեկտրակայանները և արդյունաբերական գործարանները (հոգեբանական ճնշում համայնքի վրա աշխատուժի ներհոսքի պատճառով, ճնշում ենթակառուցվածքների վրա), պատվարները և ջրամբարները (ապրելակերպի խախտում՝ վերաբնակեցման պատճառով, հողօգտագործման փոփոխություն, կամ երկար ժամանակ է պահանջվում ջրամբարը լցնելու համար), ճանապարհների և գծային կոմունիկացիաների զարգացումը (գործունեության ցանցերի ու փոխհարաբերությունների տեղափոխություն):

Սոցիալական ազդեցության հիմնական ձևերը կարող են խմբավորվել հինգ՝ մասամբ համընկնող կատեգորիաներում.

- **Ազդեցություն ապրելակերպի վրա.** ինչպես են մարդիկ ամեն օր պահում իրենց, վերաբերվում իրենց ընտանիքին, ընկերներին կոլեկտիվին:
- **Մշակութային ազդեցություն.** մարդկանց ընդհանուր սովորույթները, պարտավորությունները, արժեքները, լեզուն, կրոնը և այլ տարրեր, որոնցով առանձնանում է սոցիալական կամ էթնիկական խումբը:
- **Ազդեցություն համայնքի վրա.** ենթակառուցվածքներ, ծառայություններ, կամավորական կազմակերպություններ, ցանցային գործունեություն և համախմբվածություն:
- **Ազդեցություն կյանքի որակի վրա.** տեղի, գեղագիտության, ժառանգության իմաստով, պատկանելության ընկալում, ապահովություն և կենսունակություն, ձգտումներ ապագայի նկատմամբ:
- **Ազդեցություն առողջության վրա.** հոգեկան, ֆիզիկական և սոցիալական բարեկեցություն, չնայած որ սրանք ենթակա են նաև առողջության ազդեցությունների գնահատմանը:

Սոցիալական ազդեցության չափումը սոցիալական ձեռնարկության կողմից

«Սեյվ դը չիլդրեն ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչությունը առաջարկել է ձեռնարկության սոցիալական ազդեցությունը գնահատել հետևյալ քայլերի միջոցով⁴⁸.

1. Սկսել ձեռնարկության առաքելության ձևակերպումից:
2. Ձեռնարկության առաքելությունը վերածել շոշափելի արտադրանքի և արդյունքների:
3. Ձեռնարկության գործունեությունը կապակցել նրա արտադրանքին և արդյունքներին:
4. Սահմանել ձեռնարկության ազդեցության շղթան և նրա համապատասխան ցուցանիշները:

Ըստ սոցիալական ազդեցության չափման վերաբերյալ Եվրոպական տնտեսական և սոցիալական հանձնաժողովի կարծիքի⁴⁹, սոցիալական ազդեցության չափումը ձեռնտու է հասարակության բոլոր ոլորտներին: Սոցիալական դրական ազդեցության հասնելը սոցիալական ձեռնարկության հիմնական նպատակն է և հաճախ ձեռնարկության գործունեության շարունակական և անբաժանելի մասը: Կարևոր է սոցիալական արդյունքներն առանձնացնել բիզնեսի արդյունքներից, այսինքն՝ հենց սոցիալական ազդեցությունն է, որ պետք է չափվի, ոչ թե կազմակերպության օգուտը:

Սոցիալական ազդեցության գնահատումը դժվար է, քանի որ գործունեության և արդյունքի միջև կապերը դժվար է ցույց տալ: Դրական հետևանքները հաճախ որակական բնույթ ունեն և երբեմն ակնհայտ են դառնում միայն ավելի երկար ժամկետներում: Որևէ գործողություն թվային շրջանակով սահմանափակելը մեծ ռիսկ է պարունակում, որ ստացված տեղեկատվությունը կարող է չչափել կամ ճիշտ չափել նախատեսված արդյունքը:

Սոցիալական ազդեցությունը չափվում է շատ տարբեր եղանակներով, ինչը

48. Սոցիալական ձեռնարկատիրություն: Աշխարհը վերափոխող ձեռնարկությունների ստեղծման և զարգացման ձեռնարկ, «Սեյվ դը չիլդրեն ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչություն, 2016, [https://armenia.savethechildren.net/sites/armenia.savethechildren.net/files/library/Arm final print.pdf](https://armenia.savethechildren.net/sites/armenia.savethechildren.net/files/library/Arm%20final%20print.pdf)

49. Opinion of the European Economic and Social Committee on social impact measurement, Official Journal of the European Union 5.6.2014, <http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:52013IE6135&from=EN>

դժվարացնում է մեկ մեթոդի ընտրությունը կամ նույնիսկ տարբեր մեթոդների համադրումը: Սոցիալական ազդեցությունը չափելու ամենատարածված մեթոդներն են՝

- **Ներդրումների սոցիալական վերադարձի մոտեցում (SROI):** Սա արդյունքի վրա հիմնված հայեցակարգ է, որի նպատակն է ցույց տալ կազմակերպության կողմից սոցիալական, բնապահպանական և տնտեսական արժեքների ստեղծումը:
- **Սոցիալական հաշվապահություն.** կազմակերպության սոցիալական նպատակների պլանավորման, չափման և գնահատման մեթոդը:

Սոցիալական հավելյալ արժեքի բացահայտման ավելի ընդհանուր մեթոդի օրինակ է «Հաշվետվողականության գլոբալ ինդեքսը» (GRI): Դա կայունության մասին հաշվետվության համակարգ է, որն ապահովում է սոցիալական, բնապահպանական և տնտեսական հաշվետվությունների շրջանակ: Տարբեր մեթոդները միավորում է այն, որ դրանք նախագծված են հենց սոցիալական ձեռնարկության գործունեության նպատակի տեսանկյունից, այլ ոչ թե այլ ոլորտների մոդելների հիման վրա: Տարբեր ժամանակահատվածների երկու կետի միջև ընկած արդյունքը չափելու փոխարեն այս մոտեցումները հաճախ ներառում են ավելի լայն ոչ գծային գործընթաց, ինչպիսին է «փոփոխության տեսությունը», որը, պարզ բառերով ասած, ներառում է սահմանում, քանակականացում և հետևում: Նման մոտեցումների կիրառման դեպքում չափման գործընթացն ինքնին արդեն իսկ ներառված է ձեռնարկության բիզնես պլանավորման մեջ և դառնում է ներքին կատարելագործման կարևոր գործիք:



ՕԳՏԱԿԱՐ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Բիզնեսից մինչև սոցիալական ձեռնարկատիրություն. Գևորգ Տեր-Գաբրիելյան, 27 օգոստոսի 2018 թ., Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, <https://www.youtube.com/watch?v=6Nz5Tn6LnK4>
2. Ինչպե՞ս իրականացնել սոցիալական ձեռնարկատիրություն: Մեթոդական ուղեցույց, Զաղաքացիական զարգացման և համագործակցության հիմնադրամ, https://hkdepo.am/up/docs/CSO%20DePo_How%20to%20do%20social%20entrepreneurship%20by%20CDPF_2019.pdf

3. Սոցիալական ազդեցություններ և տեղական օգուտներ: ՇՄՍԱԳ աշխատանքային խմբի առաջարկություններ, 2013, <https://www.energi.no/docman/international/279-esia-wg-report-b-social-impacts-and-local-benefist-arm/file>
4. Սոցիալական ձեռնակատիրության զարգացման հայեցակարգ, Նախագիծ, Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, https://www.e-draft.am/projects/1180/about#_Toc505349617
5. Սոցիալական ձեռնարկատիրություն: Աշխարհը վերափոխող ձեռնարկությունների ստեղծման և զարգացման ձեռնարկ, «Սեյվ դը չիլդրեն ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչություն, 2016, [https://armenia.savethechildren.net/sites/armenia.savethechildren.net/files/library/Arm final print.pdf](https://armenia.savethechildren.net/sites/armenia.savethechildren.net/files/library/Arm%20final%20print.pdf)
6. Սոցիալական ձեռնարկությունների քարտեզագրում, «Աջակցություն Հայաստանում ժողովրդավար կառավարմանը» ծրագիր (Բրիտանական խորհուրդ), 2015, [http://hkdepo.am/up/docs/Social Enterprise Mapping_BC.pdf](http://hkdepo.am/up/docs/Social%20Enterprise%20Mapping_BC.pdf)
7. 7 Steps to Effective Impact Measurement, InFocus Enterprises, December 2016, [https://www.undp.org/content/dam/ukraine/docs/DG/socinnov/7%20Steps%20to%20Effective%20Impact%20Measurement_v3_13.12.16%20\(1\).pdf](https://www.undp.org/content/dam/ukraine/docs/DG/socinnov/7%20Steps%20to%20Effective%20Impact%20Measurement_v3_13.12.16%20(1).pdf)
8. A Guide to Measuring Social Impact, Bev Meldrum, Pete Read and Colin Harrison, <https://www.learningandwork.org.uk/wp-content/uploads/2017/01/A-guide-to-Measuring-Social-Impact-v2.pdf>
9. Opinion of the European Economic and Social Committee on social impact measurement, Official Journal of the European Union 5.6.2014, <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:52013IE6135&from=EN>
10. What is Social Accounting and Audit, Social Audit Network, <http://www.socialauditnetwork.org.uk/getting-started/what-is-social-accounting-and-audit/>

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Արթուր Գրիգորյան

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախարարություն՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն

Տեսչական մարմին՝ ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին

ՇՄԱԳ օրենք՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք

Օրհուսի կոնվենցիա՝ «Շրջակա միջավայրի հարցերում տեղեկատվության մատչելիության, որոշումների կայացման գործընթացում հասարակության մասնակցության և բնապահպանական հարցերում արդարադատության մատչելիության վերաբերյալ» ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնա-
ժողովի կոնվենցիա

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նյութի նպատակն է հանրամատչելի ներկայացնել բնապահպանական

կառավարման ոլորտը կարգավորող իրավական դաշտը և պետական մարմինների իրավասությունները: Նկարագրվել են ոլորտը կանոնակարգող օրենսդրությունը, ոլորտում գործող պետական մարմինների միջև *փոխհարաբերությունները*, ինչպես նաև օրենսդրական այն բացերն ու թերությունները, որոնք պրակտիկայում խնդիրներ են առաջացնում բնապահպանական վերահսկողություն իրականացնելիս և ենթակա են վերանայման: Ներկայացվել են նաև այնպիսի խնդիրներ, որոնց լուծումը պահանջում է հետագա ուսումնասիրություններ և հետազոտական աշխատանք, որը կարող են իրականացնել բնապահպանական կառավարման խնդիրներով շահագրգռված հասարակական միավորումներն ու անկախ հետազոտողները:

Բնապահպանական օրենսդրությունը

Բնապահպանական կառավարման ոլորտը կանոնակարգող օրենսդրությունը շատ բազմազան է և ներառում է տարբեր իրավական ակտերի հսկայական փաթեթ՝ միջազգային պայմանագրերից մինչև գերատեսչական նորմատիվային ակտեր: Ներկայացնենք այն հիմնական իրավական ակտերը, որոնք կարևոր են մարդկանց կյուրթական և ընթացակարգային իրավունքների պահպանության հարցում: Դրանք են՝

- Հայաստանի Հանրապետության (ՀՀ) Սահմանադրությունը
- Հայաստանի մասնակցությամբ միջազգային պայմանագրերը
- Օրենսգրքերն ու օրենքները
- Կառավարության և այլ գերատեսչությունների ընդունած նորմատիվ ակտերը

Իրավաբանության մեջ իրավունքը բաժանվում է երկու մեծ խմբի՝ կյուրթական և ընթացակարգային իրավունքների: Ընթացակարգային է, օրինակ, որոշումների ընդունմանը հանրության մասնակցության իրավունքը, որն ամրագրված է Հայաստանի մասնակցությամբ միջազգային պայմանագրով՝ Օրիհուսի կոնվենցիայով: Կյուրթական իրավունքի օրինակներ են առողջության կամ սեփականության իրավունքները, որոնք չափազանց խոցելի են հանքարդյունաբերության, քիմիական կյուրթերի արտադրության կամ արդյունաբերության այնպիսի տեսակների դեպքում, որոնք առաջացնում են վտանգավոր թափոններ և արտանետումներ:

Մարդու հիմնարար իրավունքներից մեկը իր առողջությանը և բարեկե-

ցությանը նպաստող շրջակա միջավայրում ապրելու իրավունքն է, որն ամրագրված է միջազգային համաձայնագրերում: ՀՀ սահմանադրության 12-րդ հոդվածը ամրագրում է. «Պետությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին»⁵⁰: ՀՀ սահմանադրությունը, դրա մաս կազմող՝ Հայաստանի անկախության հռչակագիրը ամրագրում են նաև քաղաքացիների իրավունքը երկրի բնական պաշարների օգտագործման հարցում: Անկախության հռչակագրի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության ազգային հարստությունը՝ հողը, ընդերքը, օդային տարածությունը, ջրային և այլ բնական պաշարները, տնտեսական, մտավոր, մշակութային կարողությունները, նրա ժողովրդի սեփականությունն է»⁵¹:

Հարկ է նշել նաև, որ մինչև 2015 թ. ընդունված սահմանադրական փոփոխությունները ՀՀ սահմանադրությամբ ամրագրված էր, որ մարդիկ ունեն իրենց առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում ապրելու իրավունք: Սրանից հետևում էր, որ պետությունը պարտավոր է ապահովել այդ իրավունքի իրականացումը: 2015 թ. սահմանադրական փոփոխություններով այդ դրույթը վերանայվեց, և պետությունը պարտավորվեց ընդամենը «խթանել» շրջակա միջավայրի պահպանությունն ու բարելավումը: Իրականում սա սկզբունքային վատթարացնող փոփոխություն էր, քանի որ պետությունը հրաժարվում է պատասխանատվությունից այն դեպքում, եթե կառավարության ոչ խոհեմ որոշումները վնաս պատճառեն մարդկանց գույքին կամ առողջությանը:

Հայաստանի բնական պաշարները շահագործման են տրվում կառավարության կողմից, որը պարտավոր է այդ ընթացքում ապահովել Հայաստանի քաղաքացիների՝ վերը նշված իրավունքները: Այսինքն՝ հանքավայրերը, ջրային պաշարները, անտառները և այլ բնական պաշարները շահագործելու վերաբերյալ որոշումներ ընդունելիս պետական մարմինները պարտավոր են ապահովել, որ մարդիկ դրա հետևանքով անհամաչափ վնասներ

50. ՀՀ Սահմանադրություն, հոդված 12, <http://parliament.am/parliament.php?id=constitution&lang=arm#1>

51. Հռչակագիր Հայաստանի անկախության մասին, հոդված 7, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=1895>

չկրեն՝ թունավոր թափոններով չաղտոտվի նրանց շրջակա միջավայրը, չվնասվի մարդկանց առողջությունը կամ սեփականությունը: Մինևույն ժամանակ, անհրաժեշտ է քաղաքացիներին մասնակից դարձնել էական բնապահպանական խնդիրներ առաջացնող նախագծերի քննարկման գործընթացին:

Այսպիսով, գոյություն ունեն բնապահպանական հարցերում մարդկանց նյութական և ընթացակարգային իրավունքներ: Դրանք կարգավորված են Սահմանադրությամբ, Հայաստանի մասնակցությամբ միջազգային պայմանագրերով և ներպետական օրենսդրությամբ: Պետությունը պարտավոր է ապահովել այդ իրավունքների պատշաճ իրականացումը բնապահպանական կառավարման ոլորտում գործող մարմինների միջոցով:

Բնապահպանական կառավարման և վերահսկողության ոլորտը կարգավորող օրենսդրությունը չափազանց բազմազան է: Ստորև ներկայացված են որոշ միջազգային և ազգային իրավական ակտեր, որտեղ գերազանցապես ամփոփված են բնապահպանական կառավարման հարցերը:

«Շրջակա միջավայրի հարցերում տեղեկատվության մատչելիության, որոշումների կայացման գործընթացում հասարակության մասնակցության և բնապահպանական հարցերում արդարադատության մատչելիության վերաբերյալ» ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի կոնվենցիա (Օրիուսի կոնվենցիա)

- Կոնվենցիա կենսաբանական բազմազանության մասին
- Շրջանակային կոնվենցիա կլիմայի փոփոխության մասին
- ՀՀ ջրային օրենսգիրք
- ՀՀ հողային օրենսգիրք
- ՀՀ ընդերքի մասին օրենսգիրք
- ՀՀ անտառային օրենսգիրք
- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք
- «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք
- «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք
- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք

- «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք
- «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք
- «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք
- ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից ստուգում իրականացնելիս կիրառվող և ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված ստուգաթերթեր:

Ընթացակարգային իրավունքներ

Ըստ Օրհուսի կոնվենցիայի և այլ իրավական ակտերի՝ հանրությանը տրված է իրավունք՝ մասնակցելու բնապահպանական առումով վտանգավոր արդյունաբերական նախագծերի հարցում որոշումների ընդունմանը: Այս իրավունքը Հայաստանում իրացվում է բացառապես հանրային քննարկումներին մասնակցելու և կարծիք արտահայտելու կամ առաջարկություններ ներկայացնելու միջոցով: Այսինքն՝ հանրության մասնակցությունն ունի զուտ խորհրդատվական բնույթ: Վերջնական որոշումն ընդունում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կազմում գործող «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ը: Գործնականում հանրության արտահայտած կարծիքը հաճախ կարող է հաշվի չառնվել պետական մարմինների կողմից որոշում ընդունելիս: Թերևս դա է պատճառը, որ շատ համայնքների բնակիչներ պարզապես թույլ չեն տալիս համայնքում հանրային քննարկում անցկացնել, որպեսզի հնարավոր չլինի ապահովել ընթացակարգային իրավունքի մասը (տե՛ս Վազաշեն, Արդվի գյուղերի, Կապան քաղաքի օրինակները)⁵²:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը թույլտվության տրամադրման գործընթացին մասնակցում է միայն բնապահպանական մասով: Բնական պաշարների շահագործման հարցերով իրականացված հետազոտություններում պարզորոշ ներկայացված է թույլտվության տրամադրման ամբողջական գործընթացը, որտեղ երևում է պետական այլ գերատեսչությունների դերակատարումը (տե՛ս Պատկեր 1-ը):

52. «Վազաշենում հանքի մասին լուումները չեն կայացել. գյուղապետը հրաժարվում է արձանագրել այդ փաստը», Հայկական ժամանակ, 27.02.2019, <https://armtimes.com/hy/article/155593>, «Արդվիցիները դեմ են հանքի շահագործմանը», Երկիր Մեդիա, 14.09.2017, <http://yerkirmedia.am/social/ardvi-hanq-shahagorcum/>

Նյութական իրավունքներ

Ինչպես նշվեց, բնապահպանական կառավարման գործընթացում կարող են շոշափվել նաև մարդկանց նյութական իրավունքները: Օրինակ, հանքարդյունաբերական թափոնների արտադրությունը կարող է անհամատեղելի լինել հարակից շրջաններում իրականացվող խաղողագործության և գինեգործության, առողջարանային տուրիզմի, օրգանական գյուղատնտեսության համար: Այսինքն՝ բիզնեսի այն տեսակների համար, որոնց դեպքում անհրաժեշտ է մաքուր շրջակա միջավայր, չաղտոտված ջրեր և հող: Հանրային առողջության⁵³ ապահովումը ևս կառավարության պարտավորություններից է, որի համար պահանջվում է սահմանափակել աղմուկի, փոշու, վնասակար նյութերի արտահոսքն ու արտանետումը բնակավայրերին մոտ գտնվող միջավայրում: Նյութական իրավունքների մաս է կազմում նաև այն մշակութային արժեքների պահպանությունը, որոնք հանքարդյունաբերության ընթացքում կարող են վնասվել կամ ոչնչացվել:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀՀ սահմանադրությամբ և օրենքներով սահմանազատված են պետական կառավարման մարմինների լիազորությունները: Բնապահպանական կառավարման համար պատասխանատու մարմինները ևս ունեն լիազորությունների որոշակի շրջանակ, որոնք կառուցված են միմյանց փոխլրացնելու տրամաբանության վրա: Բնապահպանական ոլորտը կառավարող հիմնական երկու պետական մարմիններն են ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը և ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը:

Մասնավորապես, ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը քաղաքական մարմին է, որը մշակում է բնապահպանության ոլորտում համալիր պետական քաղաքականությունը: Նախարարության լիազորությունները այս ոլորտում շատ լայն են՝ ամրագրված ընթացիկ օրենսդրությամբ և նախարարության կանոնադրությամբ⁵⁴: Ի թիվս բազմաթիվ այլ հարցերի, նախարարության գործառույթներից են՝

- ոլորտի օրենսդրության մշակումը.
- բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարումը և պահպանումը.
- անտառների և այլ բնական միջավայրերի կառավարումը և պահպանումը.

53. «Իրավիճակը Հայաստանի Ախթալա քաղաքում. Հանքարդյունաբերության բնապահպանական և առողջապահական հետևանքները», Ռուզաննա Գրիգորյան, ՀԱՀ, 2015 թ., <http://environment.cenn.org/app/uploads/2016/10/Armenian.pdf>

54. ՀՀ շրջակա միջավայրի նախարարության պաշտոական կայք, <http://mnp.am/>

- շրջակա միջավայրի մոնիթորինգի իրականացումը.
- ջրօգտագործման, արտանետումների, որսի և այլ թույլտվությունների տրամադրումը.
- թափոնների կառավարումը.
- շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության իրականացումը (ՇՄԱԳ փորձաքննություն):

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության հետ մեկտեղ բնապահպանական կառավարման համակարգի մյուս առանցքային դերակատարը ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինն է: Եթե նախարարության գործառույթների մեջ է մտնում ոլորտի ընդհանուր կառավարումն ու հսկողությունը, ապա տեսչությունն իրականացնում է բնապահպանական վերահսկողություն, այդ թվում՝ նախարարության առանձին գերատեսչությունների նկատմամբ: Օրինակ, եթե նախարարությունը «Հայաստան» ՊՈԱԿ-ի միջոցով պարտավոր է կառավարել և հսկել անտառների կայունությունը, ապա տեսչական մարմինը նույն «Հայաստան» ՊՈԱԿ-ում պարբերաբար ստուգումներ իրականացնելու միջոցով վերահսկում է, որ նշված մարմինն իր գործառույթներն իրականացնի պատշաճ կերպով: Այս եղանակով վերահսկողություն է իրականացվում նաև նախարարության այլ ստորաբաժանումների՝ արգելոցների, արգելավայրերի և ազգային պարկերի նկատմամբ:

Բացի նախարարության կառուցվածքային մարմիններից, տեսչական մարմինը պարբերաբար ստուգումներ է իրականացնում նաև այն տնտեսվարողների մոտ, որոնց գործունեությունը էական ազդեցություն ունի շրջակա միջավայրի վրա: Դրանցից են արդյունաբերության այն տեսակները, որոնք արտադրում են թափոններ կամ արտանետումներ, ինչպես նաև հանքային, ջրային և այլ բնական պաշարներ օգտագործող տնտեսվարողները՝ հանքարդյունաբերություն, ձկնաբուծություն և այլն:

Նախարարության և տեսչության գործառույթների տարանջատումը

Բնապահպանական ոլորտի կառավարման, ոլորտային քաղաքականության մշակման և իրականացման, ինչպես նաև դրա արդյունավետության նկատմամբ հսկողություն իրականացնելու համար հիմնական պատասխանատուն է կառավարության մաս կազմող՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը: Նախարարությունը քաղաքական մարմին է, ինչը շատ կարևոր է հատուկ ընդգծել, քանի որ նախարարությունից գատ

կան ոլորտը կառավարող այլ մարմիններ ևս, որոնք ունեն առնչակից լիազորություններ և հանդիսանում են ինքնուրույն վարչական մարմիններ: Այդպիսի վարչական մարմին է կառավարության ենթակայության տակ գտնվող՝ ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը⁵⁵ (այսուհետ՝ տեսչություն), որը նախքան տեսչական բարեփոխումները կազմված է եղել առանձին երկու մարմիններից՝ ՀՀ բնապահպանական տեսչությունից և ՀՀ ընդերքի տեսչությունից, որոնք գտնվել են, համապատասխանաբար, ՀՀ բնապահպանության նախարարության և ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության կազմում: Ի տարբերություն քաղաքական մարմնի՝ վարչական մարմինը չունի քաղաքականություն մշակելու իրավազորություն և պարտավոր է առաջնորդվել բացառապես օրենսդրությամբ: Վարչական մարմնի՝ օրենսդրությամբ առաջնորդվելու հանգամանքը կարևոր է նաև այն պատճառով, որ պրակտիկայում կարող են լինել բազմաթիվ անհամաձայնություններ նախարարության՝ որպես քաղաքական մարմնի և տեսչության՝ որպես վարչական մարմնի լիազորությունների տարանջատման հարցում:


Դեռևս տարիներ առաջ սկսված՝ տեսչական բարեփոխումների գործընթացի արդյունքում քաղաքական մարմինների՝ նախարարությունների մաս կազմող տեսչություններն առանձնացվեցին և 2018 թ. հունիսից սկսած հաստատվեցին որպես կառավարության ենթակա՝ ոլորտային վերահսկողություն իրականացնող մարմիններ: Դրանով առանձնացվեցին վեց տեսչական մարմիններ՝ բնապահպանության և ընդերքի, առողջապահության, շուկայի վերահսկողության, քաղաքաշինության, սննդի անվտանգության և կրթության ոլորտներում վերահսկողություն իրականացնելու համար: Բարեփոխումների հիմնական նպատակն այն էր, որ տեսչական մարմինները դուրս բերվեն քաղաքական մարմնի՝ նախարարության կազմից, որպեսզի տեսչական վերահսկողություն իրականացնելիս բացառվի շահերի բախումը, և նվազեցվեն կոռուպցիոն ռիսկերը, քանի որ ստացվում էր, որ նույն նախարարի պատասխանատվության տակ գտնվող մարմնում պետք է ստուգում աներ այդ նույն նախարարության մեկ այլ մարմին:

Տեսչության առանձնացումը, սակայն, իր հետ բերեց բազմաթիվ այլ ինդիկներ, քանի որ երկար տարիներ ամբողջ ինստիտուցիոնալ համակարգն ու օրենսդրությունը կառուցված էին այն տրամաբանության մեջ,

55. ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ժամանակավոր կայքէջը <http://mnp.am/am/pages/173>

որ տեսչությունը գտնվում է նախարարության կազմում: Տեսչության և նախարարության հարաբերությունները կանոնակարգող օրենսդրությունը դեռևս հարմարեցված չէ նոր իրողությունների հետ, ինչը աշխատանքային պրակտիկայում բերում է լուրջ հակասությունների ու միջգերատեսչական լարվածության: Դա նաև կարող է իրավական վեճի հիմք հանդիսանալ այլ տնտեսվարողների համար, որոնց գործունեությունը պայմանավորված է բնապահպանության նախարարության կողմից տրամադրվելիք այս կամ այն թույլտվության հետ: Օրինակ, տեսչությունը չի կարող ստուգման արդյունքում ուժը կորցրած կամ անվավեր ճանաչել նախարարության կողմից տրված ջրօգտագործման թույլտվությունը կամ փորձաքննական եզրակացությունը. դրա համար տեսչության ղեկավարը պետք է միջնորդագրով առաջարկություն անի նախարարին (նախարարության և տեսչական մարմնի փոխհարաբերությունների սխեմատիկ կառուցվածքը⁵⁶ տես Պատկեր 1-ում):

56. Պատկերը կառուցվել է հիմնվելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում, «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում, «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքում, «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքում, «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 19 նոյեմբերի 2014 թ. N 1325-Ն որոշման, «Փորձաքննական եզրակացությունն ուժը կորցրած ճանաչելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 22 ապրիլի 2015 թ. N 428-Ն որոշման, «Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի 11 հունիսի 2018 թ. N 733-Լ որոշման, «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թ. դեկտեմբերի 20-ի N 1680-Ն և 2013 թ. մարտի 7-ի 519-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 19 հոկտեմբերի 2017 թ. N 1343-Ն որոշման և այլ իրավական ակտերի բովանդակության վրա:



Պատկեր 1. ՀՀ շրջակա միջավայրի նախարարության և ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի փոխհարաբերակցությունը բնապահպանական վերահսկողության գործընթացում

Այնուհանդերձ, տեսչական բարեփոխումների գործընթացը դեռևս չի ավարտվել: Կան որոշակի բացեր, որոնք այս երկու մարմինների միջև առաջացնում են հակասություններ լիազորությունների շրջանակը մեկնաբանելիս: Դրանք գերազանցապես օրենսդրական բացեր են, որոնք պետք է լրացվեն ինչպես կառավարության որոշումների մակարդակով, այնպես էլ օրենսդրական փոփոխությունների միջոցով:

Այսպիսով, ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը քաղաքական մարմին է և մաս է կազմում ՀՀ կառավարության: Նախարարության իրավասությունների մեջ են մտնում բնապահպանական կառավարման հարցերի ամենալայն շրջանակը՝ ոլորտի քաղաքականության մշակումից մինչև բնության հիմնական բաղադրիչների՝ մթնոլորտային օդի, ջրերի, հողերի, ընդերքի, անտառների, բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարումը, դրանց նկատմամբ հսկողությունը և մոնիթորինգը, դրանց օգտագործման թույլտվությունների տրամադրումը: ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը վարչական

մարմին է, վերջինս չի առաջնորդվում կառավարության քաղաքական որոշումներով և իր գործունեությունն իրականացնում է հիմնվելով բացառապես իր գործառույթները կարգավորող օրենսդրության պահանջների վրա: Տեսչական մարմնի գործառույթներն են՝ վերահսկել, որ նախարարության կառուցվածքային ստորաբաժանումներն իրենց պարտականությունները կատարեն պատշաճ որակով, իսկ տնտեսվարողներն իրենց գործունեությունն իրականացնեն բնապահպանական օրենսդրության և իրենց տրված թույլտվության պայմաններին համապատասխան: Տեսչական մարմինն այս գործառույթներն իրականացնում է պարբերաբար իրականացվող տեսչական ստուգումների միջոցով:

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԸ. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՅԱՏՈՒՄ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ


Հանրության շրջանում և մամուլում հաճախ են հանդիպում ՇՄԱԳ թույլտվությունների տրամադրման կամ տեսչական ստուգման վերաբերյալ թյուր մեկնաբանություններ, որոնք այդ գործընթացը լիարժեքորեն չպատկերացնելու հետևանք են: Այս բաժնում ներկայացնենք թույլտվությունների տրամադրման գործընթացը, ինչպես նաև նախարարության և տեսչական մարմնի դերակատարումն այդ գործընթացում:

Ինչպես նշվեց, բնության վրա էական ազդեցություն ունեցող տնտեսական գործունեություն իրականացնելու համար պետք է ստանալ առանձին թույլտվություն: Գործունեության այդ տեսակների սպառիչ ցանկը սահմանված է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով: Գործընթացը ներկայացնելու համար վերցնենք հանքարդյունաբերության օրինակը և քայլ առ քայլ ցույց տանք, թե ինչ փուլերով է անցնում արդյունաբերական նախագիծը մինչև բնապահպանական մասով թույլտվություն ստանալը (տե՛ս պատկեր 2-ը):

Որևէ հանքավայրի շահագործման թույլտվություն ստանալու համար ընկերությունը նախ պետք է մշակի նախագիծ: Նախագիծը ծավալուն փաստաթուղթ է, որտեղ նշված են տեխնիկական բնութագրեր, տնտեսական հաշվարկներ, և օրենսդրությամբ պահանջվող այլ տեղեկություններ: Գործունեության

այն տեսակների դեպքում, որոնց իրականացման համար պետք է ստանալ նաև բնապահպանական թույլտվություն, իրականացվում է նաև նախագծի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը (ՇՄԱԳ): Նախքան գործունեությունը սկսելը ընկերությունների ՇՄԱԳ հաշվետվությունը ներկայացվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարությանը՝ պետական բնապահպանական փորձաքննություն իրականացնելու համար: Այսպիսով, ընկերությունը պարտավոր է պատշաճ և հավաստի տեղեկությունների հիման վրա ներկայացնել, թե ինչ բնապահպանական ռիսկեր է պարունակում այն գործունեությունը, որն ինքը պատրաստվում է իրականացնել և ինչպես է պատրաստվում կառավարել բնապահպանական և սոցիալական ռիսկերը: Այս գործընթացը մանրամասն նկարագրված է ընդերքօգտագործման իրավունքի տրման գործընթացում կոռուպցիոն ռիսկերը գնահատող հրապարակման մեջ⁵⁷:

57. «Ընդերքօգտագործման իրավունքի տրման գործընթացում կոռուպցիոն ռիսկերի գնահատում», Թրանսպարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, 2017 թ. <https://transparency.am/hy/publications/view/208>



Պատկեր 2. Ընդերքօգտագործման թույլտվություն ստանալու գործընթացի սխեման⁵⁸

Նախագծի ՇՄԱԳ հաշվետվությունը մշակելուց հետո այն տրամադրվում է լիազոր պետական մարմնին՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարությանը՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն իրականացնելու համար (բնապահպանական փորձաքննություն): Սա այն

58. Աղբյուր՝ «Ընդերքօգտագործման իրավունքի տրման գործընթացում կոռուպցիոն ռիսկերի գնահատում», Թրանսփարենսի ինթերնեշլ հակակոռուպցիոն կենտրոն, 2017 թ., <https://transparency.am/hy/publications/view/208>

փուլն է, երբ պետական լիազոր մարմնի կողմից գնահատվում է տվյալ գործունեության ազդեցությունը ջրերի վրա, մթնոլորտային օդի, հողային պաշարների, կենսաբազմազանության և այլ բաղադրիչների վրա ու որոշվում նախագծի թույլատրելիության հարցը: Այլ կերպ ասած՝ ընկերության ներկայացրած ՇՄԱԳ հաշվետվությունը ուսումնասիրում և գործունեության թույլատրելիության վերաբերյալ որոշում է ընդունում ՀՀ շրջակա միջավայրի (նախկինում՝ բնապահպանության) նախարարությունը: Այսպիսով, բնապահպանական մասով թույլտվություն ստանալու գործընթացում առկա է երկու փաստաթուղթ՝

- ՇՄԱԳ հաշվետվություն (ընկերության կողմից մշակված):
- ՇՄԱԳ փորձաքննական եզրակացություն (նախարարության կողմից տրամադրված):

Եթե փորձաքննության արդյունքները դրական են լինում, դրա և մի քանի այլ փորձաքննությունների արդյունքների հիման վրա ընկերությունը ստանում է հանքավայրը շահագործելու թույլտվություն: Այդ թույլտվությունը ենթադրում է որոշակի պայմաններ, որոնք ընկերությունը պետք է պահպանի: Դրանք թվում են կենսաբազմազանության՝ բուսական և կենդանական աշխարհի պահպանությունը, թույլատրելի չափերից ավելի բնության բաղադրիչները՝ օդը, ջուրը, հողը և այլ միավորները չաղտոտելու պարտավորությունը և այլն⁵⁹:

Ընկերությունը պարտավոր է իր գործունեության ընթացքում պահպանել նախագծով և ՇՄԱԳ փորձաքննական եզրակացությամբ սահմանված պարտավորությունները: ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը պարբերաբար իրականացվող ստուգումների միջոցով վերահսկում է, որպեսզի ընկերությունը պատշաճ կերպով կատարի իր պարտավորությունները: Այսինքն, բնապահպանական ոլորտը կառավարող պետական մարմիններից մեկը՝ նախարարությունը, գնահատելով բնապահպանական ռիսկերը, տրամադրում է թույլտվություն, իսկ մյուս մարմինը՝ տեսչությունը՝ վերահսկում է, որ թույլտվության պայմաններն ապահովվեն:

Որևէ հանքավայրում իրականացված ստուգման արդյունքում վեր հանված

59. Թույլտվությունների տրամադրման գործընթացը կարգավորված է ՀՀ ընդերքի մասին օրենսգրքով, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով, «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 19 նոյեմբերի 2014 թ. N 1325-Ն որոշմամբ և ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերով ու տեխնիկական ուղեցույցներով:

Խախտումների հիմքով տեսչությունը կարող է դիմել շրջակա միջավայրի նախարարին՝ առաջարկելով ուժը կորցրած ճանաչել հանքավայրը շահագործող ընկերությանը տրված ՇՄԱԳ փորձաքննական եզրակացությունը, սակայն օրենսդրությամբ հստակեցված չէ, թե նոր կարգավիճակում ի՞նչ իրավական կարգավիճակ ունեն տեսչության ընդունած ակտով հաստատված փաստական հանգամանքները:

Այս առումով օրենսդրական բարեփոխումների կարիք կա, քանի որ ստացվում է մի իրավիճակ, երբ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացված տեսչական ստուգման արդյունքները վերագնահատվում են մի մարմնի կողմից, որը չունի այդպիսի գործառույթ իրականացնելու իրավական հիմք: Միևնույն ժամանակ, տեսչությունն էլ լիազորություն չունի ուժը կորցրած ճանաչել նախարարության ընդունած փաստաթուղթը: Այս խնդիրը չկար, երբ տեսչությունը գտնվում էր նախարարության կազմում, քանի որ ցանկացած պարագայում որոշումն ընդունում էր նախարարը, սակայն այժմ, երբ մարմիններն առանձնացված են, անհրաժեշտություն է առաջանում հստակեցում մտցնել նաև գործող օրենսդրության մեջ՝ հաշվի առնելով տեսչության և նախարարության հարաբերություններում վերահսկողի ու վերահսկվողի ինստիտուցիոնալ բնույթը:

Տեսչական գործառույթների մեծ մասը կարգավորվում է «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքով և «Փորձաքննական եզրակացությունն ուժը կորցրած ճանաչելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 22 ապրիլի 2015 թ. N 428-Ն որոշմամբ: Այս իրավական ակտերը ներառում են մի շարք դրույթներ՝ սկսած ստուգող մարմնի լիազորությունների շրջանակից մինչև ստուգման արդյունքում հայտնաբերված խախտումների հիմքով տրված ՇՄԱԳ փորձաքննական երակացությունն ուժը կորցրած ճանաչելու հիմքերն ու մեխանիզմները: Սակայն այս իրավական ակտերը ոչ միշտ են արտացոլում տեսչական բարեփոխումներից հետո առաջացած նոր իրողությունները:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը (ՇՄԱԳ) իրականացվում է ընկերության կողմից՝ վերջինիս նախաձեռնությամբ և միջոցներով: ՇՄԱԳ հաշվետվությունը մշակելուց հետո այն ներկայացվում է պետական լիազոր մարմնին՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարությանը, պետական բնապահպանական փորձաքննություն իրականացնելու համար: ՇՄԱԳ փորձաքննության դրական եզրակացության դեպքում ընկերությունը կարող է շարունակել թույլտվություն ստանալու գործընթացը, իսկ մերժման դեպքում՝ ոչ:

ՇՄԱԳ փորձաքննական եզրակացությունը կարող է ուժը կորցրած ճանաչել միայն այն ընդունած մարմինը՝ կառավարության որոշմամբ սահմանված կարգով: Տեսչական մարմինը ստուգման արդյունքում կարող է ՇՄԱԳ փորձաքննական եզրակացությունն ուժը կորցրած ճանաչելու առաջարկով դիմել լիազոր մարմնին՝ Նախարարությանը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերը ներկայացված ինստիտուցիոնալ և օրենսդրական բացերը հանգեցնում են բնապահպանական ոլորտում կառավարման լուրջ խնդիրների: Դրանք ոչ միայն միջգերատեսչական լարվածություն, այլև շատ կոնկրետ իրավական հետևանքներ կարող են առաջացնել: Այդ պատճառով պետք է հնարավորինս արագ ավարտին հասցնել տեսչական բարեփոխումների ծրագիրը՝ լրամշակելով բնապահպանության ոլորտի կառավարումն իրականացնող երկու հիմնական մարմինների՝ բնապահպանության Նախարարության և տեսչության գործառույթները և դրանց համար անհրաժեշտ իրավական բազան: Մասնավորապես՝

1. Տեսչության իրականացրած ստուգման ակտով հաստատված փաստական հանգամանքները այլ պետական մարմինների համար պետք է հիմք ընդունվեն իրենց լիազորությունների շրջանակներում գործողություններ իրականացնելու համար:
2. Պետք է մշակվի օրենսդրական մեխանիզմ, որով տեսչական մարմինը հնարավորություն կունենա ստուգման ընթացքում բացահայտված, սակայն իր լիազորություններից դուրս գտնվող հարցերի վերաբերյալ կոռուպցիոն ռիսկերը ներկայացնել համապատասխան պետական մարմիններին, որոնք պարտավոր են դրանք պատշաճ կերպով քննության առնել:
3. Նախարարության կողմից տրվող թույլտվություններում օրենսդրության խախտումներ բացահայտելու դեպքում տեսչական մարմինը պետք է իրավունք ունենա այդ թույլտվությունները ուժը կորցրած ճանաչելու պահանջով դիմելու դրանք տրամադրած պետական մարմնին, որն իր հերթին պարտավոր է քննության առնել ներկայացված պահանջը և որոշում ընդունել:

Բնապահպանական կառավարման արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է օրենսդրական փոփոխություններ նախաձեռնել

Նախարարության և տեսչական մարմնի փոխհարաբերությունները կարգավորող հիմնական իրավական ակտերում: Փոփոխությունները պետք է միտված լինեն տեսչական բարեփոխումներից հետո բնապահպանական վերահսկողության ոլորտում առկա օրենսդրական բացերը տեսչական մարմնի նոր լիազորությունների հետ համապատասխանեցնելուն:



ՕԳՏԱԿԱՐ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. «Ընդերքօգտագործման իրավունքի տրման գործընթացում կոռուպցիոն ռիսկերի գնահատում», Թրանսփարենսի ինթերնեշլ հակակոռուպցիոն կենտրոն, 2017 թ., <https://transparency.am/hy/publications/view/208>
2. «Իրավիճակը Հայաստանի Ախթալա քաղաքում. Հանքարդյունաբերության բնապահպանական և առողջապահական հետևանքները», Ռուզաննա Գրիգորյան, ՀԱՀ, 2015 թ., <http://environment.cenn.org/app/uploads/2016/10/Armenian.pdf>
3. ՀՀ շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայք www.mnp.am
4. «Կանաչ շարք», Բուն Թի Վի, <http://boon.am/category/կանաչ-շարք>
5. Հանքարդյունաբերության օրենսդրության բարեփոխման կենտրոն, <https://mlri.org.am/am>
6. «Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկության, որոշումներ ընդունելուն հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիա (Օրիուսի կոնվենցիա), Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպական տնտեսական հանձնաժողով, 25.06.1998, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=77849>
7. Կենսաբազմազանության մասին կոնվենցիա, 05.06.1992, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=77820>

8. Միավորված ազգերի կազմակերպության շրջանակային կոնվենցիա կլիմայի փոփոխության մասին, 09.05.1992, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=77806>
9. Կոնվենցիա անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին, 25.02.1991, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=77791>
10. ՀՀ ջրային օրենսգիրք, 04.08.2002, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=132537>
11. ՀՀ հողային օրենսգիրք, 02.05.2001, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=126320>
12. ՀՀ ընդերքի մասին օրենսգիրք, 28.11.2011, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=131506>
13. ՀՀ անտառային օրենսգիրք, 24.10.2005, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121312>
14. ՀՀ օրենքը «Մթնոլորտային օդի պահպանության մասին», 11.10.1994, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=112454>
15. ՀՀ օրենքը «Բուսական աշխարհի մասին», 23.11.1999, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=120784>
16. ՀՀ օրենքը «Կենդանական աշխարհի մասին», 03.04.2000, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=120790>
17. ՀՀ օրենքը «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին», 21.06.2014, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=93148>
18. ՀՀ օրենքը «Բնապահպանական վերահսկողության մասին», 11.04.2005, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=120771>
19. ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին», 17.05.2000, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121535>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՆՑ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ

Կարինե Դանիելյան, Լիանա Ներսիսյան

ՆԱԽԱԲԱՆ

Եկոլոգիան⁶⁰ որպես գիտություն ներկայումս հետզհետե զարգանում է՝ ընդլայնելով իր ուսումնասիրությունների ոլորտը և կարևոր տեղ զբաղեցնելով ժամանակակից գիտությունների շարքում: Բանն այն է, որ քսաներորդ դարում ակնհայտ դարձավ, որ մարդկությունը մուտք է գործել համընդհանուր Եկոլոգիական ճգնաժամ: Այս ճգնաժամը հղի է բազմաթիվ ոչ բարվոք հետևանքներով՝ բնական և տեխնոսածին աղետների քանակի և ուժգնության

60. Հունարենից թարգմանությամբ՝ «Եկոլոգիա» նշանակում է գիտություն տան մասին (հուն.՝ οἶκος, «տուն» կամ «միջավայր», -λογία «գիտություն» կամ «հետազոտություն»): Եկոլոգիայի սահմանումներից մեկը հետևյալն է «Գիտություն օրգանիզմների իրար միջև և շրջակա միջավայրի հետ փոխհարաբերությունների, ինչպես նաև՝ մարդկային հանրությունների և շրջակա միջավայրի համատեղ զարգացման տարբեր ասպեկտների մասին» (Աղբյուր՝ Неправительственный экологический фонд им. В.И. Вернадского. Издательский дом “Ноосфера”, Москва, 2000, стр. 779):

աճով, բնակչության առողջության վրա բացասական ազդեցությամբ, քաղաքակրթական ճգնաժամով: Սա նկատի ունենալով՝ Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) փորձագետները մշակել են քաղաքակրթության զարգացման նոր հայեցակարգ՝ կայուն զարգացումը, որի պահանջն է ապահովել տնտեսական, սոցիալական և էկոլոգիական առաջնայնությունների ներդաշնակեցումը բոլոր հարցերում և որոշումներում՝ հանուն ներկա և ապագա սերունդների բարեկեցության: Կայուն զարգացումը հավանության է արժանացել բոլոր երկրների և միջազգային կառույցների կողմից՝ զարգանալով որպես միջդիսցիպլինար գիտություն և ստանալով գործնական կիրառություն:

Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) էկոլոգիական հիմնախնդիրները բազմաթիվ են և բազմակողմանի, ներառյալ շրջակա միջավայրի շարունակական աղտոտումը, որն ավելի ու ավելի մեծ տարածքներ է ընդգրկում, բնական ռեսուրսների քանակական և որակական անխնա սպառումը, տարբեր խնդիրների բացասական ազդեցությունը բնակչության առողջության, ինչպես նաև տնտեսության զարգացման վրա:

Առավել մտահոգիչ է հանքարդյունաբերության, հատկապես մետաղային բաց գործող հանքերի և պղնձաբարների ազդեցությունը շրջակա միջավայրի և բնակչության առողջության վրա: Առաջնահերթ նշանակություն ունի բնակչության շրջանում էկոլոգիական մշակույթի զարգացումը, որտեղ մեծ դեր ունեն էկոլոգիական կրթությունը և իրազեկումը: Ընդ որում՝ կարևոր է այն գաղափարի զարգացումը, որ մենք պատասխանատու ենք ոչ միայն ՀՀ ապագա սերունդների, այլ նաև՝ համաշխարհային հանրության առջև, քանի որ մոլորակի բնությունը միասնական է: Այս առումով առավել ցայտուն օրինակ կարող է ծառայել կենսաբազմազանության պահպանման հիմնախնդիրը, քանի որ մեր երկրի տարածքը Երկիր մոլորակի կենսաբազմազանությամբ բավականին հարուստ տարածքներից է, որտեղ կան նաև շատ էնդեմիկ⁶¹ տեսակներ:

Ստորև ներկայացված ակնարկը նվիրված է վերոնշյալ հիմնախնդիրների բացահայտմանը, լուծման ուղիների և խոչընդոտների, ընդունված ծրագրերի և իրականացվող գործունեության լուսաբանմանը:

61. Բույսերի և կենդանիների տեղական տեսակներ, որոնք տարածված են աշխարհագրական համեմատաբար ոչ մեծ տարածքում և ոչ մի այլ վայրում չեն հանդիպում:


ՀՀ ԲՆԱԿՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

1. Հանքարդյունաբերություն, դրա ազդեցությունը շրջակա միջավայրի և բնակչության առողջության վրա

ՀՀ տարածքում հաշվառված է շուրջ 60 տեսակի օգտակար հանածոներ պարունակող 670-ից ավելի հանքավայր, որից 30-ը՝ մետաղական: Նշված հանքավայրերից շահագործվում են ավելի քան 400-ը, որոնցից 23-ը մետաղական են: Բոլոր հանքերը շահագործվում են Էկոլոգիապես առավել վտանգավոր՝ բաց եղանակով:

Հանքաքարի արդյունահանումն ու հարստացումը ուղեկցվում են շրջակա միջավայրի՝ տարբեր տոքսիկ քիմիական նյութերով և ծանր մետաղներով աղտոտմամբ: Շրջակա միջավայրի համար լրջագույն սպառնալիք են նաև տասնամյակների ընթացքում ձևավորված 23 պոչամբարները: Հատուկ ուսումնասիրություններով (օրինակ՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Էկոլոգո-նոոսֆերային կենտրոնի, Հայաստանի ամերիկյան համալսարանի, Երևանի պետական համալսարանի) բացահայտվել է, որ հանքալեռնային արդյունաբերական շրջաններում առկա են Էկոլոգիական և բնակչության առողջության համար լուրջ ռիսկեր, որոնք կապված են հատկապես օդ-ջուր-հող-գյուղմթերք համակարգով ծանր մետաղների, այդ թվում տոքսիկության առաջին դասի տարրերի, սնման շղթայի տարբեր օղակներ ներթափանցման հետ: Այսպես, օրինակ, հայտնաբերվել է, որ հանքուղիներից, պոչամբարներից առանց մաքրման հոսքաջրերի միախառնումը մակերևութային ջրերին և ոռոգման ցանցերին հանգեցրել է ոռոգման ջրերի ծանր մետաղներով աղտոտմանը: Գրանցվել են ծանր մետաղների (Mo, Cu, Pb, As, Zn, Cd, Hg) և այլ տարրերի տարբեր պարունակություններ Ողջի, Դեբեդ և Մասրիկ գետերի ու դրանց վտակների ջրերում: Նման աղտոտված ջրերով տարիներ շարունակ ոռոգված հողերում աճեցված բուսական ծագման գյուղմթերքի ուսումնասիրությունների արդյունքում գրանցվել են սահմանափակ թույլատրելի կոնցենտրացիաների գերազանցումներով ծանր մետաղների պարունակություններ: Այդպիսի պատկեր է գրանցվել Քաջարան, Կապան, Ալավերդի, Ախթալա քաղաքների տարածքներում, ինչպես նաև Սյունիքի մի քանի գյուղերում: Բացահայտվել է, որ որոշ ծանր մետաղներ են պարունակվում նաև աղտոտված

շրջաններում բնակվող երեխաների մազերի և արյան մեջ⁶²:



Պատկեր 1. Շրջակա միջավայրի վիճակի գնահատականի համադրումը բնակչության հիվանդացության տվյալների հետ⁶³

2. Կլիմայի փոփոխության ազդեցություն. ադապտացման մեխանիզմներ

Վերջին 300 տարիների ընթացքում արդյունաբերական հեղափոխության մեկնարկից ի վեր, մթնոլորտում շեշտակիորեն բարձրացել է ջերմոցային այնպիսի գազերի արտանետման մակարդակը, ինչպիսիք են ածխածնի երկօքսիդը (CO_2), մեթանը (CH_4), ազոտի ենթօքսիդը (N_2O), պերֆտորածխածինները (PFCs), հիդրոֆտորածխածինները (HFCs) և ծծմբի հեքսաֆտորիդը (SF_6): Դրանց շարունակական արտանետումները կլիմայական համակարգի բոլոր բաղադրիչների փոփոխության և ջերմաստիճանի հետագա բարձրացման պատճառ են դառնում՝ հանգեցնելով ջերմոցային էֆեկտի (ՉԷ) և կլիմայի փոփոխության:

62. K. Danielyan, L. Nersisyan, A. Nazaretyan, S. Kosyan, Children’s health challenges caused by environmental degradation and climate change and main proposed solutions approaches. //Յլ. յ. «Химическая безопасность», Изд-ль – НИИ Химической физики РАН, Москва, 2017, Том 1, № 2, с. 11-43; Карине Даниелян, Сирине Косян. Приоритетные экологические проблемы Армении в контексте химической безопасности. //Материалы Международной конференции «Актуальные научные и научно-технические проблемы обеспечения химической безопасности», 17-18 октября 2018 г., РАН, г. Москва, стр. 32-33.; Կ. Դանիելյան, Շրջակա միջավայրի ազդեցությունը բնակչության առողջության վրա, ՀՀ Մարդկային զարգացման զեկույց. UNDP, 2018-2019:

63. Աղբյուր՝ K. Danielyan, L. Nersisyan, A. Nazaretyan, S. Kosyan, Children’s health challenges caused by environmental degradation and climate change and main proposed solutions approaches. //Յլ. յ. «Химическая безопасность», Изд-ль – НИИ Химической физики РАН, Москва 2017, Том 1, № 2, с. 11-43:


Ներկայումս կլիմայի փոփոխությունը մեծագույն մարտահրավեր է դարձել ողջ մարդկության համար: Ահա թե ինչու պետք է փոխենք մեր կենսակերպը և նվազեցնենք ածխաթթու գազի արտանետումները՝ այդպիսով մեղմելով կլիմայի փոփոխության բացասական ազդեցությունը: Իսկ բացասական ազդեցության հետևանքները բազմաթիվ են՝

- մշակաբույսերի բերքատվության նվազում.
- ընտանի և վայրի կենդանիների վրա ջերմային ստրեսի աճ.
- ջրային ռեսուրսների քանակական և որակական վատթարացում.
- բնակչության առողջության վատթարացում՝ սիրտանոթային համակարգի հիվանդացության աճ, համաճարակաբանական իրավիճակի սրում՝ մալարիա, դեղին տենդ, ժանտախտ, խոլերա, աղիքային հիվանդությունների աճ.
- ուժեղ տեղումներ և ծովի մակարդակի աճ, որը բերում է ջրհեղեղների վտանգի.
- երաշտների հաճախականություն և մասշտաբների մեծացում.
- սողանքների, ձևահյուսների և սելավների, անտառային հրդեհների վտանգի ուժեղացում.
- մերձափնյա երոզիայի աճ, շենքերի և ենթակառուցվածքի վնասում.
- վնասում մերձափնյա էկոհամակարգերին՝ կորալյան խութերին և մանգրային անտառներին.
- երաշտի ենթակա շրջաններում հիդրոէներգետիկական պոտենցիալի անկում.
- էներգիայի պահանջարկի աճ՝ պայմանավորված հովացնող համակարգերի գերօգտագործմամբ.
- տուրիստական ուղղությունների փոփոխություն:

Ըստ ՀՀ հիդրոմետ ծառայության դիտարկումների՝ 1929 թ. համեմատությամբ ջերմաստիճանի միջին տարեկան ցուցանիշը բարձրացել է 1,23°C-ով, մթնոլորտային տեղումները նվազել են 9 տոկոսով, ջրամբարների լցվածությունը չի գերազանցում 40-50%-ը, իսկ վտանգավոր հիդրոօդերևութաբանական երևույթների քանակն ավելացել է 20%-ով: Արդյունքում տուժում է գյուղատնտեսությունը, խոցելի են դառնում նաև մարդու առողջությունը,

բնակավայրերը, ենթակառուցվածքները, էներգետիկ սեկտորը և բնական էկոհամակարգերը՝ ջրային, անտառային, լեռնային:

Պատկեր 2-ում ներկայացված է կլիմայի փոփոխության ազդեցությունը ՀՀ գյուղատնտեսության և ջրային ռեսուրսների վրա:



Պատկեր 2. ՀՀ մարզերի խոցելիությունը կլիմայական փոփոխությունների նկատմամբ⁶⁴

Կլիմայի փոփոխության նվազեցման և ադապտացման (հարմարվողականության) մեխանիզմները ահռելի նշանակություն ունեն: Հարմարվողականությունը բնական կամ մարդկային համակարգերի ադապտացիան է գործող կամ սպասվող կլիմայական գործոնների նկատմամբ: Կլիմայի փոփոխությունը և ադապտացման մեխանիզմները մոտ երեսուն տարի գտնվում են միջազգային հանրության ուշադրության կենտրոնում: Կլիմայական փոփոխությունները ներկայումս համարվում են մարդկային հասարակության գոյատևման հիմնական մարտահրավերներից մեկը: Այս ուղղությամբ ընդունվել են մի շարք միջազգային արձանագրություններ և կոնվենցիաներ,

64. Աղբյուրը՝ «Կլիմայի փոփոխության մասին երկրորդ ազգային հաղորդագրություն», http://www.nature-ic.am/Content/announcements/7313/SNC_Full_Arm.pdf

մասնավորապես՝ Մոնրեալի արձանագրությունը⁶⁵, Կիոտոյի արձանագրությունը⁶⁶ և Փարիզյան համաձայնագիրը⁶⁷:

3. Այլընտրանքային էներգետիկայի զարգացում և էներգախնայողություն

Գլոբալ գործընթացների շրջանակներում, երբ հանրության առջև կանգնած են այնպիսի մարտահրավերներ, ինչպիսիք են կլիմայի փոփոխությունը, վառելիքային չվերականգնվող ռեսուրսների սահմանափակ լինելը, մասնավորապես՝ էներգետիկ դեֆիցիտը, նավթի, գազի, ածուխի, ուրանի պաշարների սպառման հեռանկարային պատկերը, նավթի և գազի բարձր գները, էլեկտրաէներգիայի գների փոփոխականությունը, էներգետիկ «անկախության» ձգտումը, բնակչության թվի աճը, բազմաթիվ երկրների կառավարություններ որդեգրել են այլընտրանքային էներգիայի (այդ թվում՝ վերականգնվող էներգիայի (ՎԷ), մաքուր և «կանաչ» էներգիայի ստացման, էներգախնայող տեխնոլոգիաների) զարգացման քաղաքականություններ: Միաժամանակ այդ երկրները փորձում են լուծել էներգետիկ կախվածության նվազեցման և անվտանգության ապահովման խնդիրներ:

Շատ երկրներում հասարակությունը ակտիվորեն նպաստում է այլընտրանքային և ՎԷ քաղաքականությանը՝ շուկայական բարենպաստ պայմաններ ստեղծելով այդ ոլորտների զարգացման համար: ՎԷ խթանման միջազգային փորձը հիմնվում է հետևյալ 3 ուղղությունների վրա՝

- 1. արտադրության խթանում.*
- 2. ներդրումների խթանում.*
- 3. օրենսդրական դաշտի գրավչության ապահովում:*

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է համաշխարհային էներգետիկ ոլորտի կառուցվածքի և Չայաստանում էլեկտրաէներգիայի գներեւացման կառուցվածքը:

65. Մոնրեալի արձանագրություն, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=76867>

66. Կիոտոյի արձանագրություն, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=24772>

67. Փարիզյան համաձայնագիր, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=115504>

Էներգիայի աղբյուրը	Աշխարհում (2015)⁶⁸	Հայաստանում (2019)⁶⁹
Ջերմաէլեկտրակայան (ՋԷԿ)	66.3%	40%
Հիդրոէլեկտրակայան (ՀԷԿ)	6,0%	20%
Ատոմային էլեկտրակայան (ԱԷԿ)	10.6%	40%
Վերականգնվող, այլընտրանքային կայաններ (արևային, հողմային, հիդրոջերմային, մակընթացության)	7.1%	1%

Հուսադրող է, որ ՀՀ կառավարության 2019 թ. հաստատված ծրագրով նախատեսվում է վերականգնվող և այլընտրանքային էներգիայի օգտագործումը հասցնել 10%-ի: Ամեն դեպքում, ՎԷ-ն ՀՀ կառավարության կողմից դիտարկվում է որպես գերակա ուղղություն՝ հաշվի առնելով էներգետիկ պահանջարկի աճը, էներգետիկ անվտանգությունը և գոյություն ունեցող հնամաշ կայանների կանխատեսվող կոնսերվացումը:

4. Ջրային ռեսուրսների կայուն կառավարման, մասնավորապես՝ Սևանա լճի և Արարատյան արտեզյան ավազանի հիմնախնդիրները

Հայաստանի տարեկան ջրային պաշարները գնահատվում են մոտ 7,1 մլրդ մ³, որից մոտ 3 մլրդ մ³-ը ստորերկրյա ջրեր են: ՀՀ տարածքում հոսում են 23000 կմ ընդհանուր երկարությամբ 9480 փոքր և միջին գետեր, որոնք Հարավային Կովկասի խոշոր գետերի՝ Արաքսի ու Կուրի վտակներ են: Հանքային ջրերի միջին տարեկան հոսքը գնահատվում է մոտ 22 մլն մ³, որից 40 հազ. մ³-ն օգտագործվում է որպես սեղանի կամ բուժիչ ջուր:

Երկրի տարածքում կան հարյուրից ավելի փոքր լճեր: Հայաստանի և Հարավային Կովկասի ողջ տարածաշրջանի համար կարևորագույն նշանակություն

68. Աղբյուր՝ Key World Energy Statistics 2017, International Energy Agency, 2019, <http://www.iea.org/publications/freepublications/>

69. Հայաստանի էներգետիկ քաղաքականության զարգացման միտումները, Վահե Դավթյան, Հովհաննես Թևոսյան, Երևան, 2019 թ., https://www.academia.edu/40388889/ՀԱՅԱՍՏԱՆԻ_ԷՆԵՐԳԵՏԻԿ_ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ_ՉԱՐԳԱՑՄԱՆ_ՄԻՏՈՒՄՆԵՐԸ


ունի Սևանա լճի հիմնախնդիրը⁷⁰: Լիճը ներառված է «Ռամսարի» միջազգային կոնվենցիայիում⁷¹: 1978 թ. հիմնվել է «Սևան» ազգային պարկը, իսկ 2002 թ. ընդունվել «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքը⁷²:

Ներկայումս լիճը ճգնաժամային վիճակում է, ինչը հղի է մակերեսային ու ստորգետնյա ջրերի ռեժիմի խախտմամբ, տարածաշրջանի չորացմամբ, խմելու և ոռոգման ջրի աղբյուրի, ինչպես նաև կենսաբազմազանության բնակավայրերի կորստով: Հիմնախնդրի պատճառները բազմաբնույթ են, սակայն հիմնական պատճառը լճի մակարդակի իջեցումն է (Պատկեր 3): 1933 թ. սկսվեց լճի ջրերի օգտագործումը ոռոգման և էներգետիկ նպատակներով, ինչի հետևանքով լճի մակարդակն իջավ մոտ 20 մետրով, իսկ ջրի ծավալը նվազեց մոտ 44%-ով: Հետազոտությունները ցույց տվեցին, որ լճի էկոլոգիական հավասարակշռությունը հնարավոր է վերականգնել՝ բարձրացնելով ջրի մակարդակը առնվազն մինչև 1903,5 մ: 1981-1990 թթ. լճի մակարդակի բարձրացումը և ջրի որակի որոշակի բարելավումը կապված են Արփա գետից ջրի հոսքի մի մասը Սևան փոխադրելու (տարեկան մոտ 250 մլն մ³, Արփա-Սևան թունելի միջոցով), ինչպես նաև էներգետիկ նպատակով լճի ջրերի օգտագործումը դադարեցնելու հետ:

70. Карине Даниелян (руководитель проекта), Бардух Габриелян, Сейран Минасян и др., Интегральная оценка экологического состояния озера Севан (GEO - Lake Sevan). UNEP GRID Arendal, Ассоциация «За УЧР», Ереван, Монография, 99 стр., 2012; Կարինե Դանիելյան, Հայաստանի Հանրապետությունում «Հետ Ռիո+20» գործընթացի իրականացման գործընթացին ընդառաջ, UNDP, EU, GEF, Երևան, 2014; Հայեցակարգ Հայաստանի Հանրապետությունում ՄԱԿ-ի «Ռիո+20» գազաթաժողովի հանձնարարականների իրականացման ռազմավարության՝ «Մինչև 2030 թ. կայուն զարգացման օրակարգ» համաշխարհային ծրագրի համատեքստում: ՀՀ կառավարություն, UNDP, EU, GEF, Երևան, 2016; Շրջակա միջավայրը և բնական պաշարները Հայաստանի Հանրապետությունում, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2010-2018:

71. «Ռամսարի» միջազգային կոնվենցիա, <http://www.nature-ic.am/Content/posts/3700/1.Ramsar.pdf>

72. ՀՀ օրենքը «Սևանա լճի մասին», <https://www.arlis.am/documentview.aspx?docid=891>



Պատկեր 3. Սևանա լճի մակարդակը, ջրի ելքը և մուտքը շուրջ 80 տարվա ընթացքում

Սևանա լիճը, սակայն, կորցրել է «մաքուր ջրամբարի» կարգավիճակը և վերածվել է «մեզոտրոֆ ջրամբարի», որը միտում ունի դառնալու «էվտրոֆ (ճահճացող) ջրամբար»: 2018 և 2019 թթ. ամռանը լճում կապույտ-կանաչ ջրմուռների ծաղկումը լուրջ ահազանգ է ճահճացման գործընթացի ակտիվացման առումով: Լճի աղտոտման հիմնական պատճառներն են.

- ջրասուզմանը ենթակա ափերի ոչ բավարար մաքրում.
- լճի ավազանում բաց մեթոդով շահագործվող մի շարք հանքերի գոյություն.
- քաղաքների ու բնակավայրերի կոյուղաջրերի հոսք լիճ՝ առանց լիարժեք մաքրման:

Վերջին պատճառն ընդհանրապես բնորոշ է երկրի ջրերին: Մինչև 1990 թ. մաքրման կայաններում լիովին մաքրվել է կեղտաջրերի մոտ 50%-ը: Երկրաշարժի, հետագայում նաև և 1991-1995 թթ. էներգետիկ ճգնաժամի հետևանքով մաքրման կայանները շարքից դուրս եկան: Ներկայումս կայանների մեծ մասը կամ չեն գործում, կամ իրականացնում են միայն մեխանիկական մաքրում, այդ պատճառով գետերի զգալի մասի ստորին հատվածներում ջրի որակը գնահատվում է 4-րդ կամ 5-րդ կարգի աղտոտվածությամբ:

2013 թ. ստորգետնյա ջրերի օգտագործման ոլորտում ի հայտ եկավ լրջագույն հիմնախնդիր: 2007-2013 թթ. Արարատյան արտեզյան ավազանից ձկնաբուժարաններին ապահովելու նպատակով նորմայից ավելի ջրառ է իրականացվել (տարեկան 1,8 մլրդ մ³ 1,2 մլրդ մ³ փոխարեն): Արդյունքում

Արարատյան արտեզյան ավազանի մակարդակը տարբեր հատվածներում իջել է 3-13մ-ով՝ առաջացնելով հարթավայրի անապատացման վտանգ: Ներկայումս ծրագրեր են իրականացվում ձկնաբուծարանների աշխատանքը շրջանառու ցիկլով կատարելու և արտեզյան ավազանից ջրառի կայուն կառավարման ուղղությամբ:

Ընդհանուր առմամբ պետք է նշել, որ վերոնշյալ հիմնահարցերի, հատկապես Սևանա լճի հիմնախնդրի լուծման և կայուն կառավարման ուղղությամբ հիմնական համապատասխան ծրագրերը մշակված են, խնդիրը դրանք հնարավորինս արագ և լիարժեք իրականացնելն է: Նշենք նաև, որ 2002 թ. ընդունվեց ՀՀ ջրային օրենսգիրքը⁷³, իսկ 2005 թվականից երկրում ձևավորված է ջրային ռեսուրսների ավազանային կառավարման համակարգ:

5. Քաղաքների օդային ավազանի աղտոտվածություն

Օդային ավազանի աղտոտվածությունը կախված է երկու գործոնից՝

1. տարածքի օդերևութաբանական պայմաններ.
2. տարբեր օբյեկտների արտանետումների քանակ:

Տարածքի հատակագծային կառուցվածքը մշակելիս որպես սահմանափակում նկատի է առնում նաև մթնոլորտային օդի՝ արտանետումների կուտակման կամ ցրման հատկությունը (մթնոլորտի աղտոտվածության պոտենցիալ՝ ՄԱՊ):

Օդային ավազանի աղտոտման հիմնական աղբյուրներն են ավտոտրանսպորտը, որի բաժինը օդային ավազանի աղտոտվածության մեջ տատանվում է 70-95 %-ի սահմաններում, իսկ ցուրտ եղանակին՝ ջեռուցման համակարգերը: Ջեռուցման համակարգերի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա պայմանավորված է օրգանական վառելիքի այրման ընթացքում առաջացող վնասակար նյութերի արտանետումներով:

Երևանի մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Երևանի տարածքում գործում է չափման ստացիոնար 5 կետ, որոնց չափումների հիման վրա հաշվարկվում է քաղաքի օդի աղտոտվածության ֆոնային մակարդակը:

73. ՀՀ ջրային օրենսգիրք, <http://www.irtek.am/views/act.aspx?aid=21>

Օդի որակի կառավարման ուղղությամբ իրականացվող գործողություններն են՝

1. 1994 թ. ընդունված «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի արդիականացման նպատակով 2007-2013 թթ. ընթացքում ընդունվել են ՀՀ կառավարության մի շարք որոշումներ, որոնք հստակեցրել և ավելի թափանցիկ են դարձրել մթնոլորտային օդի պահպանության կառավարումը.
 - ա) Արգելվել է համապատասխան բեռների տեղափոխումը փոշու համար անթափանց ծածկոցներ չունեցող մեքենաներով:
 - բ) Սահմանվել են միջոցառումներ շինհրապարակներից, վերակառուցվող և նոր կառուցվող շենքերից փոշու արտանետումները կանխարգելելու համար:
 - գ) Արգելվել է այրել խոզանները բուսական մնացորդներով ու չորացած բուսականությամբ գյուղատնտեսական, անտառամերձ, անտառային ու բնության հատուկ պահպանվող տարածքների հողերում:
2. Ավտոտրանսպորտից արտանետումների կրճատման նպատակով ՀՀ կառավարությունը ընդունել է հայեցակարգ և միջոցառումների ծրագիր, արգելվել է կապարացված բենզինի օգտագործումը և արտանետումների չեզոքացուցիչներ չունեցող ավտոմեքենաների ներմուծումը:
3. Սահմանվել են բնական գազով աշխատող ջերմային էլեկտրակայաններից մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումների հաշվարկի մեթոդները:
4. Ընդունվել է մթնոլորտի գերնորմատիվային աղտոտվածության, կլիմայի փոփոխության և օզոնային շերտի վիճակի հետ կապված վտանգավոր հիդրոոդերևութաբանական երևույթների կանխատեսման, ազդարարման և արձագանքման կարգը:

Օդային ավազանի գետնամերձ շերտի որակի մոնիթորինգն իրականացվում է Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Չարենցավան, Ծաղկաձոր, Սևան, Արարատ, Կապան և Քաջարան քաղաքներում: Մշտադիտարկվում են ազոտի և ծծմբի երկօքսիդների, գետնամերձ օզոնի և ընդհանուր փոշու պարունակությունները: Հանքարդյունաբերության

ազդեցության գոտիներում (Քաջարան, Կապան, Ախթալա և այլն) մթնոլորտային օդի աղտոտման մշտադիտարկման ստացիոնար կայաններ գրեթե չկան, իսկ կախված մասնիկների (PM2.5, PM2.5) մշտադիտարկում ԶԶ բնակավայրերում ընդհանրապես չի իրականացվում: Հայաստանի ինը քաղաք՝ Ապարանը, Զրազդանը, Ծաղկաձորը, Երևանը և այլն, միացել են Եվրամիության (ԵՄ) քաղաքների «Քաղաքապետների համաձայնագիր» կոչվող Նախաձեռնությանը, ըստ որի՝ քաղաքապետները պարտավորվում են մինչև 2020 թ. կրճատել իրենց քաղաքների ջերմոցային գազերի արտանետումները 20%-ով:

6. Թափոնների կայուն կառավարում տեսակավորում և վերամշակում

Թափոնները արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրանքի հումքի մնացորդներ են, շինարարական և տեխնոլոգիական գործընթացներում առաջացող կարծր, հեղուկ և գազային նյութեր, որոնք տվյալ արտադրությունում, շինարարությունում այլևս չեն օգտագործվում: Արտադրության մեկ տեսակի թափոնները կարող են հումք ծառայել մեկ այլ արտադրության համար:

Հայաստանում թափոնների կառավարման խնդիրները բնապահպանական և սոցիալական ամենասուր հիմնահարցերից են: Էական է հատկապես շրջակա միջավայրի համար մեծ վտանգ ներկայացնող պոչամբարների բացասական ազդեցությունը: Պոչամբարներում առկա ծանր մետաղները և տոքսիկ նյութերը թափանցում և կուտակվում են ջրամբարներում, գետերի հուններում: Տեղի է ունենում թունավոր նյութերի արտահոսք, որոնք փոշու, ջրի միջոցով տեղափոխվում են մշակովի հողատարածքներ՝ վնասելով մարդկանց առողջությունը, շրջակա միջավայրը:

Ներկայումս դեռևս արդիական են թափոնների անվտանգ օգտագործման հիմնախնդիրները, լուծված չեն թափոնների շահավետ կիրառման, դրանց գոյացման նվազեցման և Էկոլոգիապես անվտանգ հեռացման կամ ոչնչացման հարցերը: Այս խնդիրներն առավել սրվում են հանրապետությունում արդյունաբերական թափոնների վնասազերծման և թաղման մասնագիտացված պոլիգոններ, ինչպես նաև վտանգավոր թափոնների Էկոլոգիապես անվտանգ եղանակով վերամշակման, վնասազերծման մասնագիտացված ձեռնարկություններ չլինելու պատճառով: Զկան նաև սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան կենցաղային թափոնների հեռացման կազմակերպված վայրեր: Վերջապես, չկա արդյունաբերական և կենցաղային թափոնների տարանջատված հավաքման համակարգ՝ գործնականում բոլոր տեսակի

թափոնները, առանց տեսակավորման, հեռացվում են միևնույն քաղաքային և գյուղական աղբավայրեր:

Արդիական Է ժամկետանց թունաքիմիկատների ոչնչացման հիմնախնդրի լուծումը, մասնավորապես՝

1. Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոցի լիկվիդացման,
2. սնդիկին առնչվող հարցերի կանոնակարգման իրավական հենքի ստեղծման, սնդիկ պարունակող թափոնների հաշվառման, Էկոլոգիապես անվտանգ հեռացման, դրանցով շրջակա միջավայրի աղտոտվածության ուսումնասիրման,
3. տնտեսական գործունեության արդյունքում առաջացած պոլի-քլորացված բիֆենիլներ պարունակող թափոնների Էկոլոգիապես անվտանգ հեռացման,
4. Էլեկտրական և Էլեկտրոնային սարքավորումների թափոնների հաշվառման և օգտակար մետաղների կորզման նպատակով դրանց վերամշակման,
5. փաթեթվածքների, Էլեկտրոնային և Էլեկտրական սարքավորումների, տրանսպորտային միջոցների, կուտակիչների և օգտագործումից հետո այլ ապրանքների թափոնների հավաքման և օգտահանման ծախսերի մի մասը հոգալու նպատակով արտադրողների լայն պատասխանատվության սկզբունքների ներդրման,
6. վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեությամբ զբաղվող կազմակերպությունների լիցենզավորման հարցերը:

Թափոնների կառավարման ոլորտում կարևորվում են իրավական դաշտի կատարելագործումը, արդյունաբերական տեխնոլոգիաների նորացումն ու աստիճանական անցումը սակավաթափոն և անթափոն արտադրության, ինչպես նաև տնտեսական և սոցիալական այնպիսի գործելակերպը, որը կիսթանի թափոնների նվազեցումը և կրկնակի օգտագործումը, կհեշտացնի նորագույն տեխնոլոգիաների ներդրումը:

7. Անտառների կայուն կառավարում և կենսաբազմազանության պահպանում

Անտառը բնական էկոհամակարգի բաղադրամաս է, և այն պետք է դիտարկել որպես բոլոր բիոտիկ և աբիոտիկ բաղադրիչների ամբողջականություն՝ անտառային էկոհամակարգ: Այն բնական ռեսուրս է, որը կարող է օգտագործվել մարդու կարիքների համար:

ՀՀ անտառները տեղաբաշխված են ծովի մակարդակից 550-2400 մ բարձրությունների վրա և զբաղեցնում են շուրջ 3340 կմ² տարածք: Անտառների բազմազանությունը արտահայտվում է ծառերի 125 տեսակով, թփերի՝ 111, թփիկների՝ 30, կիսաթփերի՝ 48 և բնափայտավոր լիանանների՝ 9 ներկայացուցիչներով: Համաձայն 2011 թ. Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ, GIZ) հեռահար զոնդավորման մեթոդով ստացված տվյալների՝ ՀՀ անտառածածկ մակերեսը կազմում է մեր երկրի ընդհանուր տարածքի մոտ 11,17%-ը:

ՀՀ անտառները կառավարվում են «Հայաստան» ՊՈԱԿ-ի կողմից: 2017 թ. դեկտեմբերի 13-ին ընդունվել է «Անտառային ոլորտի բարեփոխումների հայեցակարգը»⁷⁴, որն ուղղված է՝

- անտառային ոլորտի կայուն կառավարմանը.
- անտառների պահպանությանը.
- վերարտադրության և օգտագործման վիճակի բարելավմանը.
- ապօրինի հատումների դեմ պայքարի արդյունավետության բարձրացման խնդիրների լուծմանը:

2011 թ. «Հայաստան» ՊՈԱԿ-ի կառուցվածքում ստեղծվել է Անտառների հաշվառման և կադաստրի վարման բաժին, սակայն անտառային պետական կադաստրի վարման համակարգը դեռևս ներդրված չէ, իսկ անտառների պետական հաշվառումը, որը, համաձայն ՀՀ Անտառային օրենսգրքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի, իրականացվում է 5 տարին մեկ անգամ, վերջին անգամ իրականացվել է 1993 թվականին:

Կլիմայի գլոբալ տաքացման և բնակչության անզգուշության պատճառով շեշտակի ավելացել են անտառային հրդեհների ծավալները, ինչի հետևանքով ունենում ենք անտառածածկ տարածքների զգալի կորուստներ, և դա հանգեցնում է նաև կենսաբազմազանության կորստի:

74. «Անտառային ոլորտի բարեփոխումների հայեցակարգը», <http://www.irtek.am/views/act.aspx?aid=92963>

ՀՀ-ն ըստ աշխարհագրական դիրքի գտնվում է կենսաաշխարհագրական երեք շրջանների հատման վայրում, և այդ պատճառով մեր երկրի տարածքում առաջացել է տարբեր էկոհամակարգերի և բարձր աստիճանի էնդեմիզմ ունեցող հարուստ կենսաբազմազանություն:

Հայաստանում կա **բուսական ու կենդանական** 5091 տեսակ, որից 142-ը էնդեմիկ տեսակներ են: **Դեղաբույսերը** երկրի ֆլորայի տեսակային կազմի շուրջ 10 %-ն են: **Կերային բույսերից** հայտնի է ավելի քան 2000 տեսակ, **եթերայուղային բույսերից**՝ շուրջ 150 տեսակ, **ներկատու բույսերից**՝ մոտ 120 տեսակ:

Ինտենսիվ բնօգտագործման հետևանքով Հայաստանում բնական լանդշաֆտների մարդածին փոփոխությունների աստիճանը մեծ է: Գերօգտագործման հետևանքով (տարածքի ավելի քան 60%-ը ներառված է գյուղատնտեսության ակտիվ ոլորտ) տեղի է ունեցել վայրի կենսաբազմազանությամբ զբաղեցված տարածքների կրճատում: Պատճառներն են՝

- կենսաբազմազանության բնական միջավայրի կորուստը՝ հանքարդուևաբերության, շինարարության, գյուղատնտեսության, անտառհատումների, հիդրոէներգետիկայի, ռեկրեացիայի և զբոսաշրջության միջոցով կենսառեսուրսների գերօգտագործումը.
- շրջակա միջավայրի աղտոտումը, օտարածին տեսակների ներթափանցումը, կլիմայի փոփոխությունը:

Հայաստանի կենսաբազմազանության կառավարումն իրականացվում է «Բուսական աշխարհի մասին», «Կենդանական աշխարհի մասին», «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքներում և ՀՀ Անտառային օրենսգրքում ամրագրված լիազոր մարմինների իրավասությունների շրջանակում:


8. Բնության հատուկ պահպանվող տարածքների հիմնախնդիրները

Բնության հատուկ պահպանվող տարածքները (ԲՀՊՏ) բնական միջավայրի, կենսաբանական և լանդշաֆտային բազմազանության, կենսոլորտի բնական վիճակի հավասարակշռության պահպանության ավանդական և արդյունավետ միջոցներից են, որոնց գործառույթները հիմնված են էկոհամակարգային համալիր մոտեցումների կիրառման վրա և ուղղված են՝

- բնական գործընթացների ապահովմանը.
- վտանգների կանխարգելմանը և վերացմանը.

- գիտական ուսումնասիրությունների և շարունակական մոնիթորինգի կազմակերպմանը.
- կայուն բնօգտագործման, մասնակցային կառավարման և միջոյր-տային համագործակցության կազմակերպմանը:

ԲՀՊՏ-ների ներկա համակարգի պահպանումն ու զարգացումը ՀՀ բնապահպանական քաղաքականության իրականացման, ինչպես նաև երկրի կայուն և երկարաժամկետ զարգացման կարևոր բաղադրիչն ու երաշխիքն են: ՀՀ-ում կա բնության հատուկ պահպանության տարածքների (ԲՀՊՏ) 4 տեսակ՝ **պետական արգելոցներ, ազգային պարկեր, պետական արգելավայրեր և բնության հուշարձաններ**, որոնք ներկայացված են Պատկեր 4-ում:



Պատկեր 4. Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքները

Կենսաբազմազանության պահպանման գործում ԲՀՊՏ-ների կարևորությունն ու անհրաժեշտությունն ամրագրված է «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայում⁷⁵ 8-րդ հոդվածով, համաձայն որի յուրաքանչյուր երկիր պարտավոր է ստեղծել ԲՀՊՏ-ների համակարգ և

75. «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=77820>

ապահովել դրա կանոնավոր գործունեությունը, ինչպես նաև 2010-2020 թվականների «Այիչիի նպատակային խնդիրներ»-ում⁷⁶: ՀՀ-ում ԲՀՊՏ-ների կառավարման և պահպանման գործընթացում կարգավորումներն արվում են միջազգային վերոնշյալ կոնվենցիաներով, ինչպես նաև «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքով⁷⁷:

9. Կանաչ տնտեսության և կայուն զբոսաշրջության զարգացման սկզբունքները, առկա խոչընդոտները և լուծման ուղիները

Կանաչ տնտեսության (ԿՏ) սկզբունքների խթանումը նախատեսված է «ՀՀ Շրջակա միջավայրի պահպանության ազգային գործողությունների 2-րդ ծրագրում» (2008-2012 թթ.), «ՀՀ 2013-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում»⁷⁸ և այլ ռազմավարական ծրագրերում ու պլաններում, որտեղ բնական ռեսուրսների պահպանության և կայուն օգտագործման դրույթների հետ մեկտեղ նախատեսված է այդ ուղղությամբ միջնուղային ռացիոնալ փոխգործակցություն:

Կարելի է փաստել, որ որոշ հաջողություններ են ձեռք բերվել օրգանական գյուղատնտեսության և այլընտրանքային էներգետիկայի (արևային էներգիայի, քամու օգտագործման) զարգացման ուղղությամբ: Կարևոր աշխատանքներ են իրականացվել ԵՄ կողմից խրախուսվող «Կանաչ տնտեսություն ԵՄ Արևելյան գործընկերության երկրներում» (EaP GREEN) նախագծի շրջանակներում⁷⁹: Մասնավորապես «Կովկաս» տարածաշրջանային կենտրոնի հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվել է «Ռեսուրսների արդյունավետություն և մաքուր արտադրություն» (ՌԱՄԱ)

76. Այիչիի նպատակային խնդիրներ, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=93166>

77. ՀՀ օրենքը «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին», <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=29624>:

78. Հայաստանի Հանրապետության 2013-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, <https://www.gov.am/files/docs/1322.pdf>:

79. Ռեսուրսների արդյունավետ օգտագործում և մաքուր արտադրություն՝ կիրարկման օրինակներ ՓՄՁ-ներում. EaP GREEN, EU, OECD, UNECE, UNEP, UNIDO, REC CAUCASUS, Երևան, 2017 թ., www.green-economies-eap.org; www.recip.am; Կարինե Դանիելյան, Լիլիթ Սարգսյան, Տիգրան Սարգսյան. Կայուն զարգացման տեսությունն ու պրակտիկան (Համաշխարհային գործընթացը և Հայաստանը), Ուսումնական ձեռնարկ բուհերի համար, UNDP, ՀՊՄՀ, ՀԿՄՁ ասոցիացիա, Երևան, 2013 թ., Կարինե Դանիելյան, Հայաստանի Հանրապետությունում «Հետ Ռիո+20» գործընթացի իրականացման գործընթացի ընդառաջ, UNDP, EU, GEF, Երևան, 2014, Հայեցակարգ Հայաստանի Հանրապետությունում ՄԱԿ-ի «Ռիո+20» գազաթափողվի հանձնարարականների իրականացման ռազմավարության՝ «Մինչև 2030 թ. կայուն զարգացման օրակարգ» համաշխարհային ծրագրի համատեքստում, ՀՀ կառավարություն, UNDP, EU, GEF, Երևան, 2016 թ.:

բավականին արդյունավետ ծրագիրը: Կանաչ տնտեսության կարևորագույն նախապայմանը նորագույն տեխնոլոգիաներով հագեցած կայուն և զարգացած տնտեսությունն է:

Ներկայումս գիտատար, Էկոլոգիապես կողմնորոշված արտադրությունների զարգացման, տնտեսության դիվերսիֆիկացիայի, փոքր և միջին բիզնեսին աջակցման վերոնշյալ ծրագրերի իրականացումը պետք է բարելավի իրավիճակը և նպաստի երկրում կանաչ տնտեսության ձևավորմանը:

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԿԱՅՈՒՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ

Ըստ ընդունված կարծիքի՝ XX-XXI դդ. առաջացած գլոբալ Էկոլոգիական ճգնաժամի ձևավորման մեջ մեղքի իր բաժինն ունեն նաև գիտական և կրթական համակարգերը: Գիտությունը չկարողացավ ժամանակին նախանշել Էկոլոգիական ճգնաժամը և ֆիքսեց վտանգը, երբ ճգնաժամն արդեն իրողություն էր դարձել: Դա բացատրվում է գլոբալ խնդիրներին ժամանակակից գիտության «թունելային», նեղ դիսցիպլինար մոտեցմամբ, ինչը խանգարում է դրանց ամբողջական ընկալմանը: Այստեղից էլ գիտության «կարճատեսությունը», որը դրսևորվում է բարդ սոցիալ-տնտեսական և Էկոլոգիական գլոբալ գործընթացներն ուսումնասիրելիս: Արդի իրականությունը գիտությունից պահանջում է խորացող դիֆերենցմանը զուգընթաց դրսևորել նաև ամբողջական (հոլիստիկ) մոտեցում հատկապես գլոբալ Էկոլոգիական հիմնախնդիրներ ուսումնասիրելիս: Կայուն զարգացման տեսությունը ուսումնասիրում է հասարակություն-բնություն բարդագույն համակարգը, ուստի պետք է հիմնվի հասարակական և բնական բոլոր գիտությունների վրա:

Այստեղից էլ բխել է մարտահրավերը կրթության նկատմամբ՝ ձևավորել համալիր մոտեցման վրա հիմնված կրթական համակարգ: Այդ դերակատարությանը զգալիորեն նպաստեց ՄԱԿ-ի հռչակած «Հանուն կայուն զարգացման կրթության (ՀԿԶԿ) 2005-2014 թթ. տասնամյակը», որի ձևավորման հիմքում Էկոլոգիական կրթությունն էր, իսկ կարևորագույն առաքելություններից մեկը՝ նպաստել բնակչության շրջանում Էկոլոգիական մշակույթի զարգացմանը: 2014 թ. ՀԿԶԿ տասնամյակը ավարտվեց, սակայն ՄԱԿ-ի «Ռիո+20» վեհաժողովը իր «Ապագան, որը մենք ցանկանում ենք» եզրափակիչ փաստաթղթում կոչ արեց երկրներին շարունակել և ընդլայնել այդ ուղղությամբ իրականացվող ծրագրերը:

Իրագեկման տեսանկյունից կարևոր դեր ունի Երկրի հրովարտակը, որը ՅՈՒՆԵՍԿՕ-ն 2003 թ. ճանաչեց որպես կարևոր միջոց ՀԿԶԿ համակարգում:

Այն համարվում է կայուն զարգացման էթիկական նորմերի համակարգ, որի հիմնական սկզբունքներն են.

- հարգել Երկիրը և կյանքը իր ողջ բազմազանությամբ.
- հոգ տանել կենդանի համակեցության մասին հասկացողությամբ, կարեկցանքով և սիրով.
- կառուցել արդար, սոցիալապես ինտեգրացված, կայուն և խաղաղ ժողովրդավարական հասարակություն.
- պահպանել Երկրի անձեռնմխելիությունն ու գեղեցկությունը ներկա և ապագա սերունդների համար:

Կարելի է փաստել, որ ՀՀ բարձրագույն կրթության համակարգում քննարկվող ոլորտում, հատկապես ՀԿՉԿ ասպարեզում, դրական փորձ է կուտակվել, ինչը նշվել է նաև ՄԱԿ-ի հրատարակություններում: Ցավոք, նույնը հնարավոր չէ ասել ՀՀ հանրակրթության համակարգի մասին:

Համաշխարհային պրակտիկայում ներկայումս առանձնացվում են հանրակրթական Էկոլոգիական կրթության հետևյալ երեք մոդելները.

- **միառարկայական`** ներդրվում է Էկոլոգիական ուղղվածության մեկ ինտեգրված ուսումնական դասընթաց.
- **բազմառարկայական`** իրականացվում է ավանդական ուսումնական դասընթացների Էկոլոգայնացում.
- **խառը`** ներդրվում է Էկոլոգիական ուղղվածության նոր դասընթաց, միաժամանակ Էկոլոգայնացվում են ավանդական դասընթացները:

Առավել հաճախ նախապատվությունը տրվում է «խառը» մոդելին, որի օրինակները կարելի է տեսնել մի շարք երկրներում՝ Ավստրիա, Գերմանիա, Մեծ Բրիտանիա, Բելգիա, Սկանդինավյան երկրներ, ԱՄՆ: Այս երկրներում ուսուցանվում են առանձին «Էկոլոգիա», «Շրջակա միջավայր» դասընթացներ, իսկ այլ առարկաների ուսումնական ծրագրերում ներառվում են բնապահպանական թեմաներ: Բազմակողմանի Էկոլոգիական կրթության մեծ փորձ ունեն նաև Կանադան, Շվեդիան և Ճապոնիան: Աշխարհի 60 երկրում ստեղծվել են «Էկոլոգիական» կամ «կանաչ» դպրոցների ցանցեր, որոնց առընթեր գործում են աջակցող ռեսուրս կենտրոններ կամ կանաչ գրասենյակներ, և բազմաթիվ բնապահպանական նախագծեր են իրականացվում կայուն զարգացման համատեքստում:

ՀՀ հանրակրթությունը որդեգրել է երկրորդ՝ բազմաառարկայական մոտեցումը, սակայն միջազգային փորձը ցույց է տալիս, որ արդյունքի կարելի է հասնել միայն «խառը» տարբերակի պարագայում: Մեր դպրոցական ուսումնական պլանում բացակայում է մեկ միասնական «Էկոլոգիա» առարկան, որի համակարգված և շարունակական ուսուցումը մեծապես կնպաստեր Էկոլոգիական կրթության կազմակերպման արդյունավետության բարձրացմանը: Ողջունելի է, որ ՀՀ կառավարության 2018-2022 թթ. 5-ամյա ծրագրում նախատեսված է «Էկոլոգիա» առարկայի ներառումը ՀՀ հանրակրթության պարտադիր առարկաների ցանկում: Կարևոր է նաև, որ այդ առարկան կայուն զարգացման հիմունքների վերաբերյալ⁸⁰ նույնպես տեղեկատվություն ընդգրկի:


80. Стратегия ЕЭК ООН для образования в интересах устойчивого развития. Принята на совещании в Вильнюсе 17-18 марта 2005 г. Издание Экономического и Социального совета ООН 23 марта 2005 г. www.unece.org; Хартия Земли, <https://earthcharter.org/>; Хуррамов И.А., Экологическое образование и воспитание за рубежом. / ж. Молодой ученый N11 (46), 2012.; Education for Sustainable Development in Canadian Faculties of Education. Canada Education for Sustainable Development Working Group. May, 2012, https://www.iisd.org/sites/default/files/publications/esd_canadian_faculties.pdf; Партнерская сеть школ устойчивого развития: межрегиональное сотрудничество и устойчивые изменения. Монография. Минск, 2014; К.С. Даниелян, Комплексное, междисциплинарное образование в интересах устойчивого развития – ключевой инструмент имплементации и реализации Целей устойчивого развития. // Сборник материалов 2-го Международного симпозиума “Образование в интересах устойчивого развития для всех поколений – социальный договор”. 6-7 декабря 2018. Минск, БГПУ, стр. 16-18; К.Даниелян, С.Косян, Л.Нерсисян, Экологическое образование как базовый компонент в процессе перехода к устойчивому развитию. // Научное издание АГПУ. «Проблемы психологии и педагогики», 2018, № 1. стр. 58-73; Karine Danielyan, Tatevik Pogosyan, Sirine Kosyan. On Moral Aspect of Sustainable Development Theory and Practice, WISDOM 2(7), Yerevan 2016, pp. 35-43:

ԿԱՅՈՒՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

Արդի քաղաքակրթության զարգացման՝ ՄԱԿ-ի բոլոր պետությունների կողմից ընդունված պաշտոնական դոկտրինը⁸¹ կայուն (ներդաշնակ, հավասարակշռված, հարատև) զարգացման տեսությունն է: Կայուն զարգացումը այնպիսի զարգացում է, որը ներկա և հաջորդ սերունդներին երաշխավորում է պատշաճ, հնարավորինս հավասար մեկնարկային պայմաններ իրենց ընդունակությունները դրսևորելու և կենսական կարիքները բավարարելու համար: Կայուն զարգացումը հիմնվում է այնպիսի տնտեսության վրա, որը մարդու իրավունքները պաշտպանող ժողովրդավարական հասարակության մեջ զուգորդվում է էկոլոգիական անվտանգության և սոցիալական արդարության սկզբունքների հետ:

Տնտեսական, սոցիալական և էկոլոգիական առաջնայնությունների այդ ներդաշնակեցումը արտացոլված է Պատկեր 5-ում:

81. Earth Summit. Agenda 21 – The United Nations Programme of Action from Rio; Rio Declaration on Environment and Development. UNCED, Rio-de-Janeiro, UNDPI, N-Y, 1997; The World Summit on Sustainable Development 2002 (“Rio+10”), Johannesburg, 26 August- 4 September 2002, <http://earthsummit2002.org>; Rio+20 United Nations Conference on Sustainable Development. Rio de Janeiro, Brazil, 20–22 June 2012, UNDPI, <https://sustainabledevelopment.un.org/rio20>; Резолюция 66/288, принятая Генеральной Ассамблеей ООН. 66-ая сессия, пункт 19 повестки дня. Приложение. «Будущее, которое мы хотим» (итоговый документ Саммита ООН «Рио+20»). 27 июля 2012, <https://sustainabledevelopment.un.org/rio20>; Transforming Our World: The 2030 Agenda for Sustainable Development. The General Assembly 70/1 Resolution, 21 October 2015, N-Y, <http://www.unfpa.org/resources/transforming-our-world>; Կարինե Դակիեյան, Լիլիթ Սարգսյան, Տիգրան Սարգսյան. Կայուն զարգացման տեսությունն ու պրակտիկան (Համաշխարհային գործընթացը և Հայաստանը), Ուսումնական ձեռնարկ բուհերի համար, UNDP, ՀՊՄՀ, ՀԿՄՁ ասոցիացիա, Երևան, 2013 թ., Հայեցակարգ Հայաստանի Հանրապետությունում ՄԱԿ-ի «Ռիո+20» զագաթաժողովի հանձնարարականների իրականացման ռազմավարության՝ «Մինչև 2030 թ. կայուն զարգացման օրակարգ» համաշխարհային ծրագրի համատեքստում, ՀՀ կառավարություն, UNDP, EU, GEF, Երևան, 2016:



Պատկեր 5. Տնտեսական, սոցիալական և էկոլոգիական առաջնայնությունների ներդաշնակեցումը կայուն զարգացման համակարգում⁸²

Վերոհիշյալ սահմանումը ենթադրում է նաև կենսաբազմազանության, լանդշաֆտային և էթնոմշակութային բազմազանության պահպանման սկզբունքները: Կայուն զարգացումը հակիրճ կարելի է բնութագրել որպես զարգացման տնտեսական, էկոլոգիական և սոցիալական գերակայությունների միջև փոխհամաձայնություն (լավագույն դեպքում) կամ փոխզիջում (վատագույն դեպքում) ապահովելու ձգտում:

ՄԱԿ-ի մակարդակով գլոբալ էկոլոգիական հիմնախնդիրների և սպառնացող էկոլոգիական ճգնաժամի վերաբերյալ առաջին քննարկումը եղավ 1972 թ. Ստոկհոլմում: Այնուհետև 1992 թ. Ռիո-դե-ժանեյրոյում տեղի ունեցավ «Երկիր մոլորակ» շրջակա միջավայրի և զարգացման գագաթաժողովը, որը որպես կայուն զարգացման համաշխարհային ծրագիր ընդունեց «21-րդ դարի օրակարգը»: Ապա 2002 թ. Յոհաննեսբուրգում տեղի ունեցավ «Ռիո+10», իսկ 2012 թ. դարձյալ Ռիո-դե-ժանեյրոյում «Ռիո+20» կայուն զարգացման ՄԱԿ-ի համաշխարհային գագաթաժողովները, որոնք ամփոփեցին երկրների և միջազգային կազմակերպությունների կողմից իրականացված աշխատանքը և ընդունեցին նոր, ընդլայնված ծրագրեր: Եվ վերջապես, 2015 թ. օգոստոսին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի նստաշրջանում 193 երկիր համաձայնության եկան կայուն զարգացման 17 նպատակների շուրջ: Կայուն զարգացման նպատակների ամբողջական ցանկը ներկայացված է Պատկեր 6-ում:

82. Աղբյուր՝ «Կայուն զարգացման տեսությունն ու պրակտիկան (Համաշխարհային գործընթացը և Հայաստանը)», Երևան, 2013:



ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ



Պատկեր 6. ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակները⁸³

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՈՒՄ ԶՅԿ-ՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎԿԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԱՆ

Հայաստանի բնապահպանական հիմնախնդիրները օրհասական են դարձել ողջ հասարակության համար, այդ իսկ պատճառով դրանց կանխարգելման և լուծման գործընթացում անհրաժեշտ է առավելագույնս մոբիլիզացնել քաղաքացիական հասարակության կազմակերպություններին (ԶՅԿ): Որպես առավելագույն ներգրավվածություն ապահովող գործընթաց կարող է դիտարկվել ջատագովումը: **Չատագովումը (աղվովացիա)** տարբեր ֆինանսական և արդյունաբերական խմբերի, հասարակական և էթնիկական խմբերի շահերի առաջմղման գործընթաց է՝ հստակ ձևակերպված նպատակներին հասնելու համար⁸⁴:

ԶՅԿ-ների կողմից բնապահպանական հիմնախնդիրների կանխարգելման

83. Կայուն զարգացման նպատակների մասին ավելի մանրամասն տեղեկատվության համար այցելե՛ք ՄԱԿ-ի Հայաստանյան ներկայացուցչության կայքէջ՝ <http://un.am/hy/p/sdgs-in-general>

84. Что такое лоббирование и чем оно отличается от коррупции?, ред. Uteka.ua, 28.03.2018, <https://uteka.ua/publication/news-14-delovye-novosti-36-chto-takoe-lobbirovanie-i-chem-ono-otlichaetsya-ot-korruptcii>

կամ ցանկալի ուղղվածությամբ լուծումներ տալու նպատակով ջատագովության քարոզարշավի փուլերն են՝

1. Նախապատրաստական փուլ.
2. ուղղակի կամ անուղղակի ջատագովում.
3. արդյունքների ամփոփում և գնահատում.
4. տրամաբանական շարունակության մշակում:

1. Նախապատրաստում

- տեղեկատվության հավաքագրում, բնապահպանական հիմնախնդրի խորքային վերլուծության իրականացում.
- քննարկվող հիմնախնդիրների մասնագետների հետ կլոր սեղանների/ սեմինարների կազմակերպում.
- շահագրգիռ կողմերի քարտեզագրում.
- ջատագովման թիրախ կառույցների հետ երկխոսության նախապատրաստում.
- նպատակի և հավանական փոխզիջումների հստակեցում.
- ոլորտային որոշում կայացնողների թիրախավորում և վերջիններիս հետ հանդիպումների և քննարկումների նախապատրաստում:

2. Բուն ազդեցություն կամ ջատագովում, որն իր հերթին ստորաբաժանվում է ուղղակի կամ անուղղակի ջատագովման

I. Ուղղակի ջատագովում

- դեմառդեմ հանդիպումներ.
- ՀՀ Ազգային ժողովում լսումներին և քննարկումներին ակտիվ և նախապատրաստված մասնակցություն.
- համապատասխան ոլորտային օրենսդրական փոփոխությունների մշակում և ներկայացում տեղական և միջազգային փորձի կիրառմամբ.
- ոլորտային թափանցիկություն ապահովող մեխանիզմների մշակում և ներկայացում,

- ՀՀ պետական բյուջեի միջնաժամկետ ծրագրային ծախսերի քննարկումներին ակտիվ և նախապատրաստված մասնակցություն.
- ոլորտային հանձնաժողովներում ակտիվ և նախապատրաստված մասնակցություն:

II. Անուղղակի քառագույն

- հասարակության լայն զանգվածների տեղեկացում.
- ՉԼՄ-ների, հեռուստատեսային և ռադիոհաղորդումների, գովազդի կամ տեղեկատվական վահանակների օգտագործում.
- «Թաուն Հոլ»⁸⁵ և «Չաթամ հաուս»⁸⁶ ձևաչափով հանդիպումների կազմակերպում.
- կրթական միջոցառումների կազմակերպում՝ որոշում կայացողների և հասարակության լայն զանգվածների համար՝ ըստ թիրախային հիմնախնդրի.
- ստորագրահավաքների կազմակերպում և հանրային միջոցառումների անցկացում.
- նպատակին հասնելու համար առցանց հարթակների կիրառում.
- միջազգային և այլ նմանատիպ կառույցների ներգրավում հիմնախնդրի լուծմանն ուղղված քայլերում:

3. Արդյունքների ամփոփում և գնահատում

- Արդյոք հասել ենք նպատակին, թե՞ ոչ:
- Նպատակին հասնելու համար նախապես ծրագրված ռեսուրսները բավականացրե՞լ են, թե՞ եղել է գերաճախս կամ խնայողություն:
- Արդյունքներին հասնելու համար գործողությունների ուժեղ և թույլ կողմերի գնահատում, SWOT վերլուծություն:

85. Մանրամասների համար տես [How to Organize a Town Hall Meeting: A Planning Guide, https://guideinc.org/wp-content/uploads/2015/07/Organizing-a-Town-Hall-Meeting.pdf](https://guideinc.org/wp-content/uploads/2015/07/Organizing-a-Town-Hall-Meeting.pdf)

86. Այս ձևաչափի վերաբերյալ մանրամասների համար տես [Chatham House Rule, Chatham House, https://www.chathamhouse.org/chatham-house-rule](https://www.chathamhouse.org/chatham-house-rule)

4. Տրամաբանական շարունակության մշակում

- Եթե արդյունքները բավարար են, ապա, որպես դրական փորձ, այն պետք է կիրառվի և կատարելագործվի, իսկ եթե անբավարար, ապա պետք է գտնվեն լուծման ուղիներ:
- Համեմատական վերլուծության արդյունքում պետք է դնել նոր, նախորդից բխող նպատակներ և թիմակիցների հետ տրամաբանական քայլերի միջոցով հասնել հաջորդ թիրախին:



ՕԳՏԱԿԱՐ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Անտառային ոլորտի Էկոհամակարգերի և կենսաբազմազանության տնտեսական նշանակության (TEEB) նախնական ուսումնասիրություն, Երևան 2014, http://www.enpi-fleg.org/site/assets/files/1684/scoping_study_of_economic_significance_-_arm.pdf
2. Կիսոտյի արձանագրություն, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=24772>
3. Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի ներքո Հայաստանի երրորդ ազգային հաղորդագրություն, Երևան, 2015, http://www.nature-ic.am/wp-content/uploads/2013/10/3.Armenias-TNC_2015-ARM.pdf
4. Կլիմայի փոփոխությունը, մեթոդական ուղեցույց, Կլիմայի փոփոխության հարցերի մասնագիտական դասախոսությունների ծրագիր Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում դասավանդող մասնագետների համար, Երևան, 2007, <http://www.nature-ic.am/res/publications/guides/Methodical%20Textbook.pdf>
5. Կլիմայի փոփոխությունը, Ուսումնական ձեռնարկ Հայաստանի Հանրապետության ԲՈՒՀ-երի ուսանողների համար, <http://www.nature-ic.am/Content/announcements/7329/Climate-Change-Tutorila.pdf>
6. Հայաստանի ազգային հզորությունների կարիքների գնահատում գլոբալ բնապահպանական կառավարման համար, Երևան, 2004, http://www.nature-ic.am/Content/announcements/7334/NCSA_REPORT_ARM.pdf

7. Հայաստանի Հանրապետության ջերմոցային գազերի ազգային կադաստրի հաշվետվություն 2016 թ., Երևան 2019, <http://www.nature-ic.am/Content/announcements/10603/GHG%20Inventory%202016.pdf>
8. Հայաստանի Հանրապետությունում «ՀԵՏ ՌԻՈ+20» գործընթացի իրականացմանն ընդառաջ, Կ.Դանիելյան, Լ.Սարգսյան, Երևան, 2015:
9. Հայեցակարգ Հայաստանի Հանրապետությունում ՀՄԱԿ-ի «ՌԻՈ+20» գազաթնաժողովի հանձնարարականների իրականացման ռազմավարություն՝ «Մինչև 2030 թ. կայուն զարգացման օրակարգ» համաշխարհային ծրագրի համատեքստում, մշակվել է ՀՀ վարչապետի 09.12.2013 թ. N 1147-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի կողմից, Երևան 2016, <http://www.sgp.am/res/Publications/CD/Strategy%20Concept.pdf>
10. Մոնրեալի արձանագրություն, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=76867>
11. Տեխնոլոգիական կարիքների գնահատում կլիմայի փոփոխության մեղմման համար, Երևան, 2016, <http://www.nature-ic.am/Content/announcements/10574/TNA%20Mitigation%20ARM%20Final%20Report.pdf>
12. Փարիզյան համաձայնագիր, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=115504>
13. «ГЕО ГЮМРИ» оценка состояния окружающей среды города Гюмри с 2005 по 2008 годы, https://gridarendal-website-live.s3.amazonaws.com/production/documents/:s_document/211/original/geo_gumry_final_russian_low_resolution_2010-02-17.pdf?1486722310
14. К.Даниелян, Б.Габриелян, С.Минасян, Л.Чилингарян, Г.Мелконян и др., Интегральная оценка экологического состояния озера Севан (GEO-Lake Sevan), Ереван 2012, <https://ecolur.org/files/uploads/pdf/lakesevaninvestigation.pdf>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Վահրամ Թոթմաջյան, Արամ Մանուկյան

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ըստ «Կրթության մասին» ՀՀ օրենքի՝ Հայաստանի Հանրապետության (ՀՀ) կրթության համակարգը պետական կրթական չափորոշիչների, պետական հավատարմագրման չափանիշների, կրթության հաջորդականությունն ապահովող տարբեր մակարդակի և ուղղվածության կրթական ծրագրերի, ուսումնական հաստատությունների և կրթության կառավարման մարմինների փոխկապակցված ամբողջություն է⁸⁷: Պետությունը անհրաժեշտ պայմաններ է ստեղծում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող քաղաքացիների զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթություն ստանալու և սոցիալական հարմարվածությունն ապահովելու նպատակով:

Հայաստանի կրթական համակարգը ներառում է.

- նախադպրոցական կրթությունը.
- ընդհանուր միջնակարգ կրթությունը՝ կազմված տարրական, միջին կամ հիմնական և ավագ դպրոցից.

87. ՀՀ օրենքը «Կրթության մասին», 14.04.1999, հոդված 8:

- Նախնական մասնագիտական, միջին մասնագիտական և բարձրագույն կրթությունը.
- հետբուհական կրթությունը.
- մասնագետների վերաորակավորման և որակավորման բարձրագույն հաստատությունները:

Տվյալ նյութը ներկայացնում է ՀՀ կրթության ոլորտի օրենսդրությունը, ոլորտում գործող առանցքային պետական կառույցները, նախադպրոցական կրթության ու հանրակրթության վերաբերյալ հիմնական հասկացությունները, առկա միտումները: Նյութում առավել մեծ տեղ է զբաղեցնում հանրակրթությունը՝ որպես շահառուների առավել մեծ քանակ ունեցող կրթական համակարգ, որտեղ կրթությունը պարտադիր է բոլորի համար: Առանձին անդրադարձել ենք նաև դասագրքերի մշակման գործընթացին և ուսուցիչների իրավունքներին ու պարտականություններին՝ համարելով, որ այս ոլորտներում բազմաթիվ անելիքներ կան և քաղաքացիական հասարակությունը կարող է հետաքրքրված լինել իր ներդրումն ունենալ այս գործընթացներում:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ կրթության ոլորտը կարգավորվում է ՀՀ սահմանադրությամբ, համապատասխան օրենքներով, այլ նորմատիվ իրավական ակտերով:

ՀՀ սահմանադրության 38-րդ հոդվածն ամրագրում է կրթության իրավունքը.

- Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Պարտադիր կրթության ծրագրերը և տևողությունը սահմանվում են օրենքով: Պետական ուսումնական հաստատություններում միջնակարգ կրթությունն անվճար է:
- Յուրաքանչյուր ոք օրենքով սահմանված դեպքերում և կարգով ունի մրցութային հիմունքներով պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում անվճար կրթություն ստանալու իրավունք:
- Բարձրագույն ուսումնական հաստատություններն օրենքով սահմանված շրջանակներում ունեն ինքնակառավարման իրավունք, ներառյալ ակադեմիական և հետազոտությունների ազատությունը⁸⁸:

88. ՀՀ սահմանադրություն, 06.12.2015 թ. փոփոխություններով, հոդված 38:

Կրթական ոլորտին առնչվող հիմնական օրենքներն են.

1. ՀՀ օրենքը «Կրթության մասին»
2. ՀՀ օրենքը «Նախադպրոցական կրթության մասին»
3. ՀՀ օրենքը «Հանրակրթության մասին»
4. ՀՀ օրենքը «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին»
5. ՀՀ օրենքը «Երեխայի իրավունքների մասին»
6. ՀՀ օրենքը «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին»
7. ՀՀ օրենքը «Լեզվի մասին»
8. ՀՀ օրենքը «Կրթության պետական տեսչության մասին»

«Կրթության մասին» ՀՀ օրենքը սահմանում է կրթության ոլորտում օրենսդրական խնդիրները: Դրանք հետևյալն են.

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ սահմանադրությամբ ամրագրված կրթության իրավունքի ապահովումը և պաշտպանությունը.
2. իրավասության բաշխումն ու տարանջատումը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների միջև.
3. կրթության համակարգի գործառնության և զարգացման համար իրավական երաշխիքների և մեխանիզմների ստեղծումը.
4. իրավաբանական և ֆիզիկական անձանց իրավունքների, պարտականությունների, պատասխանատվության սահմանումը և փոխհարաբերությունների իրավական կարգավորումը:

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը կրթության ոլորտի հիմնական պատասխանատու պետական կառույցն է, որի նպատակները ներառում են կրթության համակարգի բնականոն գործունեության ապահովումը և կրթության պետական քաղաքականության նպատակների և առաջնային ուղղությունների սահմանումն ու իրականացումը:

Կրթության ազգային ինստիտուտը պատասխանատու էր կրթության կառավարման համակարգի ռազմավարության, կրթության բովանդակության բարեփոխումների հիմնադրույթների և դրանց համապատասխան՝ պետական կրթական չափորոշիչների, ուսումնական պլանների, հիմնական և լրացուցիչ հանրակրթական և մասնագիտական կրթության պետական ծրագրերի մշակման համար: Ինստիտուտը կազմակերպում էր նաև դասագրքերի, ուսումնամեթոդական ձեռնարկների, ուղեցույցների, այլ ուսումնական գրականության ստեղծման աշխատանքները, հրատարակում կրթական համակարգի պաշտոնական տեղեկագրեր, փորձնական դասագրքեր և ձեռնարկներ⁸⁹: 2019 թ. ՀՀ կառավարությունը նախաձեռնեց Կրթության ազգային ինստիտուտը լուծարելու և փոխարենը կրթության ընդհանուր ծրագրային հարցերով զբաղվող նոր կառույց ստեղծելու գործընթաց⁹⁰: Կրթական ծրագրերի կենտրոնը իրականացնում է ՀՀ կրթության ոլորտում որակի, համապատասխանության, հասանելիության և արդյունավետության բարելավմանն ուղղված ծրագրեր⁹¹:

Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնի առաքելությունն է նպաստել Հայաստանի Հանրապետության ինտեգրմանը ընդհանուր եվրոպական կրթական տարածաշրջանին՝ ապահովելով որակավորումների արդարացի և թափանցիկ ճանաչումը՝ նպաստելով շարժունությանը դեպի Հայաստան և արտերկիր⁹²:

«Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» (ԿՏԱԿ) պետական ոչ

89. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Համակարգի կառույցները. <http://edu.am/index.php/am/about/view/75>

90. Կրթության ազգային ինստիտուտի փոխարեն կստեղծվի նոր կառույց, 14.02.2019, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն. <http://edu.am/index.php/am/news/view/7408>

91. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Համակարգի կառույցները, <http://edu.am/index.php/am/about/view/75>

92. Աղբյուր՝ Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնի կայքէջ. http://www.armenic.am/mer_masin.php?page=history

առևտրային կազմակերպությունը (ՊՈԱԿ) ստեղծվել է ՀՀ հանրակրթական դպրոցներում տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների ներդրման ու դրա շարունակականության ապահովման նպատակով⁹³:

ՆԱԽԱԴԱՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցական կրթությունը Հայաստանում շարունակական կրթության համակարգի սկզբնական բաղկացուցիչ մասն է: Նախադպրոցական կրթությունն ամբողջական գործընթաց է, որն ուղղված է՝

- ա) նախադպրոցական տարիքի երեխայի բազմակողմանի զարգացման ապահովմանը՝ նրա հակումներին, ընդունակություններին, կարողություններին, անհատական, հոգեկան և ֆիզիկական առանձնահատկություններին համապատասխան:
- բ) նախադպրոցական տարիքի երեխայի մեջ վարվելակերպի տարրական նորմերի ձևավորմանը⁹⁴:

Նախադպրոցական կրթության հիմնական նպատակներն են.

- երեխայի ֆիզիկական, բարոյական և հոգեկան առողջության պահպանումը և ամրապնդումը:
- նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, դպրոցական ուսուցմանը նախապատրաստումը:

Նախադպրոցական կրթության ծրագրերի իրականացման գործում գլխավոր դերը պետությունը վերապահում է ընտանիքին՝ պարտավորվելով պայմաններ ստեղծել ընտանիքում երեխաների համակողմանի զարգացման և խնամքի կազմակերպման համար: Ընտանիքին աջակցելու համար պետությունը ստեղծում է նախադպրոցական հիմնարկներ՝ մսուրներ (2-3 տարեկան երեխաների համար), մանկապարտեզներ (3-6 տարեկանների համար), մսուր-մանկապարտեզներ (միացյալ):

Նախադպրոցական հաստատությունն իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն կամ դրա ստորաբաժանում է, որն իրականացնում է նախադպրոցական կրթական ծրագիր և ապահովում է

93. Աղբյուր՝ Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի կայքէջ. <http://ktak.am/index.php/am/about/view/1>

94. «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք, Երևան, 15.11.2005 թ.:

Նախադպրոցական տարիքի յուրաքանչյուր երեխայի զարգացման, ուսուցման և դաստիարակության, ինչպես նաև խնամքի ու հսկողության, առողջության պահպանման ու ամրապնդման համար անհրաժեշտ միջավայր:

Նախադպրոցական կրթության համակարգը ներառում է՝

- ա) նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչները, հիմնական և լրացուցիչ կրթական ծրագրերը.
- բ) նախադպրոցական ուսումնական հաստատությունները, ինչպես նաև այն ուսումնական հաստատությունները (կրթահամալիրները), որոնք իրականացնում են նաև նախադպրոցական կրթական ծրագրեր.
- գ) նախադպրոցական կրթության կառավարման մարմինները, դրանց ենթակայության տակ գտնվող համապատասխան կազմակերպությունները.
- դ) ընտանիքը:

Նախադպրոցական հաստատությունների մեծ մասը Հայաստանում պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ են, որոնք հիմնականում ենթարկվում են տեղական ինքնակառավարման մարմիններին՝ համայնքապետարաններին:

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Կրթության բնագավառում ամենաշատ ուղղակի և անուղղակի շահառուներ ունեցող ոլորտը հանրակրթությունն է: 2018 թ. Հայաստանի 1409 դպրոցում սովորել է ավելի քան 382000 աշակերտ, որոնց սպասարկում է շուրջ 38000 մանկավարժական աշխատող (ներառված չէ վարչական և սպասարկող անձնակազմի թիվը)⁹⁵:

Հանրակրթությունն անձի ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որն իրականացվում է նախադպրոցական, տարրական, հիմնական, միջնակարգ կրթության հիմնական և լրացուցիչ ծրագրերով: Հանրակրթության գլխավոր նպատակը երեխաների, սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացումն է, նրանց պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորումը:

95. ՀՀ վիճակագրական կոմիտե, Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2018 թվականին, 2019. https://www.armstat.am/file/article/soc_vich_2018_2.pdf

Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության հենքը ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումն է: Հայաստանի Հանրապետությունն ապահովում է կրթության ժողովրդավարական և աշխարհիկ բնույթը: Հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է⁹⁶:

Համաձայն հանրակրթության պետական կրթակարգի՝ Հայաստանում միջնակարգ ընդհանուր կրթությունն իրականացվում է 12-ամյա տևողությամբ եռաստիճան միջնակարգ հանրակրթական դպրոցում՝ հետևյալ հաջորդական աստիճաններով՝

ա) տարրական դպրոց՝ 4 տարի (1-4-րդ դասարաններ).

բ) միջին դպրոց՝ 5 տարի (5-9-րդ դասարաններ).

գ) ավագ դպրոց՝ 3 տարի (10-12-րդ դասարաններ):

Տարրական դպրոցի հիմնական նպատակը սովորողի մտավոր, հոգևոր և ֆիզիկական կարողությունների, լեզվամտածողության, գրագիտության, տրամաբանության հիմքերի և աշխատանքային նախնական հմտությունների ձևավորումն է: Տարրական դպրոցն ապահովում է ուսումնառության անհրաժեշտ պայմաններ և միջին դպրոցում ուսումը շարունակելու համար պահանջվող մակարդակ:

Միջին դպրոցի հիմնական նպատակը մարդու, բնության և հասարակության մասին գիտելիքների, դրանք կյանքում կիրառելու կարողությունների և հմտությունների, բարոյական և հոգևոր արժեքների յուրացման այնպիսի մակարդակի ապահովումն է, որն անհրաժեշտ է սովորողներին ավագ դպրոցում կամ մասնագիտական հաստատությունում ուսումը շարունակելու, ինչպես նաև տարիքին համապատասխան աշխատանքային գործունեություն իրականացնելու համար:

Ավագ դպրոցի հիմնական նպատակը սովորողի մասնագիտական կրթություն ստանալու, ինքնուրույն կյանքի համար անհրաժեշտ գիտելիքների, կարողությունների և հմտությունների ապահովումն է:

96. ՀՀ օրենքը «Հանրակրթության մասին», 10.07.2009 թ.:

Հանրակրթական ուսումնական հաստատությունում կրթական գործընթացի մասնակիցներն են.

- սովորողը.
- սովորողի ծնողը.
- ուսուցիչը և մանկավարժական այլ աշխատողներ.
- վարչական աշխատողները:

խորհրդում և խորհրդակցական մարմիններում ընդգրկված՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները և այլ անձինք:

Հանրակրթության պետական չափորոշիչը

Հանրակրթության պետական չափորոշիչը ներառում է հանրակրթական հիմնական ծրագրերի՝ ուսումնական բնագավառներն ու կրթության բովանդակության բաղադրիչները, շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները՝ ըստ կրթական աստիճանների և ուսումնական բնագավառների, հենքային ուսումնական պլանը և առարկայացանկերի ձևավորման հիմնական սկզբունքները, սովորողների գնահատման ձևերը, սանդղակը, հաշվառման կարգը: Հանրակրթության պետական չափորոշիչի պահանջները պարտադիր են կրթական ծրագրերի և ուսումնական հաստատությունների համար: Հանրակրթության պետական չափորոշիչը հաստատում է ՀՀ կառավարությունը: Ներկայումս հանրակրթության նոր չափորոշիչներ են մշակվում համապատասխան աշխատանքային խմբերի կողմից:

Հենքային ուսումնական պլանը սահմանում է հանրակրթական հիմնական ծրագրերի նորմատիվային ծավալը՝ ըստ ուսումնական տարիների՝ արտահայտված ուսումնական պարապմունքների ժամաքանակով (դասաժամերով), ներառյալ՝ ուսումնական բնագավառներին հատկացվող պարտադիր նվազագույն ժամաքանակները⁹⁷: Հենքային ուսումնական պլանի հիմքով, կրթության լիազոր մարմնի կողմից հաստատվում և

97. ՀՀ կառավարություն որոշում N 439-Ն «Հանրակրթության պետական չափորոշիչի ձևավորման և հաստատման կարգը և հանրակրթության պետական չափորոշիչը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 27-ի N 771-Ն և հունիսի 17-ի N 900-ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին», 08.04.2010 թ.:

հանրակրթական ուսումնական հաստատություններին են ներկայացվում օրինակելի ուսումնական պլանները: Օրինակելի ուսումնական պլաններն ունեն երկու բաղադրիչ՝ պետական և դպրոցական:

Չանրակրթական ուսումնական հաստատության տեսակները

Ուսումնական հաստատությունը, ըստ դրանում իրականացվող հանրակրթական հիմնական ծրագրերի, դասվում է հետևյալ տեսակների՝ հանրակրթական դպրոց, մասնագիտացված հանրակրթական դպրոց, հատուկ հանրակրթական դպրոց: Մասնագիտացված և հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեությունը և դրանց առանձնահատկությունները սահմանվում են օրենքով, դրանց կանոնադրություններով և իրավական այլ ակտերով: ՀՀ կառավարությունը, այլընտրանքային հանրակրթական ծրագրերին համապատասխան, կարող է ստեղծել այլ տեսակի ուսումնական հաստատություն: Այլ տեսակի ոչ պետական ուսումնական հաստատությունը կարող է ստեղծվել հիմնադրի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով:

Ըստ իրականացվող կրթական ծրագրերի աստիճանի տարբերակում են հետևյալ հանրակրթական ուսումնական հաստատությունները՝ 1) տարրական դպրոց (1-4-րդ դասարաններ), 2) միջին դպրոց (5-9-րդ դասարաններ), 3) հիմնական դպրոց (1-9-րդ դասարաններ), 4) ավագ դպրոց (10-12-րդ դասարաններ), 5) վարժարան (5-12-րդ դասարաններ), 6) միջնակարգ դպրոց (1-12-րդ դասարաններ)⁹⁸:

Չանրակրթական ուսումնական հաստատության կառավարումը

Ուսումնական հաստատության կառավարումն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով: Չանրակրթական դպրոցի կառավարման մարմիններն են հիմնադիրը, նախարարությունը, տարածքային կառավարման մարմինը և Երևանի քաղաքապետը, խորհուրդը, հանրակրթական դպրոցի տնօրենը: Ուսումնական հաստատության ընթացիկ գործունեության կառավարումն իրականացնում է ուսումնական հաստատության գործադիր մարմինը՝ տնօրենը, որն ընտրվում (նշանակվում) և ազատվում է (սրա լիազորությունները դադարում են) օրենսդրությամբ և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված դեպքերում և կարգով: Պետական ուսումնական հաստատությունն ունի կոլեգիալ կառավարման մարմին՝ խորհուրդ:

98. ՀՀ օրենքը «Չանրակրթության մասին», 10.07.2009 թ., հոդված 8:

Ուսումնական հաստատության կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական, ծնողական, աշակերտական, հոգաբարձուների խորհուրդներ: Հանրակրթական դպրոցում կարող են ձևավորվել խորհրդակցական կամ խորհրդատվական այլ մարմիններ: Աշակերտական խորհուրդը՝ ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան, անմիջականորեն աշակերտներին վերաբերող հարցերի մասին ազատորեն կարծիք է ներկայացնում հանրակրթական դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմիններին, խորհրդակցական ձայնի իրավունքով, մասնակցում է խորհրդի և մանկավարժական խորհրդի այն նիստերին (կամ հարցերի քննարկմանը), որտեղ քննարկվում են աշակերտներին անմիջականորեն վերաբերող հարցեր:

Կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի լիազորությունները սահմանվում են օրենքով և կանոնադրությամբ: Խորհրդում ներառված է ութ անդամ: Խորհրդի անդամի թեկնածուներ, ըստ նախարարության կողմից հաստատված խորհրդի ընտրության կարգի, առաջադրում են՝

1. մանկավարժական խորհուրդը.
2. ծնողական խորհուրդը.
3. տարածքային կառավարման մարմինը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը և տեղական ինքնակառավարման մարմինը⁹⁹:

Հանրակրթական դպրոցի տնօրենը չի կարող առաջադրվել դպրոցի խորհրդի կազմում:

Հանրակրթական դպրոցի խորհրդի լիազորություններն են՝

1. հիմնադրի սահմանած կարգով տնօրեն ընտրելը.
2. հանրակրթական դպրոցի ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի կարգը հաստատելը.

99. ՀՀ կրթության և գիտության նախարարի N 113-Ն հրաման «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 8-ի N 981-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին», 18.03.2010 թ.:

3. հոգաբարձուների խորհրդի կողմից ներկայացված նախահաշիվը, ինչպես նաև նպատակային ծրագրերը քննարկելը, որոնց քննարկումներին կարող է մասնակցել հոգաբարձուների խորհրդի լիազոր ներկայացուցիչը.
4. գույքի օտարման և (կամ) ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների վերաբերյալ տնօրենի ներկայացրած առաջարկությունները լսելը և դրանց հավանություն տալը.
5. հիմնադրի սահմանած կարգով հանրակրթական դպրոցի շահույթի տնօրինման հիմնական ուղղությունները և համամասնությունները սահմանելը և այլն¹⁰⁰:

Մանկավարժական աշխատողները

Ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկը, դրանց նկարագիրը, որակավորման տարակարգերը, աշխատանքի ընդունման, աշխատանքից ազատման, կենսաթոշակների նշանակման, բժշկական զննության կազմակերպման կարգերը սահմանում է ՀՀ կառավարությունը: Պետական ուսումնական հաստատությունում ուսուցչի թափուր տեղ առաջանալու դեպքում այն համալրվում է մրցութային հիմունքներով՝ համաձայն կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած մրցութի օրինակելի կարգի և ուսումնական հաստատության կանոնադրության, բացառությամբ նպատակային ուղեգրով մասնագիտական կրթություն ստացած թեկնածուի առկայության դեպքերի:

Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցիչը ունի հետևյալ պարտականությունները.

- պլանավորում և իրականացնում է սովորողների ուսուցումն ու դաստիարակությունը՝ հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչներին համապատասխան.
- ապահովում է կրթական ծրագրերի կատարումը, հանրակրթական առարկայական չափորոշիչներով ամրագրված գիտելիքների, կարողությունների և հմտությունների առնվազն պարտադիր նվազագույն

100. «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրություն, հաստատված ՀՀ կառավարության N 954-Ն որոշմամբ, 15.07.2010 թ.:

պահանջների յուրացումը սովորողների կողմից՝ կիրառելով դասավանդման արդյունավետ մեթոդներ և ժամանակակից տեխնոլոգիաներ.

- բացահայտում, դիտարկում, հետազոտում և գնահատում է երեխաների ուսումնառության ընթացքում նկատված կրթական կարիքները.
- նպաստում է սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորմանը, դաստիարակում հայրենասիրություն, ձևավորում պատշաճ վարքագիծ և վարվելակերպ.
- սովորողների մեջ զարգացնում է ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակություններ՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի անհատական կարողությունները.
- նպաստում է սովորողների մեջ ինքնակառավարման տարրերի ձևավորմանը.
- հարգում և պաշտպանում է սովորողի իրավունքներն ու ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը.
- հետևողականորեն կատարելագործում է իր առարկայական և մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները, իրականացնում ստեղծագործական և հետազոտական աշխատանքներ.
- համագործակցում է սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում.
- համագործակցում է գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով.
- մասնակցում է հաստատության մեթոդավարումների (առարկայական մասնախմբերի) աշխատանքներին.
- պահպանում է ուսումնական հաստատության կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջները և այլն¹⁰¹:

101. ՀՀ կառավարություն որոշում N 1391-Ն «Հայաստանի Հանրապետության ընդհանուր ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկը և նկարագրերը հաստատելու մասին», 14.10.2010 թ. (վերնագիրը խմբ. 10.11.11 N 1745-Ն):

Չանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի պաշտոնն զբաղեցնողը պետք է իմանա կրթական համակարգին առնչվող օրենքների այն դրույթները, որոնք վերաբերում են կրթության բնագավառին, կանոնակարգում են պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները և ընդգրկված են կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հաստատված՝ ուսուցչի վերապատրաստման հարցաշարերում: Չարկավոր է ծանոթ լինել նաև «Չայաստանի Չանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությանը, առարկայական չափորոշիչներին և իր պարտականություններին վերաբերող՝ նախարարության համապատասխան նորմատիվ ակտերին, մանկավարժության տեսությանը և մեթոդիկային, հոգեբանությանը, մինչբժշկական օգնության հիմունքներին, աշխատանքի անվտանգության, սովորողների կյանքի և առողջության պահպանման կանոններին:

Չանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա մանկավարժական համապատասխան որակավորում (բակալավրի, դիպլոմավորված մասնագետի, մագիստրոսի կրթական աստիճանով) կամ բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ¹⁰²:

Դասագրքերի գնահատման և երաշխավորման գործընթաց

Դասագրքերի ստեղծման, մրցույթի կազմակերպման, հաղթողների որոշման ընթացակարգը հիմնականում իրականացնում է «Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամը»: Դասագրքերի գնահատման և երաշխավորման գործընթացի առաջին փուլը տվյալ առարկայի գիտակարգով զբաղվող երկու ֆակուլտետներից գիտական համապատասխանության մասին տեղեկանքների ստացումն է: Այս փուլից հետո կազմակերպվում է դասագրքերի գնահատման գործընթացը, որը ներառում է երկու փուլ՝ բովանդակային գնահատում և ֆինանսական գնահատում:

Այս փուլերը հաղթահարելու դեպքում դասագրքերը ուղարկվում են փորձարկման, սակայն մինչ փորձարկման ուղարկվելը դասագրքերը պետք է երաշխավորվեն կրթական համապատասխան գերատեսչության կողմից (նախկինում այդ գերատեսչությունը Կրթության ազգային ինստիտուտն էր):

102. Նույն տեղում:

Ներկայումս աշխատանքներ են տարվում դասագրքերի գնահատմանը ուսուցիչներին մասնակից դարձնելու ուղղությամբ: Այդ նպատակով 2019 թ. մարտ ամսին «Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամի» կայքում տեղի ունեցավ դասագրքերի վարկանիշային փորձնական գնահատում, որին մասնակցել են միայն ուսուցիչները՝ պատասխանելով դասագրքերի վերաբերյալ առցանց հարցմանը¹⁰³: Միևնույն ժամանակ, Նախարարությունը հանրային քննարկման նպատակով հրապարակեց դասագրքերի նոր ցանկը և հրավիրեց մասնագիտական շրջանակի ներկայացուցիչներին, ծնողներին և սովորողներին՝ տասնօրյա ժամկետում կարծիքներ ուղարկել դասագրքերի վերաբերյալ¹⁰⁴:

Արհեստակցական կազմակերպություններ

ՀՀ գրեթե բոլոր հանրակրթական ուսումնական հաստատությունները, բարձրագույն ուսումնական հաստատություններն ունեն արհեստակցական կազմակերպություններ (բացառություն են կազմում Նախադպրոցական կրթություն իրականացնող հաստատությունները, որոնց մի մասում չկան արհեստակցական կազմակերպություններ): Այս կազմակերպությունների գործունեությունը միտված է գործատուի և (կամ) երրորդ անձանց մոտ ներկայացնելու մասնակիցների (անդամների) աշխատանքային, մասնագիտական, սոցիալ-տնտեսական շահերը և իրավունքները, համախմբելու ջանքերը հանուն աշխատանքային, սոցիալ-տնտեսական երաշխիքների պահպանման և ամրապնդման:

Արհեստակցական կազմակերպությունը հասարակական միավորում է, որը կամավորության սկզբունքով միավորում է տվյալ գործատուի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող աշխատողներին՝ նրանց աշխատանքային ու դրա հետ կապված սոցիալական և այլ շահերն ու իրավունքները ներկայացնելու և պաշտպանելու համար:

Այս ոլորտում ներկայումս ակտիվություն է նկատվում. ստեղծում են նոր արհեստակցական կազմակերպություններ, որոնք փորձում են միավորել կրթության և գիտության ոլորտի աշխատակիցներին, հանդես գալ իրավունքների պաշտպանությամբ, տարբեր Նախաձեռնություններով: Միայն վերջին շրջանում ստեղծվել են Հայաստանի Ամերիկյան Համալսարանի

103. Դասագրքերի վարկանիշային գնահատում. <https://dshh.am/դասագրքերի-նշտինգային-գնահատում-2>

104. Կարծիքներ վերահրատարակվող դասագրքերի վերաբերյալ, 10.04.2019, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն. <http://edu.am/index.php/am/events/view/2179>

աշխատակիցների, Մատենադարանի աշխատակիցների, «Կրթություն և համերաշխություն» արհեստակցական կազմակերպությունները:

Երկու և ավելի արհեստակցական կազմակերպությունները կարող են միավորվել՝ դառնալով արհեստակցական միություն: Արհեստակցական միության գործունեության հիմնական սկզբունքներն են.

- պետական մարմիններից, տեղական ինքնակառավարման մարմիններից, գործատուներից, քաղաքական, հասարակական և այլ կազմակերպություններից անկախությունը.
- արհեստակցական միություններին մասնակցելու (անդամակցելու) կամավորությունը.
- արհեստակցական միությունների իրավահավասարությունը.
- աշխատողի իրավունքների սահմանափակում թույլ չտալը՝ կապված նրա՝ արհեստակցական միության մասնակից (անդամ) լինելու հանգամանքի հետ¹⁰⁵:

Արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունը միավորում է մասնագիտական գործունեության որոշակի ոլորտում կամ հարակից ոլորտներում գործող արհեստակցական միությունների կեսից ավելին, որոնց անդամագրված են տվյալ ոլորտի առավելագույն թվով աշխատողներ: Արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունները, իրենց հերթին, միավորվում են արհեստակցական կազմակերպությունների հանրապետական միությունում:

«Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա» արհեստակցական կազմակերպությունների հանրապետական միության անդամ կազմակերպություններում մասնակցային քանակական առումով ամենամեծ թիվը կազմում են կրթության, գիտության ոլորտի աշխատակիցները:

105. ՀՀ օրենքը «Արհեստակցական միությունների մասին», 05.12.2000 թ., հոդված 3:



ՕԳՏԱԿԱՐ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրություն, հաստատված ՀՀ կառավարության N 954-Ն որոշմամբ, 15.07.2010, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=59815>
2. «Հայկական կրթական միջավայր» պորտալ, <https://www.armedu.am/index.php/am>
3. «Հայկական կրթական միջավայրի» պաշարների շտեմարան, <https://lib.armedu.am>
4. «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգ, հաստատված ՀՀ կրթության և գիտության նախարարի N 113-Ն հրամանով, 18.03.2010 <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=102255>
5. Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամի կայք, <https://dshh.am/>
6. Կրթական ծրագրերի կենտրոնի կայք, <http://www.cfep.am/hy/>
7. Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի կայք, <http://www.ktak.am>
8. Կրթության ազգային ինստիտուտի կայք, <http://www.aniedu.am/>
9. Կրթության խնդիրները 21-րդ դարում. Մաս 1 (Jam Session 35), Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, 31.05.2018, <https://epfarmeria.am/hy/video/Educational-issues-21-century-part-1>
10. Կրթության խնդիրները 21-րդ դարում. Մաս 2 (Jam Session 36), Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, 04.06.2018, <https://epfarmeria.am/hy/video/Education-Issues-in-21st-century-Part-2>
11. Կրթության ոլորտի հետազոտություններ, Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան, <http://www.osf.am/reports/education-reports/?lang=am>

12. Կրթության որակի ընկալումները, Հանրային քաղաքականության ինստիտուտ, 2017թ., <http://ipp.am/wp-content/uploads/2018/01/Research-on-Quality-of-education01.08.2017.pdf>
13. Հայաստանում կրթական համակարգի վերաբերյալ իրականացված հետազոտություններ և վերլուծություններ, Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն, <https://e-research.am/analysis/>
14. Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալու քննության կազմակերպման, անցկացման, ինչպես նաև հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) դադարեցման կարգ, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, <http://edu.am/index.php/am/documents/view/2081>
15. Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորման կարգ, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, <http://edu.am/index.php/am/documents/view/648>
16. ՀՀ կառավարություն որոշում N 1391-Ն «Հայաստանի Հանրապետության ընդհանուր ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկը և նկարագրերը հաստատելու մասին», 14.10.2010, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=122121>
17. ՀՀ կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիրը, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=69872>
18. ՀՀ հանրակրթական դպրոցներում ուսուցիչների աշխատանքային իրավունքների ուսումնասիրություն. Չեկույց, Մերի Երանոսյան, Ավետիք Իշխանյան, Գուրգեն Թորոսյան, Սիրվարդ Մամիկոնյան, Հայաստանի Հանրապետության կոմիտե, Երևան 2018 թ., http://armhels.com/wp-content/uploads/2018/12/Project1_Layout-1-New.pdf
19. ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների ցանկ, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, <http://edu.am/index.php/am/documents/view/2191>
20. ՀՀ օրենքը «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», 14.12.2004, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=103999>

21. ՀՀ օրենքը «Երեխայի իրավունքների մասին», 29.05.1996, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=120909>
22. ՀՀ օրենքը «Կրթության մասին», 14.04.1999, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=129432>
23. ՀՀ օրենքը «Կրթության պետական տեսչության մասին», 15.11.2005, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75491>
24. ՀՀ օրենքը «Հանրակրթության մասին», 10.07.2009, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=123598>
25. ՀՀ օրենքը «Նախադպրոցական կրթության մասին», 15.11.2005, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=90823>
26. ՀՀ օրենքը «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին», 08.07.2005, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=90706>

ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ, ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Լիլիթ Նապարյան

ՆԵՐԱՃՈՒԹՅՈՒՆ

Կրթությունը վճռորոշ դեր ունի անձի կայուն զարգացման, չափահաս տարիքում կյանքի որակի բարելավման և մասնագիտական առաջխաղացման համար: Վաղ տարիքից որակյալ կրթության հասանելիությունը էապես նպաստում է չափահաս տարիքում առավել բարենպաստ սոցիալ-տնտեսական հնարավորությունների և առողջապահական ծառայությունների հասանելիության, ավելի երկար ու ապահով կյանք ունենալուն: Մինչդեռ վաղ տարիքում կրթության ձախողումը մարդկանց զրկում է տնտեսական և սոցիալական կյանքին մասնակցելու համար անհրաժեշտ կարողություններից ու հնարավորություններից, որի հետևանքով կենսագործունեության նվազագույն պայմանների (սոցիալական, առողջապահական, զբաղվածության, երեխաների խնամքի և դաստիարակության) ապահովումն անհամեմատ ավելի ծախսատար է դարձնում:

Հանրային կյանքի բոլոր ոլորտներում և մասնավորապես կրթության, պետք է մշտապես գործեն ու հետևողականորեն պահպանվեն իրավունքի գերակայության, հավասարության և որակյալ կրթության հասանելիության և

մատչելիության սկզբունքները: Կրթության պարագայում համընդհանուր մատչելիությունը ենթադրում է երկու սերտորեն փոխկապակցված բաղադրիչների՝ արդարության և ներառականության ամբողջականություն¹⁰⁶: Վերջիններիս լիակատար իրագործումը վտանգվում է այնպիսի գործոնների ազդեցությամբ, ինչպիսիք են երեխայի սեռը, ընտանիքի եկամուտներն ու սոցիալ-տնտեսական վիճակը, բնակության աշխարհագրությունը, հաշմանդամությունը և այլն: Այս առումով՝ արդարությունը երաշխավորում է, որ թվարկված գործոնները որևէ կերպ չեն խոչընդոտի երեխայի կրթությանը, իսկ ներառականությունը երաշխավորում է կրթության հիմնական նվազագույն հնարավորությունների ու ստանդարտների ապահովումը բոլորի համար:

Ներկայումս նշված սկզբունքների պահպանման մարտահրավերը հավասարապես առկա է թե՛ Հայաստանում և թե՛ այլ, այդ թվում՝ զարգացած երկրներում: Հետազոտությունները ցույց են տալիս, որ այն պետություններն ու հասարակությունները, որոնք արդյունավետ քայլեր են ձեռնարկում դրանց գործադրման ուղղությամբ, էական առաջընթաց են արձանագրում սովորողների կրթական արդյունքների առումով¹⁰⁷: Ուստի՝ որակյալ կրթության համընդհանուր հասանելիությունը կարևորագույն նախապայման է խտրականությունից զերծ և հավասար հասարակություն կառուցելու համար:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) կրթության ոլորտն օրենսդրորեն կարգավորվում է ՀՀ Սահմանադրությամբ, «Կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Բարձրագույն կրթության մասին» և մի շարք այլ օրենքներով ու նորմատիվ իրավական ակտերով: Կրթության իրավունքի իրացման երաշխիքներն ամրագրված են նաև Հայաստանի կողմից ստորագրված կամ վավերացված մի շարք միջազգային կոնվենցիաներում և հռչակագրերում, ինչպիսիք են ՄԱԿ-ի՝ «Երեխայի իրավունքների մասին» և «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիաները, «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիրը», ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ «Կրթության բնագավառում խտրականության դեմ» կոնվենցիան, ՄԱԿ-ի «Կայուն զարգացման նպատակները» և այլն:

ՀՀ Սահմանադրությունը մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների

106. Ten Steps to Equity in Education, Policy Brief, OECD, 2008.

107. Equity in Education: Breaking down Barriers to Social Mobility, OECD, 2018.

ու ազատությունների շարքում նաև ամրագրում է կրթության իրավունքը¹⁰⁸, իսկ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ Հայաստանում 12-ամյա միջնակարգ կրթությունը բոլորի համար անվճար է և պարտադիր¹⁰⁹: 2014 թ. այս օրենքը լրացվեց ու փոփոխվեց, և այդպիսով ողջ հանրակրթության գերակա սկզբունք հռչակվեց համընդհանուր ներառականությունը: Համընդհանուր ներառական կրթությունը ամրագրվեց «որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք»¹¹⁰: Ըստ օրենքի սահմանման՝ «ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի համար կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը»¹¹¹: Սահմանվեց նաև «կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձ» հասկացությունը, որպես «ուսուցման հետ կապված դժվարություններ, այդ թվում՝ զարգացման ֆիզիկական կամ մտավոր առանձնահատկություններ ունեցող անձ, որի կողմից հանրակրթական հիմնական ծրագրերը յուրացվելու համար անհրաժեշտ են կրթության առանձնահատուկ պայմաններ»¹¹²: Այսուհանդերձ, ըստ նույն օրենքի՝ «կրթության կազմակերպման համար լրացուցիչ պետական աջակցությունից ֆինանսավորման բարձրացված չափաբանակով օգտվում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող այն երեխաները, որոնք ունեն հետևյալ ֆունկցիաների միջին, ծանր և խոր խանգարումներ՝ ծայրի և խոսքի, լսողական, տեսողական, ինտելեկտուալ (մտավոր) հետամնացություն ունեցող, շարժողական»¹¹³: Նման ձևակերպումը որոշակի հակասություն է առաջացնում օրենքի հոդվածների միջև, քանի որ թվարկված ֆունկցիաների թեթև աստիճանի կամ այլ ինդիկորներ ունեցող երեխաները, ըստ էության, չեն կարող պետությունից ստանալ անհրաժեշտ ֆինանսական օժանդակությունը իրենց կարիքների գնահատման ու հասցեագրման համար, և ուստի՝ միայն ձևականորեն են սահմանվում իբրև շահառու:

2016 թ. մարտին ՀՀ Ազգային ժողովի (ԱԺ) կողմից ընդունվեց ««Կրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքը, որով առաջին անգամ Հայաստանում օրենսդրորեն սահմանվեցին «կրթության որակ» և «սովորող» հասկացությունները: Օրենքում «կրթության

108. ՀՀ Սահմանադրություն, հոդված 38:

109. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը, հոդված 4, կետ 4:

110. Նույն տեղում, հոդված 4, կետ 2.1:

111. Նույն տեղում:

112. Նույն տեղում, հոդված 3, կետ 10.2:

113. Նույն տեղում, հոդված 35, կետ 3.1:

որակը» սահմանվում է որպես «կրթական քաղաքականությամբ սահմանված նպատակների և խնդիրների իրագործմանը միտված կրթության կազմակերպման չափելի արդյունք[ը], որը գնահատվում է՝ հաշվի առնելով սովորողի անհատական կարիքները, կրթության կազմակերպման միջավայրը, ուսուցման ծրագրային բովանդակությունը, կրթության կազմակերպման գործընթացը, և ուսումնառության գնահատված արդյունքները՝ համաձայն սահմանված չափանիշների»¹¹⁴: Այս սահմանումը նույնական է ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի (ՅՈՒՆԻՍԵՖ) կողմից մշակված, կրթության որակի ուղեցույցում նշվողի հետ¹¹⁵, սակայն «սովորող» հասկացության ձևակերպումը տարբերվում է: Այսպես, ՅՈՒՆԻՍԵՖ-ի ուղեցույցը «սովորողին» սահմանում է որպես անձ, ով առողջ է ու լավ սնված, պատրաստ է մասնակցել ու սովորել, ինչպես նաև ուսումնառության համար աջակցություն է ստանում իր ընտանիքի ու համայնքի կողմից: Մինչդեռ ՀՀ «Կրթության մասին» օրենքում «սովորողն» ընդամենը սահմանված կարգով ուսումնական հաստատություն ընդունված և կրթական հիմնական ծրագրով ուսումնառող անձն է: Այսպիսով ՀՀ օրենքը ուսումնառությունը սահմանափակում է միայն ֆորմալ ուսումնական հաստատությունների և կրթական հիմնական ծրագրերի շրջանակներում՝ բացառելով ինքնակրթությունն ու կրթության ոչ ֆորմալ ձևերը: Մյուս կողմից, օրենքում բացակայում են «սովորողի» բնութագրիչները, ինչը նույնպես էական բացթողում է:

«Կրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ «կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է», որը ՀՀ կառավարության ներկայացմամբ հաստատում է ՀՀ Ազգային ժողովը: Կրթության զարգացման վերջին ռազմավարական ծրագրի ժամկետն ավարտվել է 2015 թվականին, սակայն դրանից հետո մինչ օրս որևէ կառավարության չի հաջողվել մշակել և ԱԺ հաստատմանը ներկայացնել նոր ծրագիր, որը կհամապատասխաներ կրթության բնագավառի նոր պահանջներին և արդյունավետ մեխանիզմներ կստեղծեր դրա ժամանակակից մարտահրավերներին դիմակայելու համար:

Ստորև նշված են կրթության իրավունքի իրացման երաշխիքների մասին մի շարք կարևոր դրույթներ, որոնք ամրագրված են ՀՀ կողմից վավերացված

114. Օրենքի 37-րդ հոդվածով ամրագրվել է նաև, որ կրթության պետական կառավարման լիազորված մարմինը պետք է սահմանի կրթության որակի գնահատման չափանիշները՝ ըստ ուղղությունների: Սակայն պետք է նշել, որ դեռևս նման նախաձեռնություն ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից չի հրապարակվել:

115. Defining Quality in Education, UNICEF, 2000.

միջազգային կոնվենցիաներում և հռչակագրերում.

- ՄԱԿ-ի՝ «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 28-րդ հոդվածում նշվում է, որ «Կոնվենցիայի մասնակից պետություններն ընդունում են երեխայի կրթության իրավունքը, և հավասար հնարավորությունների հիման վրա այդ իրավունքի իրականացմանն աստիճանաբար հասնելու համար նրանք, մասնավորապես, ապահովում են դրա մատչելիությունը բոլոր երեխաների համար և ձեռնարկում են այնպիսի անհրաժեշտ միջոցներ, ինչպիսիք են անվճար կրթությունը և անհրաժեշտության դեպքում ֆինանսական աջակցությունը»:
- ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ «Կրթության բնագավառում խտրականության դեմ» կոնվենցիայի 4-րդ հոդվածի համաձայն՝ «Կոնվենցիայի մասնակից պետությունները պարտավորվում են մշակել, զարգացնել և կիրառել այնպիսի պետական քաղաքականություն, որը կնպաստի կրթության բնագավառում հավասար հնարավորությունների և վերաբերմունքի ապահովմանը, այդ թվում միտված կլինի միևնույն մակարդակի բոլոր պետական ուսումնական հաստատություններում կրթական ստանդարտների, ինչպես նաև տրամադրվող կրթության որակի հետ կապված պայմանների համարժեքության ապահովմանը»:
- ՄԱԿ-ի՝ «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի» 13-րդ հոդվածը սահմանում է, որ «միջնակարգ կրթությունն իր զանազան ձևերով, ներառյալ մասնագիտական-տեխնիկական կրթությունը, պետք է լինի բաց և մատչելի բոլորի համար՝ բոլոր անհրաժեշտ միջոցների ձեռնարկման և, մասնավորապես, անվճար կրթությունը աստիճանաբար ընդգրկելու ճանապարհով»:
- ՄԱԿ-ի՝ «Կայուն զարգացման նպատակների» 4-րդ նպատակի 5-րդ կետում նշված է, որ «մինչև 2030թ. պետությունները պետք է վերացնեն գենդերային անհավասարությունները կրթության ոլորտում և ապահովեն հավասար հասանելիություն ուսման և միջին-մասնագիտական կրթության բոլոր մակարդակներում խոցելի խմբերի, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց, տեղաբնիկ ժողովուրդների և խոցելի իրավիճակներում գտնվող երեխաների համար»:

Ամփոփելով կարելի է եզրակացնել, որ Հայաստանում կրթության իրավունքի իրացման համար ստեղծված են բավարար օրենսդրական հիմքեր, այսուամենայնիվ, դեռևս թույլ են այն մեխանիզմները, որոնք

պետք է երաշխավորեն դրանց գործադրումը բոլոր երեխաների պարագայում՝ հիմնվելով արդարության, հավասարության և ներառականության սկզբունքների վրա:

ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶՐՈՒՆՔԸ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հանրակրթության պարագայում հավասարության կամ սոցիալական արդարության սկզբունքը ունի հետևյալ բովանդակությունը. բոլոր սովորողները պետք է ունենան հավասար հնարավորություններ: Եվ առաջնորդվելով այս նշանոլային սկզբունքով՝ պետությունը երաշխավորում է բոլոր սովորողների կրթական հնարավորությունների ապահովման ամենաբարձր չափորոշիչը, սակայն գործնականում ամեն ինչ այդքան էլ հեշտ չէ: Կրթության բնագավառում «հավասար» եզրույթը չի նշանակում պարզ կամ համահարթ հավասարություն: Կարևոր է խթանել «արդարացի» հավասարություն, այսինքն՝ յուրաքանչյուրին տրամադրել այնքան աջակցություն, որքան անհրաժեշտ է կրթական գործընթացին բոլորի հետ հավասար և արդյունավետ մասնակցելու, ինքնադրսևորվելու և հաջողության հասնելու համար:

Ըստ ՀՀ օրենսդրության՝ կրթության իրավունքի իրացման երաշխիքներն են պարտադիր 12-ամյա հանրակրթությունը և դրա ներառական բնույթը: Ուրիշ խոսքով, բոլոր երեխաները, առանց որևէ բացառության, կարող են իրենց կրթության իրավունքն իրացնել հանրակրթական համակարգում: Սակայն այդ հնարավորությունը միայն օրենքով ամրագրելը դեռևս չի երաշխավորում, որ բոլոր երեխաները կկարողանան անխոչընդոտ կերպով օգտվել իրենց իրավունքից: Հայաստանյան կրթական համակարգում դեռևս առկա են այն մարտահրավերներն ու խոչընդոտներ, որոնք տարբեր խոցելի խմբերի երեխաներին թույլ չեն տալիս հավասար ու արդյունավետ մասնակցություն ունենալ և լիարժեքորեն իրացնել կրթության իրավունքը:

Հորիզոնական և ուղղահայաց «հավասարություններ»

Հավասարության ապահովման առաջին քայլն է կրթության ֆիզիկական հասանելիությունը, այն է՝ համայնքում դպրոցի առկայությունը, որը երաշխավորում է, որ յուրաքանչյուր երեխա կկարողանա մուտք գործել հանրակրթական համակարգ: Այսուհանդերձ, այն, որ ֆիզիկական հասանելիության հարցում հավասարությունն ապահովված է, դեռևս չի ստեղծում իրական հավասարություն. սովորողներն ունենում են բազմաթիվ թե՛ նմանություններ և թե՛ տարբերություններ, իսկ կրթական համակարգում նրանք կարող են բախվել տարբերակված մոտեցումների, ծառայությունների, խտրական վերաբերմունքի, որն էլ գուցե զգալիորեն խոչընդոտի

առաջադիմությանը: Վերջին տարիների գիտահետազոտական աշխատանքներում տարբերակվում են հավասարության երկու տեսակ՝ հորիզոնական և ուղղահայաց¹¹⁶:

Հորիզոնական հավասարությունը այն է, երբ հավասարներին ցուցաբերվում է հավասար վերաբերմունք, կամ այլ կերպ ասած՝ երեխաները կրթական համակարգ մտնում են միևնույն հնարավորություններով և պետք է արժանանան միևնույն վերաբերմունքին: Հայաստանում հանրակրթությունը չափորոշչահեն է, այսինքն՝ համակարգը պահանջում է բոլոր սովորողներին համապատասխանեցնել միևնույն չափորոշչի պահանջներին: Մեր կրթական համակարգում ընդունված է բոլոր սովորողների հանդեպ միևնույն վերաբերմունքը ցուցաբերելու և գերազանց առաջադիմության ձգտումը խրախուսելու գործելաոճը: Ուսուցանման կիրառվող մեթոդները չեն առանձնանում բազմազանությամբ, իսկ ուսուցիչների գործելաոճում մեծամասամբ բացակայում է անհատականացված ուսուցման մոտեցումը: Ուստի՝ այն սովորողները, ում ընդունակությունները տարբերվում են «միջին վիճակագրականից» (օրինակ՝ սովորողն ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք կամ հաշմանդամություն, սոցիալ-տնտեսական, մշակութային կամ կրոնական առանձնահատկություններ, կամ էլ օժտված է բացառիկ ունակություններով), ընկալվում են որպես «բնականոն» ուսումնական գործընթացի խոչընդոտ: Ուսուցիչները, զինված չլինելով բազմատեսակ լսարանի հետ աշխատելու համար անհրաժեշտ գիտելիքով, փորձառությամբ և մեթոդներով, հաճախ չեն կարողանում ժամանակին նկատել և արձագանքել տարբերվողների կարիքներին ու պահանջներին: Ուստի, ներկայիս կրթական համակարգը առավելագույնս ապահովում է միայն հորիզոնական հավասարություն:

Ուղղահայաց հավասարությունը, ի հակադրություն, հիմնվում է կարիքներից բխող, անհատականացված մոտեցումների և «անհավասար» վերաբերմունքի վրա: Անկախ սովորողի ունակություններից ու առանձնահատկություններից՝ կրթական համակարգը տիրապետում է բազմազան մեթոդների և պատրաստ է ապահովել համապատասխան գիտելիքների, հմտությունների և կենսափորձի ուսուցումը: Դասարանի մակարդակում, օրինակ, ուսուցիչը ընթերցանության տարբեր կարողություններ ունեցող երեխաներին դիտմամբ դժվարության տարբեր աստիճանների տեքստեր է հանձնարարում այդպիսով բավարարելով բոլորի կարիքները: Դպրոցի կամ համայնքի մակարդակում բոլոր երեխաներին, առանց բացառության,

116. L. Castella, S. Ragazzia, A. Crescentinia, Equity in education: A General Overview, ICEEPSY, 2012.

հնարավորություն է տրվում հաջողության հասնել կրթական համակարգի ներսում, այսինքն՝ երեխան կարողանում է անցնել համակարգի բոլոր աստիճաններով: Երկու սովորող երբեք միանման չեն լինում, ուստի՝ մեկ ունիվերսալ լուծումը կամ չափորոշիչը չի կարող լիովին բավարարել նրանց բազմազան կարիքներն ու պահանջները:

Առաջադիմության հավասարությունը

Հորիզոնական և ուղղահայաց հավասարության երաշխավորման մեխանիզմները քննարկելիս բնական հարց է ծագում. հրն է առաջադիմության այն նվազագույն շեմը, որին յուրաքանչյուր սովորող պետք է կարողանա հասնել իր ուսումնառության ընթացքում: Տեսականորեն կարելի է պնդել, որ անկախ տարբերություններից ու առանձնահատկություններից՝ ամեն սովորող պետք է առնվազն կարողանա լիարժեք մասնակցել 40 րոպե տևողությամբ դասին կամ էլ հաջողությամբ յուրացնել նորմատիվային գիտելիքների և հմտությունների սահմանված նվազագույն ծավալը: Գործնականում, սակայն, սա կարող է լուրջ մարտահրավել դառնալ թե՛ սովորողի, թե՛ նրա ծնողի և թե՛ ուսուցչի համար: Սովորողի սոցիալ-տնտեսական կարգավիճակը, ընտանեկան կամ համայնքային միջավայրը, հաշմանդամությունը կամ առանձնահատուկ կարիքները, ունակությունները, հակումները, հոգեվիճակը այս կամ այն կերպ ազդում են երեխայի առաջադիմության վրա: Արդյո՞ք արդարացի է պահանջել, որ ուսումնական տարվա ավարտին բոլորը հասնեն միանման արդյունքի, ընդ որում՝ մի համակարգում, որը ներառականությունը հռչակում է համընդհանուր և գերակա սկզբունք:

Առաջադիմության հավասարության գնահատման հարցում կարևոր է պարզել, թե ով է այն անձը կամ գերատեսչությունը, որը սահմանում է առաջադիմության չափորոշիչներն ու դրանց չափման միավորն ու մեխանիզմը: Արդյոք ուսուցիչը պետք է գնահատի և եզրակացություն տա, որ երեխան հասավ սահմանված նշաձողին կամ ձախողեց, թե՛ դպրոցը, համայնքը կամ էլ պետությունը: Իսկ ինչ կպատահի, եթե դրանցից յուրաքանչյուրը տրամագծորեն տարբեր կարծիքներ ունենա առաջադիմության և դրա չափման միավորների վերաբերյալ: Թեպետև մենք ցանկանում ենք, որ կրթական համակարգում ամեն սովորող հաջողություն արձանագրի, դժվար է միանշանակ ասել, թե որն է իրականում այդ «հաջողությունը», որին պետք է ձգտի յուրաքանչյուրը, և ինչպես է դա չափվում կամ գնահատվում:

Հավասարության դրամական կողմը

Ըստ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի՝ ֆունկցիայի մի շարք խանգարումներ ունեցող երեխաների ուսումնառությունը կազմակերպելու համար, ինչպես նշվեց վերևում, նախատեսում է լրացուցիչ դրամական աջակցություն: Մինևույն ժամանակ, Հայաստանում հանրակրթական համակարգը ֆինանսավորվում է սովորողների թվի հիման վրա, այսինքն՝ յուրաքանչյուր երեխայի ուսումնառության կազմակերպման համար պետությունը որոշակի գումար է հատկացնում դպրոցին¹¹⁷: Սակայն նման մոտեցումը եապես սահմանափակում է կարիքների բավարարման հասցեականությունը:

Հատուկ պայմանների կարիք ունեցող երկու երեխա, համապատասխանելով օրենքում սահմանվող չափանիշներին, պետությունից ստանալու են հավասար ֆինանսավորում: Սակայն մեծ է հավանականությունը, որ նրանցից յուրաքանչյուրի լիարժեք և արդյունավետ ուսումնառության համար տարբեր միջոցներ անհրաժեշտ լինեն, որոնց արժեքները նույնպես գուցե տարբերվեն: Մեկի դեպքում կարող է միանվագ, բայց մեծ դրամական ներդրման կարիք լինել. օրինակ՝ միջավայրը հարմարեցվի հենաշարժական խնդիրներ ունեցող սովորողների համար: Մյուսի պարագայում գուցե պահանջվի երկարաժամկետ ու պարբերական աջակցություն. օրինակ՝ անհատական օգնականի կամ ուղեկցողի մշտական ներկայություն: Մյուս կողմից, ֆունկցիայի թեթև խանգարում ունեցող կամ որևէ ֆունկցիայի խանգարում չունեցող երեխաները նույնպես կարող են կարճաժամկետ կամ երկարաժամկետ օժանդակության կարիք ունենալ, իսկ նման դեպքերում համակարգը լրացուցիչ աջակցության որևէ մեխանիզմ չի առաջարկում: Տարիներ առաջ Սիրիայից ներգաղթած հայ շատ սովորողների համար լեզվական տարբերությունները լուրջ խոչընդոտ դարձան հանրակրթական համակարգում ինտեգրվելու ճանապարհին: Այսուհանդերձ, հարցը չդիտարկվեց ներառական կրթության համատեքստում, և այս երեխաների՝ կրթության առանձնահատուկ պայմանի կարիքն անտեսվեց ու չգնահատվեց, արդյունքում՝ դպրոցները չստացան հավելյալ ֆինանսական միջոցներ, մասնավորապես՝ լեզվի լրացուցիչ դասընթացների կազմակերպման համար:

117. Մեկ սովորողի համար դպրոցին տրվող տարեկան գումարը 2010-2014 թթ. ընթացքում զգալիորեն փոխվել է՝ 106000 դրամից հասնելով 121000-ի: Սակայն վերջին հինգ տարիներին գումարը (124000 դրամ) մնացել է անփոփոխ: Տես «Կրթության բյուջետային ծախսերի արդյունավետության գնահատում», Հանրային բաղաբականության հետազոտությունների ազգային կենտրոն, 2018, Երևան:

Նմանապես, Հայաստանի հեռավոր մարզերում քիչ չեն փոքրաթիվ աշակերտական համակազմ ունեցող դպրոցները: Դրանց առկայությունը, մի կողմից, տվյալ համայնքի երեխաների համար հասանելի է դարձնում հանրակրթությունը, սակայն մյուս կողմից, մեծ ծախսեր է պահանջում: Կրթությունն ավելին է, քան պարզապես գիտելիքների փոխանցումը, որը մեր օրերում կարելի է ապահովել նաև հեռավար կամ առցանց ուսուցման միջոցով: Այն պետք է ներառի նաև փորձի փոխանակում, սոցիալականացում և միջանձնային հաղորդակցման հմտությունների ձևավորում ու զարգացում, որոնք տեղի են ունենում՝ շնորհիվ հասակակիցների և ուսուցիչների հետ առերես շփման: Ուստի՝ սակավաթիվ աշակերտական համակազմ ունեցող դպրոցներում նույնպես ուսումնառությունը և ըստ այդմ՝ նաև արվող ծախսերը լիարժեք և արդյունավետ չեն:

Կրթական գործընթացում հավասարության, ներառականության և սոցիալական արդարության սկզբունքների պահպանումը, անշուշտ, մարտահրավեր է, որը պահանջում է բազմակողմանի մոտեցումներ և լուծումներ: Մեր օրերում հանրակրթական համակարգում զուտ գիտելիքների փոխանցումը կարևորելով և ապահովելով՝ դեռևս չի երաշխավորվում կրթության իրավունքի լիարժեք իրացումը: Արագ փոփոխվող աշխարհում կրթական համակարգի խնդիրն է ապահովել յուրաքանչյուր երեխայի անհատական կարիքների հասցեագրումը և նրան հնարավորություն տալ հասնելու իրական հաջողության, ընդ որում՝ համագործակցելով և ներգրավելով բոլոր շահագրգիռ ու շահակից կողմերին:

ԲՈԼՈՐ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԸ՝ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐ

Որակյալ կրթության հասանելիությունը սահմանափակող մի շարք գործոններ գոյություն ունեն: Հայաստանյան իրականությանում դրանք հիմնականում սովորողի ընտանիքի սոցիալ-տնտեսական վիճակը, բնակության վայրը, հաշմանդամությունը, սեռը և էթնիկ կամ կրոնական պատկանելիությունն են: Ընդ որում՝ նշվածները հաճախ հանդես են գալիս համատեղ, ինչն էլ ավելի խոցելի է դարձնում երեխային: Այսպես, աղքատ ընտանիքներից սերող, ինչպես նաև գյուղաբնակ երեխաներն առավել խոցելի են որակյալ կրթության հասանելիության առումով: Խոցելի են նաև աղքիկները, քանի որ հաճախ հասարակության և մասնավորապես ուսուցիչների վերաբերմունքում լինում են բազմաթիվ կարծրատիպեր ու խտրականության դրսևորումներ: Իրավիճակը կրկնակի բարդ է, երբ երեխան ունենում է նաև հաշմանդամություն:

Սովորողի ընտանիքի սոցիալական-տնտեսական խոցելիության կամ աղքատության հանգամանքը էական նշանակություն ունի կրթության ընթացքում հաջողության հասնելու առումով: Հետազոտությունները ցույց են տալիս, որ Հայաստանում սովորողների ցածր առաջադիմությունն ուղիղ համեմատական է ընտանիքի սոցիալ-տնտեսական վիճակին¹¹⁸, այսինքն՝ որքան աղքատ է սովորողի ընտանիքը, այնքան ավելի ցածր է նրա առաջադիմությունը: Եվ եթե անգամ միևնույն դասարանում սովորող երկու երեխաներն էլ, որոնցից մեկը՝ աղքատ, իսկ մյուսն ավելի բարեկեցիկ ընտանիքից է, ունենան գերազանց առաջադիմություն, ապա առաջինի դեպքում բուհում կրթությունը շարունակելու հավանականությունն ավելի ցածր է¹¹⁹: Բանն այն է, որ ապահովված ընտանիքները 2-3 անգամ ավելի շատ գումար են ծախսում կրթության վրա, քան աղքատները¹²⁰: Ավելին, հանրակրթության ավագ մակարդակում տնային տնտեսություններն իրենց ծախսերի զգալի մասը՝ միջինում 43,4%, հատկացնում են կրկնուսուցման, ինչը մեծ մասամբ անխուսափելի պայման է բուհ ընդունվելու համար: Սակայն այս դեպքում նույնպես աղքատ և ոչ աղքատ ընտանիքների ծախսերի հարաբերակցությունն էապես տարբերվում է. եթե ոչ աղքատ ընտանիքներն իրենց ծախսերի 48,9%-ն են հատկացնում կրկնուսուցմանը, ապա աղքատները՝ ընդամենը 11,1%, իսկ ծայրահեղ աղքատները կրկնուսուցման վրա ընդհանրապես գումար չեն ծախսում: Արդյունքում, զարմանալի չէ, որ 2017 թ. բուհ ընդունված 18-22 տարեկան երեխաների թվում 29% կազմել են աղքատ, իսկ 53% ոչ աղքատ ընտանիքների երեխաները, ծայրահեղ աղքատ ընտանիքներից որևէ երեխա բուհ չի ընդունվել¹²¹: Այս իրավիճակը սոցիալ-տնտեսական անհավասարությունը դարձնում է վերարտադրվող ու մնայուն և անկնհայտորեն վկայում է մարդկային ռեսուրսների վատնման մասին, քանի որ խոցելի կարգավիճակ ունենալու պատճառով սովորողների մի մասը, որը մեծ ներուժ ունի և կարող է նպաստել երկրի տնտեսական զարգացմանը, չի ստանում բարձրագույն կրթություն:

Հաջորդ խոցելի խումբը գյուղաբնակ երեխաներինն է: Հայաստանում վերջիններիս ցուցանիշները՝ մաթեմատիկայից և բնագիտական առարկաներից ավելի ցածր են, քան նրանց քաղաքաբնակ հասակակիցներինը, ընդ որում՝

118. The Profile of Equity in the General Education in Armenia in 2010-2016, OSFA, 2018.

119. Դեյնիել Կարո, Հի Ջիա, Սոցիալական արդարությունը Հայաստանի կրթության համակարգում, 2018:

120. Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, ՀՀ վիճակագրական կոմիտե, Երևան, 2018:

121. Նույն տեղում:

գիտելիքների այդ ճեղքվածքը 2011-2015 թթ. խորացել է:¹²² Պատճառները տարբեր են: Գյուղական համայնքներում դպրոցները սովորաբար փոքր թվով աշակերտներ և հետևաբար նաև փոքր բյուջե են ունենում: Հաճախ դրանք նաև ուսուցիչների պակաս են զգում. եթե երևանում ուսուցիչ/դպրոց հարաբերակցությունը միջինում 3,6 է, ապա գյուղական դպրոցներում այս թիվը երկու անգամ փոքր է՝ կազմելով 1,7¹²³: Գյուղաբնակ երեխաների ցածր առաջադիմությունը պայմանավորված է նաև արտադպրոցական կրթության հնարավորությունների սահմանափակությամբ:

Գյուղ-քաղաք ճեղքվածքի պատճառները ոչ այնքան սոցիալ-տնտեսական, որքան քաղաքական բնույթի են: Հայաստանում իրադրության սրացմանը զգալիորեն նպաստել է կրթության համակարգում տարվող քաղաքականությունը: Տարիներ առաջ գործարկվեց առանձին ավագ դպրոցների ստեղծման ծրագիրը, որը, սակայն, շրջանցեց գյուղական բնակավայրերը: Ավագ դպրոցները սովորողներին ավելի որակյալ կրթության և մասնագիտական կողմնորոշման հնարավորություն են տալիս, հագեցած են ավելի բարձր կարգի ուսուցչական կադրերով և նյութատեխնիկական բազայով, էապես տարբերվում է նաև դրանց ֆինանսավորումը: Խնդիրն այն է, որ ավագ դպրոցները առավելապես տեղակայված են քաղաքային բնակավայրերում¹²⁴: Գյուղաբնակ երեխաներին, որպես այլընտրանք, առաջարկվեց 12-ամյա կրթությունն ավարտել միջնակարգ դպրոցներում, որոնք ունեն գյուղական դպրոցներին բնորոշ բոլոր խնդիրները (վատ շենքային պայմաններ, թերֆինանսավորում, անբավարար ուսուցչական և նյութատեխնիկական հագեցվածություն), կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում, որոնց թիվը բավարար չէ առկա պահանջարկը բավարարելու համար և որակյալ միջին մասնագիտական կրթությունն ապահովելու համար: Մյուս կողմից, գյուղաբնակ երեխաներին ուղղորդելով միջին մասնագիտական և արհեստագործական կրթության բնագավառ՝ խախտվում է սոցիալական արդարության սկզբունքը, և արհեստականորեն խորանում գյուղաբնակ ու քաղաքաբնակ երեխաների բևեռացումը:

122. Դեյնիել Կարո, Հի Ջիա, Սոցիալական արդարությունը՝ Հայաստանի հանրակրթության մեջ սովորողների արդյունքներում. ազգային հետազոտությունից ստացված փաստական տվյալներ:

123. Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, ՀՀ վիճակագրական կոմիտե, Երևան, 2018:

124. Հանրակրթական միջնակարգ և ավագ դպրոցների կրթական ծրագրերի համեմատական վերլուծություն, «Համայնքների ֆինանսիստների Հայաստան միավորում» ՀԿ, 2015:.

Կրթության ներառականության տեսանկյունից առավել խոցելի է հաշմանդամություն ունեցող երեխաների խումբը: Հասարակության մեջ տարածված է այն համոզմունքը, որ ներառական կրթությունը նախատեսված է բացառապես հաշմանդամություն ունեցող երեխաների համար: Իսկ դրա արմատավորմանն են նպաստում այն ձևակերպումները, որոնք տեղ են գտել նրանց ուսումնառության կազմակերպմանը վերաբերող օրենսդրական դրույթներում (տե՛ս «Կրթության իրավունքի օրենսդրական հիմքերը»): Հասարակության մեջ այս կարծրատիպի գոյության պատճառներից մեկն էլ այն է, որ մեր երկրում ներառական կրթությունը ներդրվել և հետագայում այդ ուղղությամբ ջատագովությունն իրականացվել է հենց հաշմանդամություն ունեցող երեխաների կրթության իրավունքի համատեքստում. պատմականորեն համակարգի պատասխանատուների կողմից հենց այս խմբի երեխաներն են դիտարկվել և ընկալվել որպես ներառական կրթության առաջնային շահառուներ: Այսուհանդերձ, հարկ է նշել, որ կրթության ներառականացման շուրջ 20 տարի տևած բարեփոխումները մինչ օրս էլ չեն ստեղծել այն համակարգը, որը կկարողանար արդյունավետորեն արձագանքել հաշմանդամություն ունեցող բոլոր երեխաների կրթական կարիքներին և այդպիսով ապահովել նրանց ներառումը կրթության ու հասարակական կյանքի մեջ: Գործող հանրակրթական դպրոցներում ինտեգրվել կարողանում են, ըստ էության, միայն ֆունկցիայի թեթև ու միջին խանգարումներ ունեցող երեխաները, այն էլ՝ ոչ լիարժեք, որը պայմանավորված է մի շարք պատճառներով.

- Կրթության առանձնահատուկ պայմանների անհրաժեշտությունը գնահատող եզրակացությունը չի տրամադրում բոլոր այն ծառայությունների և հարմարեցումների սպառիչ ցանկն ու դրանց արժեքը, որ հարկավոր են երեխայի լիարժեք ներառման համար: Փոխարենը, գնահատումը պարզապես արձանագրում է երեխայի որևէ ֆունկցիայի խանգարման աստիճանը, ըստ որի էլ պետությունը դպրոցին հավելյալ միջոցներ է տրամադրում:
- Ներառական կրթության ֆինանսավորման համակարգը թերի է և չունի բավարար ճկունություն, որպեսզի ժամանակին արձանագրի, գնահատի և հասցեագրի յուրաքանչյուր երեխայի կարիքները, այդ թվում՝ առողջական, սոցիալական, տնտեսական կամ մշակութային:
- Ֆունկցիայի միևնույն աստիճանի խանգարում ունեցող բոլոր երեխաների ֆինանսավորման չափը նույն է, մինչդեռ անհրաժեշտ ծառայությունների փաթեթները կարող են տարբերվել, ինչը կրկին սահմանափակում է կարիքահեն ֆինանսավորման և կարիքների արդյունավետ հասցեագրման հնարավորությունը:

- Կրթության ներառականացմանն ուղղված և շուրջ 20 տարի տևած բարեփոխումները երբևէ չեն անդրադարձել մտավոր ֆունկցիայի ծանր և խորը խանգարում ունեցող երեխաների կրթության նպատակներին ու դրա կազմակերպման արդյունավետ մեթոդներին: Արդյունքում, նրանք էլ միայն անվանապես են ներառական կրթության շահառու, մինչդեռ նրանց կարիքներին արձագանքող համակարգեր ու մեխանիզմներ գոյություն չունեն:
- Բարեփոխումների ընթացքում պատշաճ ուշադրություն չի դարձվել նաև հանրության հետ աշխատանքին, իսկ ներառական կրթությունը հասարակության մեջ հաճախ նույնացվում է ապաինստիտուցիոնալիզացման կամ հատուկ ու գիշերօթիկ հաստատությունների վերակազմակերպման հետ: Մինչդեռ, ներառական կրթության ջատագովությունը ամբողջ աշխարհում պատմականորեն հիմնված է այն գերակայության վրա, որ հաշմանդամություն ունեցող երեխաները համայնքում և ընտանիքում ապրելու և ուստի՝ հանրակրթական դպրոցում «բոլորի հետ ու բոլորի նման» սովորելու իրավունք ունեն:
- Լրացուցիչ խոչընդոտներից են ուսուցիչների մասնագիտական պատրաստվածության ու փորձառության պակասը, տարբեր ֆունկցիաների խանգարումներ ունեցող երեխաների հետ աշխատելու մեթոդների չիմացությունը և դրանցով պայմանավորված վախերն ու մտահոգությունները, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող երեխաների կրթության և մասնակցության իրավունքի մասին կարծրատիպերը:

Ներառական կրթության ներդրման ներկայիս փուլում, երբ մարզ առ մարզ անցում է կատարվում համընդհանուր ներառական կրթությանը, կարևոր է մշտապես մասնագիտական աջակցություն տրամադրել դպրոցների ուսուցիչներին: Նախկինում ներառական դպրոցներում գործում էին բազմամասնագիտական թիմեր (ԲՄԹ), որոնք մեծապես օգնում էին թե՛ երեխաներին և թե՛ նրանց ծնողներին ու ուսուցիչներին, որպեսզի երեխայի ներառումը լիներ սահուն և արդյունավետ: Սակայն քիչ չէին նաև այն դեպքերը, երբ հաշմանդամություն ունեցող երեխան, ըստ եության, ձևականորեն էր հաճախում դպրոց. նա այդպես էլ չէր մտնում դասարան, իսկ նրա «ներառումը» սահմանափակվում էր շաբաթական երկու կամ երեք անգամ նեղ վերականգնողական ծառայությունների (հանդիպում հոգեբանի, լոգոպեդի կամ

սոցիալական մանկավարժ հետ) մատուցմամբ¹²⁵: Այսուամենայնիվ, բոլոր դպրոցների ապահովումը ԲՄԹ-ով դրամական մեծ ռեսուրսներ էր պահանջում, և պետությունը գնաց ծառայությունների օպտիմալացման ու կենտրոնացման ճանապարհով՝ ստեղծելով տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններ, որոնց մասնագետները այդ նույն ծառայությունները պետք է մատուցեն իրենց կցագրված դպրոցներում: Այս մոդելի արդյունավետության գնահատման ֆորմալ փորձեր դեռևս չեն եղել, սակայն համակարգն այս լուծմանը բացասականորեն է արձագանքում: Պատճառը ներդպրոցական փորձի ու գիտելիքների պակասն է. դպրոցում ԲՄԹ-ի ամենօրյա ներկայությունը փրկարար օղակ էր նոր ու ոչ ստանդարտ իրավիճակներում լուծում գտնելու տեսանկյունից: Ուստի՝ ներառականության անցնող դպրոցներում որպես անցումային լուծում կարող է ծառայել մասնագիտական լրացուցիչ օժանդակության խմբերի ստեղծումը, որոնք կաշխատեն ուսուցիչների, վարչակազմի ու ծնողական համայնքի հետ և այդպիսով կնպաստեն ներառական կրթության անխոչընդոտ ներդրմանը:

Հաշմանդամություն ունեցող երեխաների ներառումն առավել սահուն դարձնելու համար անհրաժեշտ է նաև աշխատանքը սկսել հնարավորինս վաղ՝ նախադպրոցական տարիքից: Սակայն Հայաստանում նախադպրոցական կրթության որակն ու հասանելիությունը սահմանափակ է ոչ միայն հաշմանդամություն ունեցող, այլև ընդհանրապես բոլոր երեխաների համար: 2017-2018 ուսումնական տարում Հայաստանի ողջ տարածքում գործել է 818 նախադպրոցական կրթական հաստատություն, որոնցից 401-ը եղել է քաղաքային, իսկ 417-ը՝ գյուղական բնակավայրերում¹²⁶: Ընդհանուր առմամբ, առկա 84871 տեղերից զբաղեցված են եղել 74232-ը, այսինքն՝ նախադպրոցական կրթական հաստատություններում ներգրավվածությունը ոչ միշտ է կախված տեղերի առկայությունից, այն հաճախ պայմանավորված է նաև տեղերի համալրման գործընթացի անարդյունավետությամբ: 2017 թ. 0-5 տարեկան երեխաների ներգրավվածությունը նախադպրոցական կրթության մեջ քաղաքային համայնքներում կազմել է 36,6%, մինչդեռ գյուղական համայնքներում՝ ընդամենը 20,6%¹²⁷: Էլ ավելի մեծ խնդիր է նախադպրոցական որակյալ ներառական կրթության

125. ՀՀ-ում ներառական կրթության իրականացման գնահատում, Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն, Երևան, 2013:

126. Հայաստանի սոցիալական պատկերը և աղբատությունը, ՀՀ վիճակագրական կոմիտե, Երևան, 2018:

127. Assessment on Access of Children to Pre-School Education Services in Armenia, Save the Children Armenia, 2017.

հասանելիությունը, քանի որ ներառական մանկապարտեզներ գրեթե չկան: Հաշմանդամություն ունեցող նախադպրոցական տարիքի երեխաները զրկված են վաղ զարգացման այս հնարավորությունից, ինչն էապես խոչընդոտում է հանրակրթության մեջ նրանց արդյունավետ և սահուն ներառմանը:

Կրթության մեջ անհավասարության և անարդարության մյուս պատճառը երեխաների սեռային տարբերությունն է: Աղջիկների կրթության իրավունքի լիարժեք իրացմանն են սպառնում ուսուցիչների խտրական վերաբերմունքը և դասագրքերում գենդերային տեսանկյունից ոչ զգայուն և կողմնակալ բովանդակության առկայությունը: Հանրակրթական դասագրքերում, ըստ որոշ մասնագետների, արական սեռի կերպարները և գործիչները հինգ անգամ ավելի շատ են, քան կանայք¹²⁸: Ավելին, տղամարդիկ պատկերված են բացառապես որպես ակտիվ գործիչներ և հեղինակություններ, հատկապես երբ ներկայացվում են որպես ընտանիքի հայր կամ ամուսին: Մինչդեռ կանայք ներկայացված են ավելի պասիվ, երկրորդական և ուստի՝ ենթակա դերերում. օրինակ՝ ճաշ պատրաստելիս, կար ու ձև կամ լվացք անելիս, զբաղված տան մաքրությամբ կամ երեխաների կերակրմամբ: Գենդերային անհամաչափությունը հատկապես բնորոշ է պատմության դասագրքերին. այսպես, Հայոց պատմության 10-12-րդ դասարանի դասագրքերում կին դերակատարների ներկայացվածությունը չի գերազանցում 3-5%-ը¹²⁹: Դասագրքերում մշտապես առանձնահատուկ ընդգծվում է տղամարդկանց դերը պատմության մեջ, մինչդեռ կանայք սովորաբար մնում են անտեսանելի, իսկ նրանց ներդրումը համաշխարհային և հայ ժողովրդի պատմության մեջ սովորվում է՝ այդպիսով խեղաթյուրելով նաև ժամանակակից սոցիալական կյանքում կնոջ ակտիվ դերի ընկալումը: Մյուս կողմից, առկա իրավիճակի պատճառներից է դասագրքերի ստեղծման գործում կին հեղինակների, գիտնականների, պատմական և հասարակական գործիչների սահմանափակ ներկայացվածությունը:

Դասագրքերի նման բովանդակությունը էլ ավելի է սրվում ուսուցիչների կարծրացած մտածելակերպի և խտրական վերաբերմունքի պատճառով: Գնահատված չեն աղջիկների կրթության կարևորությունը, նրանց

128. General Assessment of the Armenian High School Textbooks from a Gender Perspective: Armenian Literature, Armenian History, and Civics, Dr. Vladimir Osipov, Senior Research Fellow, Institute of Philosophy, Sociology & Law, Armenian National Academy of Sciences, & Ms. Jina Sargizova, Gender Expert. WB, Yerevan, 2015.

129. Gender Analysis of Armenian School Curriculum and Textbooks: Policy Brief, Iveta Silova. World Bank, Washington DC, 2016, <https://openknowledge.worldbank.org/handle/10986/24948>.

սոցիալական ներառումն ու մասնակցությունը համայնքում, չեն կարևորվում նրանց հետագա մասնագիտական զարգացումը ու կարիերայի առաջխաղացումը: Հետազոտությունները ցույց են տալիս, որ ուսուցիչները տղաների դաստիարակության և ուսուցման մեջ առանձնահատուկ շեշտադրում են առաջնորդության և համարձակության դաստիարակությունը, մինչդեռ աղջիկներին փորձում են սերմանել համեստություն և հնազանդություն¹³⁰:

Այսպիսով, դասագրքերի գենդերային ոչ զգայուն բովանդակությունը և ուսուցիչների կարծրատիպային մոտեցումները խթանում են ներկայումս հասարակությունում առկա պատրիարխալ համակարգերը՝ սովորողներին ստիպելով վերարտադրել ավանդական գենդերային դերերը:

Հայաստանում խոցելի է նաև եթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների կրթությունը: Հայաստանը Հարավային Կովկասի ամենամիատար երկիրն է. բնակչության 98%-ը կազմում են հայերը¹³¹: Մյուս կողմից, համաձայն «Լեզվի մասին» ՀՀ օրենքի՝ հայերենը մեր երկրի միակ պաշտոնական լեզուն է: Թեև պետական քաղաքականությունը տեսականորեն երաշխավորում է ազգային և եթնիկ փոքրամասնությունների լեզուների զարգացմանն ուղղված աջակցությունը, սակայն միջեթնիկական շփումներում, ըստ էության, բոլոր հնարավոր եղանակներով խրախուսում է հայերեն լեզվի գործածումը¹³²: Եզդիները Հայաստանում բնակվող ամենամեծ եթնիկ փոքրամասնությունն են, սակայն ողջ երկրում միայն մի քանի դպրոց է ուսուցումը կազմակերպում եզդիերենով: Նույնը վերաբերում է ասորի, քուրդ և հույն համայնքներին: Այս փոքրաթիվ դպրոցներում մայրենի լեզվի ուսուցումը տեղի է ունենում հիմնականում տարրական դպրոցում: Եթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների ուսուցման հիմնական դժվարությունները կապված են մայրենի լեզվով դասագրքերի անհասանելիության և դրան տիրապետող ուսուցիչների սակավաթվության հետ: Մինչ օրս պետությունը հետևողական քայլեր չի ձեռնարկել այդ երեխաների՝ մայրենի լեզվով կրթության իրավունքի պատշաճ իրացման համար:

130. Կրթության իրավունքի հասանելիության հավասարության հիմնախնդիրները ՀՀ հանրակրթության ոլորտում. Հետազոտության նախնական արդյունքներ, ԲՀՀ Հայաստան, 2017:

131. Հայաստանը թվերով, ՀՀ վիճակագրական կոմիտե, 2018:

132. Minorities in the South Caucasus: New visibility amid old frustrations, Fernando Garcés de Los Fayos, European Parliament, June 2014.

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՐՆ ՀԱՎԱՍԱՐ ԵՎ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՏԱԳՈՎՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ներառական կրթության հաջողությունը պայմանավորված է ոչ միայն հանրակրթական հաստատությունների, այլև բոլոր համայնքային ծառայությունների և կենտրոնների այնպիսի ձևափոխմամբ, որը ուսումնառությունը մատչելի կդարձնի այնտեղ բնակվող և դպրոցում սովորող բոլոր երեխաների համար՝ ներառելով աղքիկներին, հաշմանդամություն ունեցող երեխաներին, փախստականներին, ինչպես նաև էթնիկ և կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչներին: Ներառականության նպատակն է բացառել որևէ երեխայի մեկուսացումը՝ բացասական վերաբերմունքի, խտրականության, կարծրատիպերի կամ բազմազանության նկատմամբ հարգանքի բացակայության հետևանքով: Մյուս կողմից, կրթության գործընթացը տեղի է ունենում տարբեր տիրույթներում: Ֆորմալ կրթությունը՝ հանրակրթական ուսումնական հաստատություններում, իսկ ոչ ֆորմալը՝ ամենուրեք: Հետևաբար, ներառման կարիք կա թե՛ դպրոցի պատերից ներս և թե՛ հասարակական կյանքում: այդպիսով հնարավոր կլինի բոլոր սովորողներին ապահովել բարձր որակի կրթությամբ և ստեղծել ներառական ու խտրականությունից զերծ հասարակություն:

Ներառականության ջատագովումը մի շարք միջոցառումների ամբողջություն է, որոնցից են տարբեր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ քննարկումների կազմակերպումը, դրական վերաբերմունքի ձևավորմանը միտված ադվոկացիոն քայլերը և կրթական ու սոցիալական միջավայրերի բարելավումը: Դրանց միջոցով ստեղծվում և ինստիտուցիոնալ են դառնում այն մեխանիզմները, որոնց միջոցով հնարավոր է դիմակայել կրթության կառուցվածքային և բովանդակային մարտահրավերներին: «Կրթությունը բոլորի համար» համաշխարհային հռչակագրում, որն ընդունվել է 1990 թ., ներառական կրթության ընդհանուր տեսլականը հետևյալն է. կրթությունը դարձնել հասանելի բոլոր երեխաների, երիտասարդների և մեծահասակների համար՝ դրանում խթանելով սոցիալական արդարություն և հավասարություն: Այսինքն՝ ստորագրող պետությունները պարտավորվում են, ըստ այդ տեսլականի, փոփոխել և հարմարեցնել իրենց կրթական համակարգի կառուցվածքը, ռազմավարությունը, մոտեցումներն ու բովանդակությունը:

Ներառական կրթության ձևավորման ճանապարհին անհրաժեշտ են բոլոր դերակատարների, շահակիցների և շահագրգիռ կողմերի արդյունավետ համագործակցությունը, միասնական տեսլականի առկայությունը և ջանքերի համատեղումը: Այդ ճանապարհին ծագող խոչըդոտները պետք է հաղթահարվեն քաղաքականությունը մշակողների, կրթության ոլորտի

մասնագետների, աշխատողների, քաղաքացիական հասարակության ու ծնողական համայնքների միջև ակտիվ երկխոսության և համագործակցության միջոցով: Դրանց չեզոքացմանը և ռիսկերի նվազեցմանը կօգնեն նաև հետևյալ քայլերը.

- Համայնքային մակարդակում իրավիճակի մշտադիտարկում, վերլուծություն և տվյալների հավաքագրում.
- Հասանելի ռեսուրսների և դրանց կիրառման հնարավորությունների քարտեզագրում.
- Հանրային կրթություն և իրազեկում այն մասին, որ կրթությունը պետք է հասանելի լինի բոլոր երեխաների համար.
- Մասնակցություն ոլորտի քաղաքականության մշակմանը՝ ըստ միջազգային լավագույն փորձի և կոնվենցիաների ու հռչակագրերի.
- Տեղական տարբեր դերակատարների կարողությունների զարգացում.
- Համայնքային և ազգային մակարդակներում ներառական կրթության ներդրման և կիրարկման ազդեցության գնահատման մեխանիզմների և գործիքների ստեղծում.
- Կրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերման և ներառման/վերաներառման մեխանիզմների ստեղծում.
- Համայնքային ներառական ծառայությունների զարգացում.
- Ուսուցիչների վերապատրաստման և մասնագիտական կարողությունների շարունակական զարգացման ծրագրերի, դասընթացների և համաժողովների կազմակերպում.
- Շարունակական և ակտիվ աշխատանք երեխաների ծնողների հետ, որպեսզի ձևավորվի որակյալ և ներառական կրթության հանդեպ պահանջատեր ծնողական համայնք:

Ջատագովության արշավի հաջողության համար անհրաժեշտ են մանրակրկիտ նախապատրաստում և պլանավորում: Նախքան արշավը սկսելը հասարակական կազմակերպություններն ու համայնքային նախածեռնող խմբերը պետք է իրականացնեն մի շարք պարզ, բայց կարևոր միջոցառումներ.

- 1. Սահմանել նպատակը:** Ո՞րն է այն ցանկալի փոփոխությունը, որին պետք է հասնել ջատագովության արդյունքում. այն կարճաժամկետ է, թե՞ երկարաժամկետ. որո՞նք են ձեր թիմի պահանջները. արդյո՞ք դրանք պահանջում են օրենսդրական, քաղաքական կարգավորումներ կամ ծրագրային փոփոխություններ:
- 2. Ճանաչել թիրախային լսարանի պահանջմունքները:** Հաճախ ջատագովության արշավում ներկայացվում է այլ երկրների, քաղաքների, համայնքների կամ դպրոցների՝ համանման խնդրի շուրջ ունեցած փորձը: Այս միջոցը կարող է արդյունավետ լինել, եթե այն համապատասխանում է ձեր թիրախային լսարանին: Օրինակ՝ եթե ձեր արշավն ուղղված է հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողներին, որոնք հատուկ դպրոցները նախընտրում են ներառական հանրակրթական դպրոցներին, ապա արդյունավետ կլինի ներկայացնել հաշմանդամություն ունեցող այն երեխաների փորձը, ովքեր հաջողությամբ կրթություն են ստացել/ստանում ներառական դպրոցում: Սակայն նման օրինակները գուցե չգործեն մեկ այլ լսարանի դեպքում: Ուստի, ձեր արշավի հաջողությունը մեծապես կախված է թիրախային խմբերի հստակ ընտրությունից, նրանց կարիքների ճիշտ գնահատումից և համապատասխան մարտավարության մշակումից:
- 3. Ուղերձների ձևակերպումը:** Որքան հստակ, պարզ և լակոնիկ ձևակերպվեն ուղերձները, այնքան մեծ է հաջողության հասնելու հնարավորությունը: Դրանք պետք է առավելագույնս դրական և զարգացմանն ուղղված շեշտադրումներ պարունակեն: Ուղերձը պետք է լինի հիմնավոր և թիրախային, այսինքն՝ տարբերվող յուրաքանչյուր լսարանի համար: Օրինակ՝ ներառական կրթության ջատագովության համար առաջնային թիրախային խմբերն են ուսուցիչներն ու կրթության առանձնահատուկ պայմանների կարիք չունեցող երեխաների ծնողները: Առաջինները չունեն բավարար մասնագիտական փորձ ու գիտելիք, իսկ մյուսները՝ բավարար տեղեկատվություն ներառական կրթության մասին, որը կօգներ նրանց ընկալել դրա արդյունավետությունն ու նպատակահարմարությունը: Ուստի՝ այս երկու խմբերի համար նախատեսված ուղերձները պետք է ձևակերպվեն այնպես, որ փարատվեն նրանց մտահոգությունները, վախերը և անհանգստությունները:
- 4. Ուղերձների տարածման ուղիների հստակեցում:** Առաջին երեք քայլերը հաջողությամբ իրականացնելուց հետո անհրաժեշտ է ընտրել այն անձին կամ անձանց, ում վստահվելու է ուղերձների տարածումը: Այդ

անձը (անձիք) պետք է ներառվի արշավի թիմում և իր հեղինակության կամ մասնագիտական պատրաստվածության շնորհիվ նպաստի դրա հաջողությանը: Օրինակ՝ ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան ներկայացուցչությունը վերջին 1-2 տարվա ընթացքում ներառական կրթության ջատագովության իր արշավում ակտիվորեն ներգրավում է Հենրիխ Մխիթարյանին, ով սիրված է տարբեր տարիքային, սոցիալական և գենդերային խմբերի կողմից և կարող է օգնել ներառականության վերաբերյալ դրական դիրքորոշման ձևավորմանը:

5. **Ուղերձների տարածման եղանակների սահմանում:** Անհրաժեշտ է մշակել հստակ մարտավարություն, որը ուղերձները կհասցնի մեդիային, քաղաքական գործիչներին, կառավարությանը, տեղական ինքնակառավարման մարմիններին, ոլորտի պատասխանատուներին և այլոց:
6. **Ռեսուրսների գնահատում, քարտեզագրում:** Ջատագովության ցանկացած արշավում հաջողության հասնելու համար անհրաժեշտ է հստակ գնահատել սեփական ուժերն ու առկա ռեսուրսները, որոնց հիման վրա պետք է կազմվի և իրագործվի պլանը: Հաճախ կարիք է լինում ներգրավելու լրացուցիչ ռեսուրսներ: Ուստի՝ բացի առկա ռեսուրսների գնահատումից անհրաժեշտ է նաև քարտեզագրել այն բոլոր պոտենցիալ աղբյուրները, որոնք անհրաժեշտության դեպքում կարող են օգնության հասնել:
7. **Քայլերի հստակ պլանավորում:** Արշավի հաջողությունն անմիջականորեն կախված է նաև ճիշտ պլանավորումից: Պլանավորել անհրաժեշտ է ոչ միայն առաջին քայլերը, այլև յուրաքանչյուր քայլին հաջորդող հավանական զարգացումներին արձագանքելու ռազմավարական քայլերը: Անհրաժեշտ է ունենալ գործողությունների պլանի մի քանի տարբերակ, որը կապահովի դրա ճկունությունը և բազմազանությունը:
8. **Արդյունավետության գնահատում:** Արշավի առաջին իսկ փուլն ամփոփելուց հետո անհրաժեշտ է գնահատել ընտրված մարտավարությունների և իրականացված քայլերի արդյունավետությունը: Չի բացառվում, որ հենց առաջին փուլից հետո անհրաժեշտություն առաջանա արմատապես փոխել նախագիծը և նոր լուծումներ օգտագործել նպատակին հասնելու համար: Կարևոր է ամեն փուլի ավարտից հետո գնահատել արդյունքները՝ հաջորդ փուլի պլանում հստակեցումներ և փոփոխություններ մտցնելու նպատակով:

Չատագովության արշավները պահանջում են դրական տրամադրվածություն, լավատեսություն և համբերատարություն: Դրանք հաջողության են հասնում, եթե թիմը զինված է գիտելիքներով և տեղյակ խնդրո առարկային: Կրթության մեջ հավասարության, սոցիալական արդարության և ներառական կրթության մասին հավելյալ գիտելիքներ ձեռք բերելու և ջատագովության հաջողակ արշավներ կազմակերպելու գործում օգտակար կլինեն նաև ստորև ներկայացված ռեսուրսները:



ՕԳՏԱԿԱՐ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Դակարի գործողությունների շրջանակ. Կրթություն բոլորի համար, 2000, http://bridgeofhope.am/wp-content/uploads/2017/02/Dakar-framework-for-action_Arm-version.pdf:
2. Հայաստանում կրթության բյուջետային ծախսերի արդյունավետության մոնիթորինգ և գնահատում, Հանրային քաղաքականության հետազոտությունների ազգային կենտրոն, http://policyobserver.am/wp-content/uploads/Book4_Krtutyun.pdf:
3. Հանրակրթական միջնակարգ և ավագ դպրոցների կրթական ծրագրերի համեմատական վերլուծություն, «Համայնքների ֆինանսիստների Հայաստան միավորում» ՀԿ, 2015, http://www.osf.am/wp-content/uploads/2018/01/Comparing-Analysis-of-Schools_CFOA_draft5_LN_AH_SK_Final.pdf:
4. ՀՀ-ում ներառական կրթության իրականացման գնահատում, Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն, 2013, http://www.osf.am/wp-content/uploads/2013/11/Inclusive-education-report_ARM-without-tools.pdf:
5. Սալամանկայի հռչակագիր և գործողությունների շրջանակ հատուկ կարիքի կրթության համար, 1994, http://bridgeofhope.am/wp-content/uploads/2017/02/The-Salamanca-Statement_Arm-version.pdf:

6. Սոցիալական արդարությունը՝ Հայաստանի կրթության համակարգում. 2003-2015 թթ. TIMSS ստուգատեսից ստացված փաստական տվյալներ, Դեյնիել Կարո, Հի Ջիա, 2018, http://www.osf.am/wp-content/uploads/2018/11/Equity_TIMSS_am.pdf:
7. Սոցիալական արդարությունը՝ Հայաստանի հանրակրթության մեջ սովորողների արդյունքներում. Ազգային հետազոտությունից ստացված փաստական տվյալներ, Դեյնիել Կարո, Հի Ջիա, 2018, http://www.osf.am/wp-content/uploads/2018/11/Equity_National_am.pdf:
8. Assessment on Access of Children to Pre-School Education Services in Armenia. Save the Children Armenia, 2017, http://children.ombuds.am/wp-content/uploads/2017/09/Assessment-on-Access-to-Pre-school-Education-Services_ENG.pdf
9. Defining Quality in Education, UNICEF, 2000, http://www.oosci-mena.org/uploads/1/wysiwyg/Quality_Education_UNICEF_2000.pdf
10. Equity in Education: Breaking Down Barriers to Social Mobility, OECD, 2018, <http://files-eu.clickdimensions.com/ei-ieorg-a4ucu/files/oecd2018equityineducation-embargoedcopy.pdf?1539877267533&cldee=aGVsZW5hLnNjaHVsekBlas1pZS5vcmc%3D&recipientid=contact-cd8fdaf713b0e3118e4d005056ad0002-7ecf26c888e24500b2d9ecda6e8fc31f&esid=d6ac42ea-15df-4e5d-ad99-b2a835d93d34>
11. Gender Analysis of Armenian School Curriculum and Textbooks: Policy Brief, Iveta Silova, World Bank, Washington DC, 2016, <https://openknowledge.worldbank.org/handle/10986/24948>
12. Handbook on Measuring Equity in Education, 2018, <http://uis.unesco.org/sites/default/files/documents/handbook-measuring-equity-education-2018-en.pdf>
13. No More Failures: Ten Steps to Equity in Education, 2007, <https://www.oecd.org/education/school/45179151.pdf>
14. Ten Steps to Equity in Education: Policy Brief, OECD, 2008, <https://www.oecd.org/education/school/39989494.pdf>

15. The Profile of Equity in the General Education in Armenia in 2010-2016, OSFA, 2018, http://www.osf.am/wp-content/uploads/2018/10/EquityReport_OSFA_2016.pdf
16. Understanding education quality: EFA GEM Report, UNESCO, 2005, http://www.unesco.org/education/gmr_download/chapter1.pdf
17. World Declaration on Education for All: Meeting Basic Learning Needs and Framework for Action, 1990, http://www.unesco.org/education/pdf/JOMTIE_E.PDF

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ ԽԹԱՆՈՂ ՄՈԴԵԼՆԵՐ ԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Ղարիբ Հարությունյան, Մարինե Ավետիսյան

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կայուն տնտեսական և հոգևոր զարգացման, ժողովրդի արժանավայել կյանքի ապահովման, զենոֆոնդի պահպանման ու հզորացման, ազգային անվտանգության ամրապնդման գործընթացներում Երիտասարդությունը՝ որպես պետության ռազմավարական ներուժ, բացառիկ դեր ունի: (Հայաստանի Հանրապետության Երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգ, 2014 թ.)

Երիտասարդությունը Հայաստանի Հանրապետության բնակչության մոտ 1/3-ը կազմող կարևոր և ակտիվ հատվածն է¹³³, ուստի կարևոր է Երիտասարդների՝ ազատ, բազմակողմանի զարգացած, առողջ և

133. «Հայաստանի Հանրապետության Երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգ», ՀՀ կառավարության 2014 թ. դեկտեմբերի 25-ի նիստի N 54 արձանագրային որոշում:

պատասխանատու քաղաքացիներ դառնալու համար անհրաժեշտ պայմանների և հնարավորությունների ստեղծումը:

Ժամանակակից աշխարհում խիստ կարևորվում է պետության աջակցությունը երիտասարդների կայացման գործում: Երիտասարդներին աջակցելու և նրանց ներուժն ի շահ պետության ծառայեցնելու համար պետությունը տեղական և ազգային մակարդակում պետք է աշխատանքներ իրականացնի հետևյալ ոլորտներում.

- Բնակության վայրի ապահովում
- Առողջապահություն
- Սոցիալական ապահովում
- Կրթություն
- Չբաղվածություն
- Հասարակական-մասնագիտական գործունեություն
- Ժամանց
- Ընտանիք
- Քաղաքացիական նախաձեռնություններ
- Իրավունքների և պարտականությունների իրականացում

Ընդ որում՝ համայնքներում գործող երիտասարդական, հասարակական նախաձեռնությունները ևս իրենց գործունեությունն իրականացնելիս, որպես թիրախ ունենալով երիտասարդներին, պետք է գործունեության ուղղություններում ներառեն վերոնշյալ ոլորտներից մեկը կամ մի քանիսը:


ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ

Երկրի քաղաքական, հասարակական, մշակութային, գիտական և տնտեսական կյանքին քաղաքացիների մասնակցությունն ապահովվում է ազգային և միջազգային մի շարք իրավական նորմերով: Երիտասարդների մասնակցությունը կարող է ունենալ տարբեր հարթակներ ու ձևաչափեր՝ դասական ձևերից մինչև թվային մասնակցության ապահովման գործիքներ: Հիմնական գործիքները հետևյալներն են¹³⁴

134. Youth Participation in Development, Summary Guidelines for Development Partners, Restless Development and the United Nations (UN) Programme on Youth, 2010.

- Արշավներ
- Զվեարկություն
- Գրություններ
- Ֆորումներ, հավաքներ
- Բանավեճեր
- Առցանց արշավներ
- Քաղաքացիական ակտիվության և արձագանքման հավելվածներ
- Այլընտրանքային ընտրություններ
- Բլոգներ
- Տեղեկատվական ակտիվիզմ

Ժամանակակից տեսաբաններն առանձնացնում են երիտասարդների մասնակցության մի քանի մոդել: Երիտասարդների վերաբերյալ բոլոր որոշումները պետք է ընդունվեն երիտասարդների անմիջական մասնակցությամբ: Սա բոլոր մոդելներում առկա հիմնական ընդհանրությունն է: Նման մասնակցության ապահովման համար կիրառվում են հետևյալ հնարավորությունները.




Պատկեր 1. Երիտասարդների մասնակցությանը խթանող քայլեր

Անգլիացի գիտնական Ռոջեր Չարթը մշակել է երիտասարդների մասնակցայնության ութաստիճան մոդել, որն արտացոլում է, թե որոշում ընդունողներն ու երիտասարդներն ինչպես են փոխգործակցում միմյանց հետ: Մոդելի հիմքում դրված է երկու գործոն՝



Մոդելն ավելի հաճախ անվանում են «Երիտասարդների մասնակցության սանդուղք»¹³⁵: Ըստ եուբայն, բանավեճն այն է, թե իրականում որն է երիտասարդների մասնակցության այն մակարդակը, որն առավել մեծ արդյունավետություն կունենա: Շատերը կարծում են, որ համատեղ որոշումների ընդունումն առավել ցանկալի տարբերակ է և՛ երիտասարդների, և՛ մեծահասակների համար: Մյուսները կարծում են, որ որոշումների ընդունման գործընթացը պետք է լինի երիտասարդների տիրույթում, քանի որ դրանց հետևանքների կրողը հետագայում նրանք են լինելու: Այս մոտեցումը, սակայն, ամենից առաջ բացառում են մեծահասակները՝ հիմնավորելով իրենց փորձի առկայությունը: Ի վերջո, յուրաքանչյուր խումբ, ելնելով սեփական կարիքներից ու առանձնահատկություններից, ինքն է ընտրում, թե որոշումների ընդունումը և երիտասարդների մասնակցության աստիճանը տնտեսական կյանքին ինչ չափով է նպատակահարմար:

135. Ladder of Participation, A. Fletcher, 2008.



8. Երիտասարդների նախաձեռնությամբ
7. Երիտասարդների կողմից ուղղորդված
6. Մեծահասակների և երիտասարդների համատեղ որոշումների ընդունում
5. Խորհրդատվություն և տեղեկացվածություն
4. Նշանակված, բայց տեղեկացված
3. Ձևականություն
2. Դեկորացիա
1. Մանիպուլյացիա

Պատկեր 2. Ռոջեր Հարթի մասնակցության սանդուղք¹³⁶

Բոլոր հարցերում երիտասարդների մասնակցությունը պարտադիր ու ցանկալի է, սակայն իհարկե կան ոլորտներ, որտեղ երիտասարդներն առավել խորքային աջակցության և սատարման կարիք ունեն՝ ելնելով տարիքից և կյանքի իրավիճակներից:

Համայնքային կյանքին երիտասարդների մասնակցության մեխանիզմները

Համայնքային կյանքին երիտասարդների մասնակցությունը ենթադրում է ակտիվ ներգրավվածություն որոշումների ընդունման գործընթացում: Մասնակցությունը կարող է լինել ինչպես ինքնակազմակերպված երիտասարդական խմբերի, այնպես էլ այլ կազմակերպությունների հետ համագործակցության տեսքով: Երիտասարդները ավելի ակտիվ մասնակցություն են ցուցաբերում այն դեպքում, երբ խնդիրը վերաբերում է իրենց՝ որպես երիտասարդի, մասնագետի, ուսանողի կամ այլ կարգավիճակի:

Երիտասարդների ակտիվ ներգրավումը որոշումների ընդունման, ծրագրերի իրականացման գործընթացներում կարող է եապես փոփոխել համայնքային կյանքի կազմակերպման մշակույթը և բերել զգալի առաջընթացի: Համայնքի մեծահասակ բնակիչների կենսափորձը, կապերը, հնարավորությունները և ներուժը պետք է հաշվի առնվեն և հնարավորինս կիրառվեն երիտասարդների կողմից իրականացվող բոլոր աշխատանքներում:

136. Roger Hart's Ladder of Participation, 1992.

Պակաս կարևոր չէ նաև նման մենթորության և աջակցության մեխանիզմների ստեղծումը այդ ոլորտում առավել մեծ փորձառություն ունեցող երիտասարդների կողմից համայնքահեն զարգացման ծրագրերի ոլորտում սկսնակներին օգնելու համար:

Համայնքային կյանքին մասնակցելով՝ երիտասարդները սովորում են ստանձնել պարտավորություններ, ինչպես նաև դառնում են կայացրած որոշումների իրագործման պատասխանատուներ: Համայնքային կյանքին երիտասարդների լիակատար և իմաստալից մասնակցության ապահովման համար հարկ է ապահովել հինգ հիմնական պայման¹³⁷:

- Հարթակ
- Միջոց
- Մասնակցության իրավունք
- Հնարավորություն
- Աջակցություն

Այս մոտեցումն ամրագրված է նաև «Տեղական և մարզային կյանքում երիտասարդների մասնակցության» վերանայված եվրոպական խարտիայում¹³⁸: Խարտիայում նշվում է նաև, որ տեղական իշխանությունները պետք է առավելագույնս նպաստեն համայնքային կյանքի ամենատարբեր ոլորտներում երիտասարդների մասնակցությանը, հնարավորություններ ստեղծեն դրա համար: Դա պետք է արվի տեղական հասարակական կազմակերպությունների, խմբերի, անհատների, դերակատարների աջակցության միջոցով:

Երիտասարդներին քննարկման տարբեր հարթակներում ներգրավելու միջոցով հնարավոր է վեր հանել նրանց հուզող խնդիրները, ներկայացնել նրանց կարիքներն ու ակնկալիքները ժամանցի, կրթական և սպորտային վայրերի, մատչելի բնակարանների կառուցման վերաբերյալ: Հնարավոր է նաև համատեղ ստեղծել տեղեկատվական-խորհրդատվական հարթակ, որտեղ կարող են քննարկվել համայնքի բոլոր փոփոխությունները: Արդեն կան երկրներ, որտեղ հեռախոսների հավելվածների միջոցով կամ առցանց մարդիկ մասնակցում են քաղաքային պլանավորմանը, բյուջեի բաշխմանը և այլն:

137. «Երիտասարդահեն զարգացման ուղենիշներ», «ԿԱՉԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամ, Երևան, 2017:

138. Եվրոպայի տեղական և մարզային իշխանությունների կոնգրես, 21 մայիսի 2003 թ., 10-րդ նիստ, Հանձնարարական 128-ի հավելված:

Տեղական ինքնակառավարման մարմինների, պետական մարմինների, ոչ պետական կազմակերպությունների համար խիստ բարդ է (երբեմն նույնիսկ անհնար) աշխատել համայնքի երիտասարդների հետ անհատական մակարդակում: Երիտասարդների կարծիքը և մոտեցումները մշակելու, համակարգելու, ներկայացնելու և դրանց համայնքային զարգացման ծրագրերում ներգրավումն ապահովելու համար անհրաժեշտ է համայնքային երիտասարդական ոչ ֆորմալ կազմակերպությունների և խմբերի ակտիվ դիրքորոշումն ու ներգրավումը: Նման խմբերի բացակայության պայմաններում ցանկալի է համայնքի ակտիվ երիտասարդների նախաձեռնությամբ ստեղծել դրանք, մշակել ժողովրդավարական որոշումների ընդունման մեխանիզմներ և սկսել աշխատել տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) և այլ տեղական կառույցների հետ՝ երիտասարդահեն զարգացման ծրագրերի մշակման ուղղությամբ: Օրինակ, Գյումրիում 2016 թվականին «Կոմպասս» կենտրոնի և «Գյումրում երիտասարդական խորհրդի» ջանքերով մշակվեց «Գյումրու երիտասարդական քաղաքականություն», որը բխում է Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգից¹³⁹: Գործընթացի բոլոր փուլերում անմիջական մասնակցություն են ունեցել քաղաքի երիտասարդները՝ դրանով ապահովելով քաղաքականության մշակման մասնակցայնության բաղադրիչը:

Կա գործողությունների շարք, որոնց իրականացումը ՏԻՄ-երի և տեղական մակարդակում գործող երիտասարդական կազմակերպությունների կողմից էականորեն կխթանի երիտասարդների մասնակցությունը համայնքային կյանքին:

139. «Գյումրու երիտասարդական քաղաքականության մշակում և ներդրում» ծրագրի մասին <https://bit.ly/2lp5EAF>:

Երիտասարդական կազմակերպությունների գործողություններ¹⁴⁰

Տեղական մակարդակում գործող երիտասարդական կազմակերպությունները պետք է հստակ կերպով գիտակցեն իրենց դերը երիտասարդներին համայնքահեն զարգացման ծրագրերում ներգրավման և ռազմավարությունների մշակման գործում:

Կազմակերպությունները պետք է քաջատեղյակ լինեն իրենց համայնքների իրավիճակների վերաբերյալ և պետք է աջակցեն համայնքի երիտասարդներին համայնքի կարիքների վերհանման և դրանց լուծումների մշակման գործընթացներում:

Տեղական երիտասարդական կազմակերպությունները պետք է միջնորդի դեր կատարեն համայնքի երիտասարդների և համայնքում աշխատող այլ կառույցների միջև (ՏԻՄ-եր, միջազգային կազմակերպություններ, ԶԼՄ-ներ և այլն):

Կազմակերպությունները պետք է ըստ համայնքի երիտասարդների կարիքների կազմակերպեն նրանց հզորացման ուսուցողական և այլ ծրագրեր, որոնք հնարավորություն կստեղծեն երիտասարդների լիարժեք մասնակցության համար:

Տեղական երիտասարդական կազմակերպությունները պետք է օգնեն երիտասարդահեն զարգացման խմբերին մոբիլիզացնել ռեսուրսներ համայնքի զարգացման ծրագրերի համար:

140. «ԿԱՉԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամ, «Երիտասարդահեն զարգացման ուղենիշներ», Երևան, 2017, էջ 18:

ՏԻՄ-երի գործողություններ¹⁴¹

ՏԻՄ-երը պետք է տեղյակ լինեն իրենց համայնքներում գործող ակտիվ երիտասարդների և դրանց խմբերի մասին և նրանց հետ ձևավորեն գործընկերային հարաբերություններ:

ՏԻՄ-երը պետք է մշակեն հստակ ծրագրավորված մոտեցում և կոնկրետ մեխանիզմներ համայնքի զարգացման ծրագրերում տեղի երիտասարդների և դրանց խմբերի հետ համագործակցության համար:

ՏԻՄ-երը պետք է պարբերաբար տեղեկացնեն համայնքի ակտիվ երիտասարդությանը տեղական և ազգային մակարդակում իրականացվող համայնքային զարգացման ծրագրերի վերաբերյալ և ապահովեն երիտասարդների մասնակցությունը դրանց մշակման և իրականացման գործընթացներում:

ՏԻՄ-երը պետք է ակտիվ կերպով ներգրավվեն միջհամայնքային փորձի փոխանակման ծրագրերում և ապահովեն համայնքի ակտիվ երիտասարդների մասնակցությունը այդ գործընթացներին ազգային և միջազգային մակարդակներում:

Համայնքի զարգացման ռազմավարական առաջնությունների մշակման գործընթացը պետք է իրականացվի համայնքի երիտասարդների լիարժեք ներգրավմամբ և հաշվի առնելով նրանց յուրահատուկ կարիքները:

ՏԻՄ-երը պետք է տեղյակ լինեն համայնքահեն զարգացման երիտասարդական խմբերի կարիքների մասին և համայնքային ռեսուրսները (տարածքային, ֆինանսական, փորձագիտական և այլ) տրամադրելի դարձնեն նրանց աշխատանքների կազմակերպման ապահովման համար:

141. Նույն տեղում:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱՑԻ-ՄՈՆԻԹՈՐՆԵՐ

Մասնակցային մոնիթորինգը մասնակցության հատուկ տեսակ է, որը վերաբերում է մատուցվող հանրային ծառայությունների դիտարկման և գնահատման գործընթացում քաղաքացիների մասնակցությանը: Մոնիթորինգը թույլ է տալիս հասարակությանը հետևել կառավարության որոշումների և քաղաքականությունների իրականացմանը տեղական մակարդակում, չափում է դրանց արդյունավետությունը և համապատասխանությունը, տալիս է հետադարձ կապ և, ի վերջո, հանրային պաշտոն զբաղեցնողներից պահանջում է հաշվետվողականություն¹⁴²: Մասնակցային մոնիթորինգը կարող է նպաստել ծառայությունների մատուցման որակի բարելավմանը, համակարգում կոռուպցիայի ու թերացումների նվազմանը՝ նպատակ ունենալով բարելավել կենսամակարդակը համայնքներում և խթանել ներքևից վերև ժողովրդավարական կառավարման գործընթացը:

Երիտասարդները մոնիթորինգային գործընթացին կարող են ներգրավվել՝ անցնելով վերապատրաստման մի քանի փուլ և այդպիսով դառնալով քաղաքացի-մոնիթորներ¹⁴³: Քաղաքացի-մոնիթորը կարող է հետևել կառավարության որոշումների և քաղաքականությունների իրականացմանը պետական ու տեղական մակարդակում, չափել դրանց արդյունավետությունը և համապատասխանությունը, տալ հետադարձ կապ և, ի վերջո, հանրային պաշտոն զբաղեցնողներից պահանջել հաշվետվողականություն:

Համայնքում մասնակցային մոնիթորինգի անցկացման համար նախևառաջ պետք է ընտրվի համապատասխան ոլորտը: Ոլորտների ընտրության ժամանակ պետք է ուշադրություն դարձնել համայնքներում մատուցվող հանրային ծառայություններին: Դրանցից կարելի է առանձնացնել հետևյալները¹⁴⁴.

1. Համայնքի խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայություն

142. Մասնակցային մոնիթորինգի ձեռնարկ, Բազելի կառավարման ինստիտուտ, 2016:

143. «Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն ՅԿ կողմից 2016-2018 թթ. իրականացվել է համայնքային երեք ոլորտների՝ աղբահանության, ներհամայնքային ճանապարհների լուսավորության և ներհամայնքային ճանապարհների սպասարկան ծառայությունների մոնիթորինգ՝ թվով 95 քաղաքացի-մոնիթորների ներգրավմամբ: Մոնիթորինգի արդյունքները տես <http://compass-center.org/hy/researches/> հղումով:

144. Տեղական ժողովրդավարության դպրոցի թեմատիկ ընթերցանության կյուբեր, Թեմա 5՝ Հանրային բնույթի ծառայություններ, Հ. Մանասյան, «Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» ծրագիր, 2017:

2. Համայնքի ոռոգման ջրի մատակարարման ծառայություն
3. Համայնքի բազմաբնակարան բնակելի շենքերի սպասարկման և շահագործման ծառայություն
4. Համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման ծառայություններ
5. Համայնքի կանաչ տարածքների խնամքի, կանաչապատման, ներհամայնքային փողոցների և ճանապարհների, այլ տարածքների պահպանման, շահագործման, նորոգման, բարեկարգման, արտաքին լուսավորության ծառայություններ
6. Ներհամայնքային հասարակական տրանսպորտի ծառայություն
7. Համայնքի սեփականություն համարվող կրթական (նախադպրոցական, դպրոցական, արտադպրոցական), մշակութային, մարզական, առողջապահական, սոցիալական նշանակության ենթակառուցվածքների պահպանման, շահագործման, նորոգման և ջեռուցման, այդ ոլորտներում համայնքի բնակչությանը ծառայություններ:

Մոնիթորինգի իրականացման հաջողությունը պայմանավորված է մի շարք նախապայմաններով, որոնցից են.

- Բաղաբացիական հասարակության կարողություններ
- Աջակցող կամ առնվազն չխոչընդոտող տեղական կառավարման մարմին
- «Ճիշտ տեղ և ժամանակ»:

Մոնիթորինգի իրականացման համար անհրաժեշտ է սահմանել չափանիշներ: Չափանիշները կանոնների կամ սկզբունքների խումբ են, որոնք օգտագործվում են ելակետային ռեսուրսները, գործընթացները և հանրային ծառայությունից ակնկալվող արդյունքները որոշելու համար: Դրանք գործողություններ և ընթացակարգեր են, որոնց պետք է համապատասխանեցնեն ծառայություն մատուցողները որակյալ սպասարկում ապահովելու համար: Չափանիշների համար կա հինգ ցուցիչ՝ ժամանակ, քանակ, որակ, գործընթաց և արժեք¹⁴⁵:

145. “G-watch in local governance”, A Manual on the Application of G-Watch in Monitoring Local Service Delivery, 2013.

1. Ժամանակի չափանիշները վերաբերում են ծառայությունը ավարտելու կամ մատուցելու համար պահանջվող ժամաքանակին:
2. Քանակի չափանիշները վերաբերում են ծառայության մատուցման չափերին:
3. Որակի չափանիշները վերաբերում են մատուցվող ծառայության գույնի, կառուցվածքի, համի և այլ ֆիզիկական դրսևորումների բնութագրիչներին:
4. Գործընթացի չափանիշները գնահատվում են «այո» կամ «ոչ»՝ պայմանավորված կոնկրետ գործընթացներին դրանց համապատասխանությամբ:
5. Արժեքի չափանիշները վերաբերում են մատակարարին վճարվող կամ ծառայության մատուցման համար ծախսվող գումարին:

Մոնիթորինգն ունի երեք հիմնական բաղադրիչ¹⁴⁶.

1. Յուրաքանչյուր մոնիթորինգային այցելության և տվյալների զեկուցման պլանավորման գործընթացի համակարգում
2. Փաստացի դիտարկում, երբ մոնիթորինգի գործիքն օգտագործվում է տվյալների հավաքագրման համար
3. Հետադարձ կապ՝ արձագանքելու մոնիթորինգի ընթացքում դիտարկված խնդիրներին

Մոնիթորինգային ամեն մի ծրագրի համար օգտակար է համակարգող և վերահսկող մեկ առանցքային խմբի ձևավորումը: Առանցքային խումբը պատասխանատու է մոնիթորինգային պլանի մշակման, համայնքային մակարդակում մոնիթորների համախմբման ու կազմակերպման, ինչպես նաև մոնիթորինգի պլանի իրականացումը վերահսկելու համար:

Երբ մոնիթորինգային ծրագրի մեջ ներառում եք քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ԹՀԿ) անդամների, կարևոր է, որ այդ անձինք տեղական կառավարման մարմինների համար ընդունելի լինեն, որպեսզի ԹՀԿ-ն համայնքում ունենա լավ ցանց և ներառված լինի բոլոր խմբերի մեջ: Եթե ներառում եք տեղական ինքնակառավարման մարմնի անդամների, ապա ամենաարդյունավետ տարբերակն այն ծառայողներին

146. Նույն տեղում:

Ներառելն է, ովքեր պատասխանատու են ծրագրի իրականացման համար կամ ծառայության մոնիթորինգի համար:

Չաջորդ՝ ամենակարևոր խումբը այն անհատներն են, ովքեր իրականացնելու են մոնիթորինգը: Մոնիթորինգի իրականացման ընթացքում թիմերի ղեկավարներին տրվում է մոնիթորինգի գործիքի ճշգրտությունը ապահովելու առաջադրանք: Մոնիթորինգի գործիքը պետք է ներառի հանրային ծառայության կամ սոցիալական ծրագրի մատուցման այն չափանիշները, որոնք երաշխավորում են ծառայությունների և ծախսերի արդյունավետությունը և կոռուպցիոն գործողությունների հսկողությունը: Անհամապատասխանություններից խուսափելու համար «G-Watch»-ն առաջարկում է օգտագործել միայն մեկ մոնիթորինգի գործիք յուրաքանչյուր մոնիթորինգային վայրի համար:



ՕԳՏԱԿԱՐ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. «Գյումրու երիտասարդական քաղաքականության մշակում և ներդրում» ծրագրի կայքէջ, <https://bit.ly/2lp5EAF>
2. «Երիտասարդահեն զարգացման ուղենիշներ», «ԿԱՉԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամ, Երևան 2017, <https://bit.ly/2nPOtsS>
3. «Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն ՉԿ կողմից իրականացված՝ համայնքային ծառայությունների մասնակցային մոնիթորինգների արդյունքներ, <http://compass-center.org/hy/researches/>
4. «Համայնքի ծախսային քաղաքականության մեթոդաբանություն», Երևան, 2013 թ., <http://www.mtad.am/files/docs/498.pdf>
5. «Համայնքի ֆինանսական կառավարում» ուսումնամեթոդական ձեռնարկ, Վ. Շահբազյանի խմբ., Գորիսի երիտասարդական միություն ՉԿ, Երևան, 2009 թ.
6. «Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգ», ՀՀ կառավարության 2014 թ. դեկտեմբերի 25-ի նիստի N 54 արձանագրային որոշում, <http://www.minsportyouth.am/files/post/1463658067-hayecakarg.pdf>

7. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, 07.05.2002, 2016 թ. դեկտեմբերի 16-ի փոփոխություններով, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=125341>
8. Մասնակցային մոնիտորինգի ձեռնարկ, Բազելի կառավարման ինստիտուտ, 2016, <https://transparency.am/files/publications/1457119590-0-945767.pdf>
9. Ուղեցույց «Մասնակցային մոնիթորինգ և արդյունավետ կառավարման գնահատում: Մեթոդոլոգիա և գործիքներ», «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ, Երևան, 2016, <http://prwb.am/new/wp-content/uploads/2016/11/1-HAY.pdf>
10. Տեղական ժողովրդավարության դպրոցի թեմատիկ ընթերցանության կյուբեր, Թեմա 5՝ «Հանրային բնույթի ծառայություններ», Հ. Մանասյան, «Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» ծրագիր, 2017, http://celog.am/UploadedFiles/TrainigMaterials/T05_PublicServices.pdf
11. A Youth Participation Best Practice Toolkit, Save the Children, 2018, <https://www.youthpower.org/resources/youth-participation-best-practice-toolkit>
12. G-watch in local governanc”, A Manual on the Application of G-Watch in Monitoring Local Service Delivery, 2013, <https://www.g-watch.org/sites/default/files/resources//g-watch-local-governance.pdf>
13. Youth Participation in Development, Summary Guidelines for Development Partners, Restless Development and the United Nations (UN) Programme on Youth, 2010, <https://social.un.org/youthyear/docs/policy%20guide.pdf>
14. Ladder of Participation, A. Fletcher 2008, <https://bit.ly/2uE801m>
15. Roger Hart’s Ladder of Participation, 1992, <https://www.cph.co.nz/wp-content/uploads/RogerHartLadderOfParticipation.pdf>
16. Three models to consider when integrating youth participation into programs, Youth Power, <https://www.youthpower.org/youth-drg-toolkit-3-models-integrating-youth>

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ

Շուշանիկ Խուրշուդյան

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մարդու իրավունքների պաշտպանության, օրենքի գերակայության և ժողովրդավարության ամրապնդման ճանապարհին առանցքային նշանակություն ունի կանանց և տղամարդկանց հավասարությունը: Այն նաև կարևոր գործոն է երկրի տնտեսական, սոցիալական և այլ ոլորտների առաջխաղացման համար:

Գենդերային անհավասարությունը պայմանավորված է հասարակության կողմից կնոջն ու տղամարդուն վերագրվող՝ պատմականորեն արմատավորված դերերով: Այդ դերերի առաջացման և պահպանման պատճառները տարբեր հասարակություններում տարբեր են և կախված են մշակութային առանձնահատկություններից, ինչպես նաև պետության ու կրթական համակարգի զարգացածության մակարդակից: Սեռերի հետ կապվող այս կարծրատիպերն ու համոզմունքները իրավունքների իրացման և հասարակական կյանքում լիարժեք մասնակցության հնարավորության սահմանափակումների պատճառ են դառնում:

Միջազգային չափանիշներն ու սկզբունքները հստակ ամրագրում են, որ կանայք և տղամարդիկ ունեն հավասար իրավունքներ և հասարակական կյանքի բոլոր ոլորտներին հավարասապես մասնակցելու հնարավորություն:

Այսուհանդերձ, անհավասարության խնդիրներն ու դրանց բացասական հետևանքները շարունակում են տեղ գտնել աշխարհի տարբեր հասարակություններում, այդ թվում Հայաստանում: Չնայած մի շարք նախաձեռնություններին՝ դեռևս շատ անելիքներ կան կանանց և տղամարդկանց իրավունքների և հնարավորությունների ամբողջական հավասարության ապահովման ուղղությամբ: Այդ առումով չափազանց կարևոր են բռնության տարբեր ձևերի, աշխատանքային սահմանափակումների, քաղաքական իրավունքների իրացման խոչընդոտների և անհավասարության հետևանքով առաջացող այլ խնդիրների վերացմանն ուղղված քայլերը, որոնց շնորհիվ հավասարապես հասանելի կդառնան որակյալ կրթությունը, առողջապահական ծառայությունները և աշխատանքը հատկապես դեկավար և որոշումներ կայացնող պաշտոններում:

Սույն տեղեկատվական նյութում ներկայացված են կանանց և տղամարդկանց միջև անհավասարության հիմնական խնդիրներն ու դրանց կարգավորմանն ուղղված՝ առկա օրենսդրական նորմերը, միջազգային սկզբունքներն ու չափանիշները: Անդրադարձ է կատարվել նաև միջազգայնորեն փորձված և իր արդյունավետությունն ապացուցած գենդերային մեյնսթրիմինգի մեթոդաբանության և հասարակական կազմակերպությունների կողմից դրա կիրառմանը, ինչպես նաև գենդերային հավասարության խթանման համար օգտագործվող գործիքակազմին:

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սեռ և գենդեր: «Սեռ» եզրույթը վերաբերում է ֆիզիոլոգիային, այն է՝ կանանց և տղամարդկանց կենսաբանական ներքին ու արտաքին առանձնահատկություններին (օրինակ՝ կանանց վերարտադրողականությանը): «Գենդեր» եզրույթը բացահայտում է սեռերի միջև առկա սոցիալական տարբերությունները, այսինքն՝ դրանցից յուրաքանչյուրին վերագրվող դերը, առաքելությունը և հասարակական ու քաղաքական կյանքի տարբեր ոլորտներում գործունեության շրջանակը¹⁴⁷:

Գենդերային մեյնսթրիմինգ: Գենդերային մեյնսթրիմինգը քաղաքականության վերաձևակերպման, կատարելագործման, մշակման ու գնահատման սկզբունքների համալիր է, որի նպատակն է կյանքի բոլոր ոլորտներում

147. Հասկացությունների սահմանումները՝ ըստ Առողջության համաշխարհային կազմակերպության. տես <https://www.who.int/gender-equity-rights/knowledge/glossary/en/>:

և մակարդակներում ապահովել գենդերային հավասարություն:¹⁴⁸ Գենդերային մեյնսթրիմինգը միջազգայնորեն կարևոր նշանակություն ունի գենդերային հավասարության քաղաքականությունների մշակման և իրականացման համար: Այս մոտեցումը նպատակ ունի վերափոխել խնդրահարույց հարաբերությունները՝ պետության կողմից բոլոր քաղաքականություններում, ծրագրերում, գործընթացներում ու համակարգերում գենդերային հավասարության դրույթը համակարգված կերպով ներառելու միջոցով:

Գենդերային բյուջետավորում: Գենդերային բյուջետավորումը գենդերային մեյնսթրիմինգի կիրառումն է բյուջեյի նախագծման գործընթացում¹⁴⁹: Դա նշանակում է, որ բյուջեն պետք է գնահատվի՝ հաշվի առնելով գենդերային հեռանկարը բյուջետային գործընթացի բոլոր մակարդակներում և վերակառուցելով եկամուտներն ու ծախսերը՝ գենդերային հավասարության խթանման նպատակով: Ընդ որում՝ ի սկզբնաբե այս եզրույթի իմաստային շրջանակը ներառում էր միայն հանրային բյուջեների նախագծումը, իսկ այժմ այն տարածվում է բյուջեի բոլոր տեսակների վրա (ծրագրային, կորպորատիվ, հասարակական կազմակերպությունների և այլն): Թեև կարող է թվալ, թե բյուջեի նախագծումը գենդերային հավասարության տեսանկյունից չեզոք գործողություն է, սակայն իրականում այդպես չէ, քանի որ բյուջեի միջոցով ֆինանսավորվող քաղաքականությունն ուղղված է բնակչության հատուկ խմբերին և ունի հատուկ շահառուներ: Հետևաբար, գենդերային հավասարության խթանման տեսանկյունից թե՛ պլանավորման, թե՛ իրականացման ընթացքում կարևոր է ուսումնասիրել, թե ինչպիսի ազդեցություն ունի կամ կունենա տվյալ կազմակերպության կամ ինստիտուտի քաղաքականությունը տղամարդկանց և կանանց վրա:

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Անհավասարությունը և խտրականությունը խախտում են մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները և խոչընդոտում դրանց իրացմանը: Չնայած առկա օրենսդրական կարգավորումներին՝ կանանց և տղամարդկանց իրավահավասարության փաստացի իրագործման համար դեռևս առկա չեն բավարար երաշխիքներ, որի արդյունքում կյանքի տարբեր ոլորտներում արձանագրվում են կանանց իրավունքների ոտնահարման և

148. Հասկացությունը ընդունված է ՄԱԿ-ի, Եվրոպական հանձնաժողովի և Եվրոպայի խորհրդի կողմից: Այն սահմանվել է Եվրոպայի խորհրդի կողմից: Տե՛ս <https://rm.coe.int/1680596135>:

149. Գենդերային բյուջետավորումը. Գործնական կիրառության վերաբերյալ ձեռնարկ, Եվրոպայի խորհուրդ, 2009, էջ 5, <https://rm.coe.int/1680599885>:

Նրանց նկատմամբ խտրականության դրսևորման բազմաթիվ դեպքեր: Գենդերային անհավասարությունը բազմաթիվ խնդիրների հետևանք է հանդիսանում, որոնցից մի քանիսին կանդրադառնանք ստորև:

Քաղաքական և համայնքային կյանքին կանանց մասնակցության ցածր մակարդակը և որոշումների կայացման մակարդակում նրանց ներկայացվածության պակասը: Հանրության լայն շրջանակներում դեռևս տարածված են կանանց և տղամարդկանց տարբերակած դերերի վերաբերյալ կարծրատիպային համոզմունքներն ու տեսակետները: Լայնորեն ընդունված այդ կարծրատիպերի համաձայն՝ հանրային ոլորտում՝ քաղաքական և համայնքային կյանքում, առաջնային դեր են խաղում տղամարդիկ, իսկ կանայք ընկալվում են որպես ավելի պասիվ դիրք զբաղեցնող, հիմնականում ընտանիքի, երեխաների հոգսերով կամ տնային տնտեսությամբ զբաղվող: Ընդ որում՝ այդ խնդիրներն առավել ընդգծված են գյուղական բնակավայրերում և փոքր քաղաքներում, որտեղ կանանց նկատմամբ խտրական վերաբերմունքն ու նախապաշարմունքներն առավել կարծրացած են: Չնայած Հայաստանում կանայք իրենց կրթությամբ չեն զիջում տղամարդկանց¹⁵⁰, այնուամենայնիվ, դեռևս առկա է քաղաքական կյանքին կանանց նվազ ներգրավվածության խնդիրը: Կանայք ներկայացված չեն կամ շատ քիչ են ներայացված հանրային կառավարման տարբեր մակարդակների բարձր օղակներում՝ տեղական ինքնակառավարման մարմիններում, տարածքային կառավարման մարմիններում, գործադիր իշխանության հանրապետական մարմիններում, այլ գերատեսչություններում, ինչպես նաև օրենսդիր և դատական իշխանության մարմիններում:

Աշխատանքային իրավունքի իրացման խոչընդոտները՝ ցածր մրցունակություն աշխատաշուկայում, աշխատավարձային ճեղքվածք (տարբերություն): Աշխատանքային հարաբերությունները կարգավորող օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանում բացակայում է գենդերային խտրականությունը, ավելին՝ վերջինս արգելված է: Այսուհանդերձ, կանանց և տղամարդկանց անհավասարությունը աշխատաշուկայում շարունակվում է խնդրահարույց մնալ: Ընդ որում՝ կանայք ենթարկվում են թե՛ ուղղահայաց և թե՛ հորիզոնական խտրականության, քանի որ խնդիրների են բախվում ինչպես կարիերայի առաջխաղացման, այնպես էլ մասնագիտության ազատ ընտրության հարցում: Խնդիրներ են առաջանում թե՛ աշխատանքի ընդունվելիս, թե՛ աշխատանքը երեխայի ծննդյան

150. Տե՛ս ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ, «Գենդերային ճեղքվածք. կանանց նկատմամբ խտրական դրսևորումների ախտորոշիչ ուսումնասիրություն», 2016, http://www.unfpa.am/sites/default/files/2016_Gender-Gap-factsheet_Arm.pdf

պարագայում պահպանելիս և թե՛ աշխատավայրում առաջխաղացման տեսանկյունից: Աշխատանքի ընդունելիս որոշ դեպքերում նախապատվությունը տրվում է տղամարդ դիմորդին, քանի որ գործատուները խուսափում են կնոջ՝ մայրության արձակուրդի գնալու հեռանկարից: Մյուս կողմից, կանայք մայրության արձակուրդում գտնվելու պատճառով միջակ-ցությունից դուրս են մնում՝ մասնագիտական կարողություններով զիջելու հետևանքով: Աշխատանքի թափուր տեղերի վերաբերյալ հայտարարությունները շատ հաճախ պարունակում են խտրական պահանջներ, օրինակ՝ աշխատանքի ընդունման հիմնական նախապայման է նշվում կնոջ տարիքը կամ բարետես արտաքինը:

Առկա են նաև մասնագիտության ազատ ընտրության սահմանափակման դեպքեր, քանի որ հասարակությունում դեռևս շարունակում է գոյություն ունենալ այն կարծրատիպը, որ որոշ մասնագիտություններ ու աշխատանքներ, այսպես ասած, «հարմար» կամ «հարիիր» չեն կանանց: Կանայք հիմնականում ներգրավված են կրթության, առողջապահության, սոցիալական ապահովության, առևտրի և թեթև արդյունաբերության, իսկ տղամարդիկ՝ պետական կառավարման, պաշտպանության, առևտրի, ծանր արդյունաբերության և շինարարության ոլորտներում:

Տնտեսական ներուժի իրացման հնարավորության բացակայությունը կամ դրա սահմանափակումները: Առկա կարծրատիպերը խոչընդոտում են նաև կանանց ձեռնարկատիրական գործունեությանը և առհասարակ տնտեսական ներուժի օգտագործմանը: Կանայք և աղջիկները կազմում են աշխարհի բնակչության մոտ 50 տոկոսը՝ ընդհանուր ներուժի կեսը: Գեղերային անհավասարությունը խանգարում է հասարակության կայուն առաջընթացին, քանի որ կանանց ներուժի օգտագործումը և նրանց տնտեսական ակտիվությունը կարող են զգալիորեն նպաստել պետության տնտեսական աճի և արտադրողականության ու ընդհանուր արդյունավետության բարձրացմանը:

Կանանց նկատմամբ բռնություն, ընտանիքում բռնություն, թրաֆիքինգ և շահագործում: Կանանց նկատմամբ խտրականության առավել տարածված ձևերից է բռնությունը¹⁵¹, որը կարող է տեղի ունենալ տարբեր միջավայրերում՝ ընտանիքում, աշխատավայրում, և տարբեր դրսևորումներ ունենալ: Այս երևույթը մարդու հիմնարար իրավունքների և

151. «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա, հոդված 3 և «Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեի թիվ 19 ընդհանուր հանձնարարական», <https://www.refworld.org/docid/52d920c54.html>

ազատությունների խախտում է և բացասաբար է ներազդում թե՛ բռնութ-
յան ենթարկվածի, թե՛ անուղղակիորեն՝ բռնության ակատեսների վրա: Բռու-
նությունը վնաս է հասցնում անձի ֆիզիկական և հոգեկան առողջությանը,
ինչպես նաև բացասաբար ազդում հասարակության մեջ ինքնադրսևոր-
վելու, սեփական տեղը գտնելու և պաշտպանված լինելու հնարավորութ-
յունների վրա: Կանանց նկատմամբ բռնության ձևերից է նաև թրաֆիքին-
գը կամ շահագործումը: Դրա պատճառները կարող են լինել շատ տարբեր,
սակայն պետք է նշել, որ տնտեսական կայունության բացակայությունը
կամ սոցիալ-տնտեսական այլ խնդիրները բռնության այս տեսակի խթան-
ման ազդեցիկ գործոններ են:

**Առողջապահական ծառայությունների մատչելիության խնդիրը, առող-
ջության պահպանման իրավունքի իրացման սահմանափակումները:**
Կանանց իրավունքների և ազատությունների սահմանափակման մեկ
այլ դրսևորում է կանանց համար առողջապահական ծառայություննե-
րի անմատչելիությունը: Խնդիրը հատկապես ակներև է գյուղական բնա-
կավայրերում և փոքր քաղաքներում, քանի որ դրանցում մի շարք առող-
ջապահական ծառայություններ մատչելի չեն, որի հետևանքով կանայք
հնարավորություն չեն ունենում լիարժեք կերպով իրացնելու առողջութ-
յան պահպանման իրենց իրավունքը: Բժշկական հաստատությունների
անմատչելիությունից զատ, իրավունքի սահմանափակման դեպքեր են
գրանցվում նաև այդ հաստատությունների անձնակազմի կարծրատիպա-
յին մոտեցումների և մասնագիտական ոչ լիարժեք պատրաստվածության
պատճառով: Տարածված նման խնդիրներից է խտրական վերաբերմունքը
հաշմանդամություն ունեցող կանանց նկատմամբ՝ վերարտադրողական
ծառայություններից օգտվելիս:

Արդարադատության մատչելիության խնդիրը: Չնայած առկա օրենսդ-
րական կարգավորումներին՝ իրենց իրավունքների և ազատությունների
վերականգնման հարցերում կանայք շարունակում են ամերեսվել մի շարք
խնդիրների: Հաճախ հենց պետական իրավասու մարմինների ներկայա-
ցուցիչներն անգամ կարծրատիպային համոզմունքների կրողներ են լի-
նում, ինչը հանգեցնում է կանանց իրավունքների ոտնահարմանը և նրանց
նկատմամբ խտրական վերաբերմունքի: Տուժողներին պետության կողմից
տրամադրվող ծառայությունների բացակայությունը, իրավասու մարմին-
ների կարծրատիպային և խտրական մոտեցումները, մասնագիտական
կարողությունների անլիարժեքությունը և դրանց արդյունքում առաջացող
մի շարք այլ խնդիրները խոչընդոտում են կանանց՝ արդարադատության
մատչելիության իրավունքի իրացումը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐԸ, ԶԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Կանանց և տղամարդկանց հավասարության խթանումը, դեռևս 1970-ական թվականներից սկսած, միջազգային կազմակերպությունների (ՄԱԿ, ԵՄ, ԵԽ և այլն) քաղաքականության կարևորագույն բաղադրիչներից է: Այս կազմակերպություններն իրենց առաջնահերթությունների շարքում են նշում կանանց իրավունքների պաշտպանությունը և պահպանությունը, գենդերային խտրականության դեմ պայքարը, ինչպես նաև գենդերային հավասարության հաստատման ուղղությամբ լայնածավալ աշխատանքների իրականացումը: Միջազգային և եվրոպական կազմակերպությունների կողմից իրականացվող նախաձեռնություններն օրեցօր ավելի են զարգանում և տարածվում: Այսպես, թափ են առել ֆեմինիստական մոտեցումներից բխող միջոցառումները, իսկ հավասարության խթանման քաղաքականությանը լրացնում են քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ծրագրերն ու գործունեությունը:

Կանանց իրավունքների և ընդհանրապես գենդերային խտրականության բացառման սկզբունքն ամրագրվել է մի շարք միջազգային փաստաթղթերում, այդ թվում՝ թե՛ մարդու իրավունքների ու ազատությունների վերաբերյալ ընդհանուր բնույթի և թե՛ բացառապես կանանց իրավունքներին ու ազատություններին վերաբերող միջազգային իրավական ակտերում: Գենդերային խտրականության բացառումն առաջին անգամ ամրագրվել է 1948թ. «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում»: Խտրականության արգելքը ամրագրված է նաև Եվրոպայի խորհրդի՝ 1950 թ. «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում»: Կանանց իրավունքները և ազատություններն ամրագրող հիմնական փաստաթուղթն է 1978 թ. ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան» (CEDAW), որի նպատակն է բացառել գենդերային անհավասարությունը և ապահովել պետությունների կողմից օրենսդրական, քաղաքական, սոցիալական, ֆինանսական և մշակութային բոլոր համապատասխան միջոցների կիրառումը: Հայաստանն այս կոնվենցիան վավերացրել է 1993 թ.՝ ստանձնելով կանանց և տղամարդկանց արմատավորված անհավասարության վերացման, կանանց իրավունքների պաշտպանության և երաշխիքների սահմանման պարտականությունները: Կոնվենցիայի կիրարկման արդյունավետության մոնիթորինգի նպատակով ստեղծվել է կոնվենցիայի մշտադիտարկման մեխանիզմ՝ CEDAW կոմիտեն: Այն պետությունները, որոնք վավերացրել են կոնվենցիան, չորս տարին մեկ պարտավոր են ազգային զեկույց

Ներկայացնել հավասարության քաղաքականության առաջընթացի և համապատասխան պարտավորությունների գնահատման համար: 1995 թվականին ընդունվել են Պեկինի՝ «Հավասարություն, զարգացում, խաղաղություն» նշանաբանով հռչակագիրն ու գործողությունների ծրագիրը, որոնք կանանց հզորացմանն ուղղված առաջին միջազգային մեխանիզմն են: Ընդ որում դրանցում կանանց հզորացումը դիտարկվում է որպես հավասարության, զարգացման և խաղաղության հաստատման համար անհրաժեշտ և հիմնական նախադրյալ: Նշված հարցերին է առնչվում նաև ՄԱԿ-ի «Կայուն զարգացման 17 նպատակներից» 5-րդը, այն է՝ հասնել գենդերային հավասարության և իրավագործել բոլոր կանանց ու աղջիկներին:

ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՈՒ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՀԵՆՔԸ

ՀՀ Սահմանադրությունն ամրագրում է կանանց և տղամարդկանց հավասարությունը և խտրականության բոլոր ձևերի արգելքը: Խտրականությունն արգելող դրույթներ առկա են նաև կարգավորման տարբեր առարկա ունեցող օրենքներում:

Օրենքի առջև հավասարությունն ու խտրականության արգելքն ամրագրված են ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածում. «խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է»: Հաշվի առնելով կանանց և տղամարդկանց հավասարության կարևորությունը՝ այս սկզբունքն առանձին ամրագրվել է Սահմանադրության 30-րդ հոդվածում, համաձայն որի՝ «կանայք և տղամարդիկ իրավահավասար են», իսկ ըստ Սահմանադրության 86-րդ հոդվածի՝ պետության քաղաքականության հիմնական նպատակներից է կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության խթանումը: Կանանց և տղամարդկանց իրավահավասարության ապահովման երաշխիքներ են նախատեսված նաև «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին» 2013 թ. ՀՀ օրենքում, որը, սակայն, գործուն մեխանիզմների բացակայության պատճառով արդյունավետորեն չի կիրարկվում:

Չնայած առկա օրենսդրական կարգավորումներին՝ շարունակվում են արձանագրվել կանանց իրավունքների ոտնահարման և նրանց նկատմամբ

խտրականության դրսևորման դեպքեր: Ուստի՝ անհրաժեշտ է համապատասխան միասնական պետական քաղաքականություն վարել, մշակել ազգային ռազմավարություն և համապատասխան գործողությունների ծրագիր, որոնք նշված խնդիրների դեմ կազմակերպված պայքար կմղեն և կգտնեն համակարգային լուծումներ:

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ 5 ՍԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ

Գենդերային հավասարության հաստատման գործում, ինչպես նշվեց վերևում, կարևորագույն միջոց է գենդերային մեյնսթրիմինգը (տե՛ս «Հիմնական հասկացություններ»), որը խնդիրների հաղթահարման համալիր և համապարփակ գործիքակազմ է: Հետևյալ հինգ սկզբունքները¹⁵² ամփոփում են գենդերային մեյնսթրիմինգի բոլոր գործողություններն ու միջոցառումները:

1. Գենդերային զգայուն լեզու

Բովանդակությունը, ընտրված բառակազմը և խոսքն առհասարակ պետք է ուղղված լինեն հավասարապես. կինն ու տղամարդը պետք է հստակ տեսանելի լինեն դրանցում: Հայերենում, ի տարբերություն մի շարք այլ լեզուների, բացակայում է դերանունների և հոլովածների սեռային տարբերակումը, ինչի շնորհիվ՝ լեզվում գենդերային անհավասարության խնդիրն այնքան էլ սուր չէ, այսուհանդերձ պետք է ուշադիր լինել և ձեռնպահ մնալ գենդերային շեշտադրումներից: Գենդերային զգայունությանը պետք է հետևել փաստաթղթերում, հեռախոսով կամ հաղորդակցության այլ միջոցներով տեղեկության փոխանցելիս, ինչպես նաև գովազդի ներկայացման և հաղորդակցման այլ ձևերի ընթացքում:

2. Գենդերային տարանջատմամբ վիճակագրություն և վերլուծություն

Վիճակագրության վարումը, տվյալների հավաքագրումը և դրանց մշակումը պետք է իրականացվեն գենդերային տարանջատմամբ: Հնարավորության դեպքում պետք է նաև ներառվեն սոցիալական և այլ առանձնահատկությունները, որոնք կնպաստեն վիճակագրության և իրավիճակի հստակ պատկերի ձևավորմանը:

152. Գենդերային մեյնսթրիմինգի հինգ սկզբունքները, «Գենդերային մեյնսթրիմինգի պարզեցման մասին» ձեռնարկ, Վիեննայի քաղաքապետարան, 2011, <https://www.wien.gv.at/english/administration/gendermainstreaming/principles/five-principles.html>

3. Ծառայությունների հավասար հասանելիություն և օգտագործում

Ծառայությունների հասանելիությունը պետք է գնահատել ըստ կանանց և տղամարդկանց վրա թողած ազդեցությունների տարբերության: Իսկ ծառայությունները նախագծելիս պետք է հաշվի առնվեն դրանց շահառուները, թիրախային խմբերը և կանանց ու տղամարդկանց միջև առկա տարբերությունները:

4. Որոշումների կայացման գործընթացներում կանանց և տղամարդկանց հավասար ներգրավում

Հասարակական կյանքում գենդերային հավասարությունը ապահովելու նպատակով անհրաժեշտ է համապատասխան միջոցառումներ և ռազմավարություններ մշակել, ադ թվում՝ որոշումների կայացման գործընթացներում կանանց և տղամարդկանց հավասար ներգրավվածության պարտադիր թիրախներ սահմանելով: Այս սկզբունքով է պետք առաջնորդվել նաև սեփական գործունեության ընթացքում՝ միջոցառումներ և աշխատանքներ կազմակերպելիս, աշխատանքային խմբեր ձևավորելիս և այլն:

5. Հավասար մոտեցման ներառում կառավարման գործընթացներում

Կանանց և տղամարդկանց տարբերությունները հաշվի առնելը նպաստում է հաջողությանը և անձնակազմի ու ռեսուրսների առավելագույնս արդյունավետ օգտագործմանը: Անձանց հետ կապված բոլոր թիրախները և նպատակները պետք է սահմանվեն լիարժեք հավասարության տեսանկյունից և ուստի՝ պետք է տարանջատվեն ըստ սեռերի:

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՄԵՅՆԱԹՐԻՄԻՆԻԳԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՂԱԶԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները (ԹՀԿ) ժողովրդավարության, օրենքի գերակայության և իրավունքների պաշտպանության խթանմանն ուղղված իրենց գործունեության միջոցով նպաստում են հանրային շահին՝ այդպիսով միջնորդի դեր կատարելով պետության և հասարակության առանձին անդամների միջև:

Հավասարության ապահովման նպատակով ԹՀԿ-ները պետք է հաշվի առնեն գենդերային չափանիշները՝ դրանք ներառելով սեփական գործունեության և քաղաքականության մշակման մեջ: Այս առումով հատկապես

կարևորվում է ԶՅԿ-ների կողմից խոցելի խմբերի ներկայացուցիչներին տարբեր ծառայությունների մատուցումը և աջակցության տրամադրումը այն դեպքերում, երբ պետությունն անկարող է ապահովել դրանց մատչելիությունը բոլորի համար: Ուստի՝ ԶՅԿ-ները կարևոր դերակատարում ունեն ժողովրդավարության ինստիտուտի ամրագրման, հասարակության շրջանում համերաշխության ու սոցիալական ներգրավվածության ամրապնդման, ինչպես նաև հանրային երկխոսության ձևավորման գործում: Նշվածներն ակնհայտորեն մատնանշում են ԶՅԿ-ների աշխատանքում գենդերային մեյնսթրիմինգի ներառման անհրաժեշտությունը, քանի որ ԶՅԿ-ների ջանքերի զգալի մասն ուղղված է անհավասարության վերացմանը և բոլոր քաղաքացիների իրավունքների ու ազատությունների հավասար իրացմանը, որը խնդրո առարկա թե՛ կանանց իրավունքների պաշտպանությամբ, թե՛ գենդերային անհավասարության վերացմամբ և դրա դեմ պայքարով և թե՛ այլ ոլորտներով զբաղվող կազմակերպությունների համար:

Կարևոր է նաև հիշել, որ գենդերային մեյնսթրիմինգը ոչ թե փոխարինում է առկա հնարավորությունները կամ գործող քաղաքականությունն ու ծրագրերը, այլ էականորեն լրացնում է դրանց: Հետևաբար, դրա սկզբունքները հարկավոր է պահպանել ոչ միայն քաղաքականության մշակման և իրականացման ընթացքում, այլև հենց ԶՅԿ-ների աշխատանքում:

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԽԹԱՆՈՂ ՄԵԹՈԴՆԵՐ

Գենդերային մեյնսթրիմինգի և դրա լիակատար գործադրման նպատակով տարիների ընթացքում մշակվել են մի շարք մեթոդներ, որոնցից մի քանիսն արդեն իսկ ապացուցել են իրենց արդյունավետությունը միջազգային մակարդակում: Այսուհանդերձ, հարկ է նշել, որ յուրաքանչյուր կազմակերպություն կարող է էլ ավելի բարելավել ընտրված մեթոդի արդյունավետությունը՝ այն հարմարացնելով սեփական կարիքներին ու ընդհանուր նպատակներին կամ զուգակցելով մյուս մեթոդների հետ:

Աստիճանի մեթոդ¹⁵³

Գենդերային հավասարության և կանանց հզորացմանն ուղղված այս մեթոդը մշակվել է Շվեդիայի կառավարության՝ Գենդերային մեյնսթրիմինգի աջակցության հանձնաժողովի կողմից: Այն ներառում է ութ քայլ՝

1. Հիմնարար ընկալում. կազմակերպության բոլոր անդամների, կառավարման բոլոր մակարդակների ներկայացուցիչների համար գենդերային հավասարության հիմնախնդիրների վերաբերյալ կրթական և վերապատրաստման ծրագրերի իրականացում:
2. Փոփոխությունների իրականացման համար նախապայմանների առկայության ուսումնասիրություն. արդյո՞ք կա գենդերային մեյնսթրիմինգի կիրառման ընդհանուր կամք, որո՞նք են հնարավոր օգուտները և խոչընդոտները:
3. Աշխատանքների պլանավորում և կազմակերպում. կարևոր է սահմանել առաջնահերթությունները և հետևել աշխատանքի կազմակերպման ցուցիչներին:
4. Գործունեության ուսումնասիրություն. հարկավոր է ուսումնասիրել վերլուծության ենթակա և բարելավման կարիք ունեցող հարցերը և հստակեցնել նպատակները:
5. Վերլուծություն. անհրաժեշտ է ուսումնասիրել և վերլուծել ինստիտուցիոնալ գործունեության իրականացումը գենդերային հավասարության տեսանկյունից:
6. Սահմանել միջոցառումներ. նախագծել իրականացման պլանը գենդերային հավասարությունն ապահովող գործունեության նպատակներ ու ցուցանիշներ ներառելով՝ ի՞նչ ենք ցանկանում փոխել, ի՞նչ քայլեր և ինչպե՞ս պետք է իրականացնել, ինչպե՞ս ենք չափելու մեր գործողությունների հաջողությունը:

153. Հանրային ծառայությունում գենդերային հավասարությունը, օգտակար խորհուրդներ գենդերային մեյնսթրիմինգի վերաբերյալ, Գենդերային մեյնսթրիմինգի Շվեդական աջակցության հանձնաժողով, Շվեդիայի կառավարության գեկոյց, 2007, էջ 50-53, <https://www.government.se/49b730/contentassets/3d89b0f447ec43a4b3179c4a22c370e8/gender-equality-in-public-services-sou-200715>

7. Միջոցառումների իրականացում. իրականացնել նախագծված գործողությունները:
8. Արդյունքի գնահատում. Գնահատել առաջընթացը գենդերային հավասարության տեսանկյունից՝ արդյոք հասանք սահմանված նպատակներին, ինչ դասեր քաղեցինք, որոնք են հետագա քայլերը:

4 R-ի մեթոդ¹⁵⁴

Շվեդական հաջորդ մեթոդը հիմնված է չորս քայլերի վրա՝ ներկայացվածություն, ռեսուրսներ, իրականություն (իրականության արտացոլում) և իրականացում¹⁵⁵: Գենդերային մեյնսթրիմինգի այս մոդելի 1-ին քայլի՝ ներկայացվածության նպատակն է բացահայտել պաշտոնական և ոչ պաշտոնական մակարդակներում որոշումների կայացման գործընթացում կանանց և տղամարդկանց ներկայացվածության աստիճանը: Երկրորդ քայլը կանանց և տղամարդկանց շրջանում ռեսուրսների՝ գումարի, հնարավորությունների, ժամանակի և ծառայությունների տնօրինման ուսումնասիրության իրականացումն է: Երրորդ՝ այս քայլի ընթացքում պետք է բացահայտել, թե կազմակերպության կողմից ներառված կամ կիրառվող նորմերը ինչպես են ազդում գենդերային հավասար ներկայացուցչության ու ռեսուրսների բաշխման վրա: Չորրորդ՝ նախորդ քայլի արդյունքում ձեռքբերված տվյալներն օգտագործվում են հետագայում քաղաքականության մշակման, նոր նպատակների սահմանման և աշխատանքների ուղենշման համար:

10 քայլի մեթոդ¹⁵⁶

«Տասը քայլի» մեթոդը հանրային կառավարման ոլորտում գենդերային մեյնսթրիմինգի ներդրման միջազգայնորեն ամենատարածված և փորձված մեթոդներից է: Այն մշակվել է ՄԱԿ-ի Չարգացման ծրագրի (ՄԱՉԾ) և Եվրոպական հանձնաժողովի կողմից: Առաջին քայլը վերաբերում է քաղաքականության կայացման գործընթացում ներգրավված մարդկանց: Վերջիններս իրենց արժեքների և գենդերային հիմնախնդիրների վերաբերյալ պատկերացումներով ցանկացած քաղաքականության

154. Նույն տեղում, էջ 53:

155. Անգլերեն՝ Representation, Resources, Realia, Realization

156. Գենդերային մեյնսթրիմինգի ձեռնարկ՝ զբաղվածության, սոցիալական ներառման և սոցիալական պաշտպանության քաղաքականություններ, Եվրոպական համայնքներ, 2008, http://eugender.itcilo.org/toolkit/online/story_content/external_files/TA_DW_EC.pdf

կամ նախագծի արդյունքի վրա ազդող զգալի գործոն են: Երկրորդ քայլը հիմնական խնդրի՝ գենդերային օրակարգի, զարգացման նախանշումն է և կանանց ու տղամարդկանց տարբերակված մոտեցմամբ կամ թերութայն-ներով քաղաքականության բացահայտումը: Երրորդ և չորրորդ քայլերը համապատասխանաբար ենթադրում են նպատակների հստակ սահմա-նում և ներկա վիճակի քարտեզագրում, որոնց հետևում է քաղաքակա-նության վրա ազդեցություն ունեցող բոլոր տեղեկությունների հավաքագրման, հետազոտությունների և ուսումնասիրությունների իրականացման, տվյալ-ների մշակման և վերլուծության հիմնադրույթ քայլը: Հաջորդ՝ 6-րդ քայլը մի-ջամտությունների իրականացումն է և բյուջեի կազմումը նախորդ փուլում ձեռքբերված տվյալների գնահատման հիման վրա: Այնուհետև իրակա-նացվում է գենդերային մենսաթրիմինգի գործողությունների աջակցմանն ուղղված ռազմավարությունների մշակում (քայլ 9), այդ գործողությունների մշտադիտարկում (քայլ 8) և արդյունքների գնահատում (քայլ 9): Վերջին՝ 10-րդ քայլը ստացած արդյունքների տարածումն է:

Մեթոդի ընտրության սկզբունքները

ԹՀԿ-ների կողմից գենդերային հավասարության խթանման համար լավագույն մոդելը միջազգայնորեն ընդունված և գործնականում հաջողության հասած մեթոդներն են, որոնց ընտրությունը պետք է կատարել՝ ելնելով տեղական խնդիրներից և առանձնահատկություններից, ինչպես նաև տվյալ ժամանակահատվածում բնորոշ հարցերից:

Կարևոր է մտապահել հետևյալ հարցերը՝

- Ինչպե՞ս փոփոխություններ իրականացնել,
- Ինչպե՞ս ապահովել գենդերային հավասարությունը և զգայունությունը, ներառյալ ԹՀԿ-ի աշխատանքում,
- Որտեղի՞ց սկսել, ինչի՞ն ուշադրություն դարձնել, ինչպե՞ս պատրաստվել:

Նախապատրաստական փուլի ընթացքում պետք է որոշել՝ ինչպես սկսել և ինչ ուղղությամբ շարժվել: Այս փուլին հաջորդում է կազմակերպության վերլուծությունը, անհրաժեշտ փոփոխությունների նախանշումը, ռազմավարության և գործողությունների ծրագրի մշակումը: Այնուհետև ժամանակն է իրականացնել գործողությունների ծրագիրը, ծրագրի մշտադիտարկումը և գնահատումը:

ԿԱՆԱՆՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ, ԶԱՂԱԶԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ

Գենդերային հավասարությունը կարևոր է ոչ միայն հիմնարար իրավունքների և ազատությունների իրացման, այլև հասարակության խաղաղ գոյատևման ու կայուն զարգացման և առաջընթացի տեսանկյունից: Օրինակ, կանանց թերի ներկայացվածության խնդիրների դեմ պայքարը և դրանց կանխարգելումը կարևոր է ոչ միայն կանանց իրավունքների և ազատությունների իրացման, այլև հասարակական կյանքի տարբեր ոլորտների զարգացման և օրենքի գերակայության ու ժողովրդավարության ամրապնդման համար: Մի բան է օրենսդրորեն ամրագրել մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները, և մեկ այլ բան՝ ապահովել դրանց կիրարկումը: Չափազանց կարևոր են նաև հասարակության տեղեկացվածության և գիտակցության բարձրացմանն ուղղված քայլերը: Ուստի՝ իրավունքների իրացումը երաշխավորելու, խտրականությունը լիովին վերացնելու և հավասարության հաստատման համար անհրաժեշտ է գործողությունների համալիր մոտեցում:

Ստորև, ըստ առկա խնդիրների դասակարգման, նշված են դրանց հաղթահարման համար ԶՀԿ-ների կողմից կիրառվող մի շարք գործիքներ:

Կանանց մասնակցությունը քաղաքական և համայնքային կյանքին

- Իրավասու պետական մարմինների հետ համագործակցության բարելավում օրենսդրական նախաձեռնությունների շրջանակում: Դաշտային աշխատանք իրականացնող ԶՀԿ-ները օրենսդրական նորմերի գործնական կիրառության ժամանակ առաջինն են տեսնում դրանց ազդեցությունը հասարակության տարբեր անդամների վրա: Ուստի, լավատեղյակ լինելով գործնական խնդիրներից, ԶՀԿ-ները կարող են մատնանշել և՛ օրենսդրական բացերը, և՛ գործնական կիրառության թերությունները:
- Հասարակության լայն շրջանակների համար իրազեկման միջոցառումների ու դասընթացների կազմակերպում՝ քաղաքական կյանքին կանանց մասնակցությունը խթանելու նպատակով:
- Կանանց կարողությունները զարգացնող այնպիսի դասընթացների կազմակերպում, որոնք կօգնեն կանանց առաջադրվել տեղական ինքնակառավարման և այլ ընտրություններում կամ էլ կաջակցեն առաջադրված թեկնածուներին: Հնարավոր թեմաներից կարող են լինել լիդերության խթանումը, հռետորական խոսքի զարգացումը, քաղաքական, տնտեսական և սոցիալական տարբեր հարցերը:

Կանանց մասնակցությունը տնտեսական կյանքին և նրանց աշխատանքային իրավունքների իրացումը

- Վերապատրասման դասընթացների կազմակերպում, որոնք ուղղված կլինեն կանանց կարողությունների զարգացմանը և հաշվի կառնեն տնտեսության՝ տվյալ պահին ակտուալ կարիքները.
- Իրազեկման աշխատանքներ հասարակության լայն շրջանակների համար՝ միտված կանանց տնտեսական ակտիվության և աշխատանքային իրավունքների ազատ իրացման շուրջ առկա կարծրատիպերի վերացմանը.
- Դասընթացների կազմակերպում, որոնք կանանց լավագույնս կտեղեկացնեն իրենց աշխատանքային իրավունքների և հնարավոր խախտումների դեպքում դրանց վերականգնման մեխանիզմների մասին.
- Հիմնական և երեխայի ինսամբի ընթացքում կանանց տրամադրվող պետական աջակցության մեխանիզմների թեմայով պետական իրավասու մարմինների հետ աշխատանքների իրականացում.
- Նպատակային արձակուրդում գտնվող կանանց համար կարողությունների զարգացման վերապատրաստումների կազմակերպում, ինչը կնպաստի նրանց մրցունակության պահպանմանը.
- Գործարար մենթորության ծրագրերի նախաձեռնում.
- Առանձին ծրագրերի իրականացում՝ ուղղված հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների սահմանափակումների վերացմանն ու դրանց ազատ իրացմանը:

Բռնության վերացում և կանխարգելում

- Կանանց նկատմամբ բռնության տարբեր տեսակների վերաբերյալ հասարակության իրազեկմանն ուղղված արշավների իրականացում՝ օրենսդրական կարգավորումների ներառմամբ:
- Տղամարդկանց հետ աշխատանք՝ ուղղված բռնության, դրա շուրջ սխալ ընկալումների և առհասարակ առկա կարծրատիպային մոտեցումների վերացմանը:
- Արշավների կամ իրազեկման այլ միջոցառումների իրականացում հեղինակություն վայելող կամ հաջողակ պատմություն ունեցող անձանց ներգրավմամբ:

- Իրավասու մարմինների կարողությունների, մասնագիտական գիտելիքների (հատկապես տուժողների հետ աշխատելու հմտությունների) զարգացմանն ուղղված վերապատրաստումների կազմակերպում:

Գենդերային հավասարության հաստատման, կանանց տնտեսական, քաղաքական և համայնքային ակտիվության խթանման համար օգտագործվող գործիքները կարող են լինել շատ տարբեր: Սակայն դրանք պետք է հստակ ընտրված լինեն՝ կոնկրետ խնդրի լուծմանը հասնելու նպատակով, որպեսզի հնարավորինս թիրախային մոտեցմամբ երաշխավորվի խնդրների լուծման արդյունավետությունը:



ՕԳՏԱԿԱՐ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Ներպետական օրենսդրական կարգավորումներ

1. ՀՀ Սահմանադրություն, 06.12.2015, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=102510>
2. ՀՀ օրենքը «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին», 20.05.2013, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=83841>
3. ՀՀ օրենքը «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին», 13.12.2017, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=118672>
4. ՀՀ ընտանեկան օրենսգիրք, 09.11.2004, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=119102>
5. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 05.05.1998, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=134770>
6. ՀՀ քրեական օրենսգիրք, 18.04.2003, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=133865>

7. ՀՀ ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքը, 25.05.2016, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=123532>
8. ՀՀ աշխատանքային օրենսգիրք, 09.11.2004, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=126314>
9. ՀՀ կառավարության «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» 2017 թվականի մայիսի 4-ի N 483-Ն որոշում, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=133093>
10. ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետությունում գեղերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարությանը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» 2019 թվականի սեպտեմբերի 19-ի N 1334-Լ որոշում, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=134904>

Միջազգային փաստաթղթեր

1. «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա (2011 թ.)¹⁵⁷
2. «Հավասարություն, զարգացում, խաղաղություն» նշանաբանով Պեկինի հռչակագիրը և գործողությունների ծրագիրը (1995 թ.)
3. ԱՄԿ-ի «Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության մասին միջազգային կոնվենցիա» (1990 թ.)¹⁵⁸
4. ԱՄԿ-ի «Համարժեք աշխատանքի դիմաց տղամարդկանց և կանանց հավասար վարձատրման մասին» կոնվենցիա (1951 թ.)¹⁵⁹
5. ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիան (1978թ.)¹⁶⁰

157. Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է 2018 թվականին

158. Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է 2013 թվականին

159. Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է 1995 թվականին

160. Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է 1993 թվականին

6. ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի կամընտիր արձանագրություն (1999թ.)¹⁶¹
7. ՄԱԿ-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիա (2006 թ.)¹⁶²
8. ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի բանաձևեր խաղաղության անվտանգության շրջանակներում կանանց դերի, հակամարտություններում սեռական բռնության վերաբերյալ: Բանաձևեր թիվ 1325, 1820, 1888, 1889, 1960, 2106 և 2122
9. ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներ, գենդերային հավասարության և բոլոր կանանց ու աղջիկներին հզորացման վերաբերյալ 5-րդ նպատակ, <https://sustainabledevelopment.un.org/sdg5>
10. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա (Եվրոպայի խորհուրդ, 1948 թ.)¹⁶³
11. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր¹⁶⁴
12. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր¹⁶⁵
13. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների վերաբերյալ միջազգային դաշնագիր¹⁶⁶

Ձեկույցներ, վերուժություններ, ուղեցույցներ

1. Գենդերային բյուջետավորումը. Գործնական կիրառության վերաբերյալ ձեռնարկ, Եվրոպայի խորհուրդ, 2009, <https://rm.coe.int/1680599885>
2. Գենդերային հավասարության քաղաքականության մշակման ձեռնարկ, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմա-

161. Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է 2006 թվականին

162. Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է 2010 թվականին

163. Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է 2002 թվականին

164. Ընդունվել և հռչակվել է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից 1948 թ. դեկտեմբերի 10-ին՝ 217 Ա (III) բանաձևի համաձայն:

165. Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է 1993 թվականին

166. Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է 1993 թվականին

- կերպություն, 2016, <https://www.oecd.org/dac/gender-development/Handbook-OECD-DAC-Gender-Equality-Policy-Marker.pdf>
3. Գենդերային ճեղքվածք. կանանց նկատմամբ խտրական դրսևորումների ախտորոշիչ ուսումնասիրություն, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ, 2016, http://www.unfpa.am/sites/default/files/2016_Gender-Gap-factsheet_Arm.pdf
 4. Գենդերային մեյնսթրիմինգի ձեռնարկ՝ զբաղվածության, սոցիալական ներառման և սոցիալական պաշտպանության քաղաքականություններ, Եվրոպական համայնքներ, 2008, http://eugender.itcilo.org/toolkit/online/story_content/external_files/TA_DW_EC.pdf
 5. Կանանց բռնության դեմ պայքար. Աջակցության ծառայությունների համար նվազագույն չափանիշներ, Եվրոպայի խորհուրդ, 2008, [https://www.coe.int/t/dg2/equality/domesticviolencecampaign/Source/EG-VAW-CONF\(2007\)Study%20rev.en.pdf](https://www.coe.int/t/dg2/equality/domesticviolencecampaign/Source/EG-VAW-CONF(2007)Study%20rev.en.pdf)
 6. Կանանց նկատմամբ խտրական դրսևորումների ախտորոշիչ ուսումնասիրություն, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ, 2016, <http://armenia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/Gender-Gap-UNFPA-brief-final.pdf>
 7. Համաշխարհային գենդերային ճեղքվածքի զեկույց, 2018, <https://www.weforum.org/reports/the-global-gender-gap-report-2018>
 8. Հայաստանում ընտանեկան բռնությանը բազմաոլորտային արձագանքի տրամադրման առկա պրակտիկայի և նախաձեռնությունների արդյունավետության բարձրացմանն ուղղված որակական հետազոտություն, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ, 2017, http://armenia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/Reserach_Arm-Final%20with%20logos-upd_0.pdf
 9. Հանրային ծառայությունում գենդերային հավասարությունը, օգտակար խորհուրդներ գենդերային մեյնսթրիմինգի վերաբերյալ, Գենդերային մեյնսթրիմինգի Շվեդական աջակցության հանձնաժողով, Շվեդիայի կառավարության զեկույց, 2007, <https://www.government.se/49b730/contentassets/3d89b0f447ec43a4b3179c4a22c370e8/gender-equality-in-public-services-sou-200715>
 10. Տղամարդիկ և գենդերային հավասարության հիմնախնդիրը Հայաստանում, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ, 2016, http://armenia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/MEN-AND-GENDER-EQUALITY_ARM_July_2017_finalized_0.pdf

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԻՄՆԱԶԱՐՑԵՐԸ ԵՎ ԿԱՆԱՆՑ ՀՁՈՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Ալենկա Վերբոլե

ԳԵՆԴԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հզորացում: Տարբերակների ամբողջ տիրույթը, որոնցով ստեղծվում են հնարավորություններ և հզորացվում են անհատական և կոլեկտիվ կարողությունները՝ ուղղված անհատների կյանքի նկատմամբ հսկողության իրացմանը և նրանց ավելի բազմազան ընտրության հնարավորություններ տալուն: Այդ իմաստով, հզորացումը կարող է նշանակել ռեսուրսների նկատմամբ հասանելիություն կամ հսկողություն, ինչպես նաև ինքնորոշում և մասնակցություն:

Գենդեր: Կանանց և տղամարդկանց միջև սոցիալական և մշակութային տարբերությունները, որոնք կանանց և տղամարդկանց արժեքներ են վերագրում և կյանքում ստեղծում են անհավասար հնարավորություններ: Այսպիսի բնութագրիչները փոփոխական են: Քաղաքականություններն ու կառույցները որոշիչ դեր ունեն կենսապայմանների ձևավորման գործում, և այդ կերպ դրանք հաճախ ինստիտուցիոնալացնում են գենդերի սոցիալական կառուցվածքը:

Գենդերային վերլուծությունը: Կանանց և տղամարդկանց վերագրված

դերերում պայմանների, կարիքների, մասնակցության ցուցանիշների, ռեսուրսների հասանելիության և զարգացման, ակտիվների վերահսկողության, որոշում կայացնելու լիազորությունների միջև տարբերությունների ուսումնասիրություն: Գենդերային վերլուծությունը գենդերի՝ քաղաքականությունների և ծրագրերի մեջ ներառման հիմքն է (ինչպես բացատրված է ստորև) և օգնում է հասկանալ գենդերային անհավասարությունները կոնկրետ իրավիճակում կամ ոլորտում և ձևակերպել նախագծերը կամ (ոլորտային) ծրագրերն այնպես, որ դրանք ուղղված լինեն կոնկրետ իրադրությանը և շտկեն այն: Գենդերային վերլուծությունը նաև օգնում է հասկանալ անհավասարությունների արմատական պատճառները, ծրագրի արդյունքների վրա դրանց ազդեցության ձևերը, հաղթահարման ուղիները, ինչպես նաև օգնում է բացահայտել՝ արդյոք կամ կանանց և աղջիկների համար կոնկրետ, թիրախավորված գործողությունների անհրաժեշտություն (կամ, տվյալ իրավիճակում, տղամարդկանց կամ տղաների համար): Ի վերջո, այն առնվազն օգնում է հասկանալ, թե ինչպես կարելի է լրացուցիչ վնաս չպատճառել («մի վնասիր» սկզբունքով)՝ այսպիսով խուսափելով ոչ ճիշտ ենթադրություններից և կարծրատիպերից, ինչպես նաև ուժի անհավասար հարաբերությունների վերարտադրումից:

Գենդերային հավասարություն: Խտրականության բացակայություն գենդերի հատկանիշով՝ ռեսուրսների հատկացման, օգուտների և ծառայություններին հասանելիության տեսանկյունից:

Գենդերային իրավահավասարություն: Օրենքով և գործնականում հանրային ոլորտում ու մասնավոր կյանքում կանանց և տղամարդկանց միջև օգուտների և հնարավորությունների բաշխման հավասար վերաբերմունքի ապահովում՝ գենդերային հարցերը տարբեր ոլորտների քաղաքականություններում ընդգրկելու միջոցով:

Գենդերային հարցերի ընդգրկումը քաղաքականություններում: Սա վերաբերում է օժանդակության բոլոր նախագծերում, ծրագրերում և քաղաքականություններում գենդերային վերլուծության ինտեգրմանը: 1995 թ. ՄԱԿ-ի Կանանց դրության վերաբերյալ չորրորդ համաշխարհային խորհրդրդաժողովի գործողությունների ՄԱԿ-ի հարթակի և Եվրահանձնաժողովի համապատասխան հաղորդակցության հիման վրա և դրանց լրացնող 1998 թ. Եվրամիության խորհրդի՝ Չարգացման համագործակցության մեջ գենդերային հարցերի ինտեգրման բանաձևի ընդունումը բեկումնային էր պաշտոնական քաղաքականությունում գենդերային իրազեկության առումով:

Միջուրտայնություն: Վերլուծական գործիք, որն ուղղված է հասկանալու և արձագանքելու այն ձևերին, որոնցով գենդերային ինքնությունը տրամախաչվում է այլ սոցիալական գործոնների հետ, որոնք այդ ինքնության բաղկացուցիչն են նաև: Այդ գործոններից են ռասան, տարիքը, էթնիկ պատկանելությունը, դասակարգը, գաղութարարական պատմությունը, կրոնը, սոցիալ-մշակութային կատեգորիաները և ինքնությունները, սեռական կողմնորոշումը:

ԿԱՅՈՒՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԻՄՆԱՅԱՐՑԵՐԸ¹⁶⁷

Ըստ կայուն զարգացման հիմնգերորդ՝ «Կանանց հավասարություն և հզորացում» նպատակի, ամենուր կանայք և աղջիկները պետք է ունենան հավասար իրավունքներ ու հնարավորություն և պետք է կարողանան ապրել բռնությունից ու խտրականությունից զերծ պայմաններում: Թեև կանանց հավասարությունը և հզորացումը կայուն զարգացման 17 նպատակներից (ԿՉՆ) մեկն է, այն միևնույն ժամանակ ներառական և կայուն զարգացման բոլոր կողմերի անքակտելի բաղադրիչն է: Կարճ ասած՝ բոլոր ԿՉՆ-ները կախված են Նպատակ 5-ի ձեռքբերումից:

Գենդերային հավասարությունը մինչև 2030 թ. պահանջում է անհապաղ գործողություններ՝ վերացնելու խտրականության բազմաթիվ արմատական պատճառները, որոնք դեռևս սահմանափակում են կանանց իրավունքները հանրային և մասնավոր հատվածներում: Օրինակ՝ խտրական օրենքները պետք է փոխվեն, իսկ օրենսդրությունը պետք է ընդունվի պրոակտիվորեն առաջ մղելու հավասարությունը: Նմանապես, թեև ավելի շատ կանայք են քաղաքական պաշտոններ զբաղեցնում վերջին տարիներին, այդ թվում նաև հատուկ քվտաների կիրառման արդյունքում, նրանք դեռևս կազմում են խորհրդարանականների ընդամենը 23,7 տոկոսը, ինչն առայժմ շատ հեռու է հավասարությունից: Իրավիճակը շատ ավելի բարվոք չէ նաև մասնավոր հատվածում, որտեղ ամբողջ աշխարհում կանայք զբաղեցնում են վերադաս և միջին օղակի ղեկավար պաշտոնների մեկ երրորդից փոքր մասը:

Ինչպես ցույց է տրվում ստորև՝ Շրջանակ 1-ում, գենդերային հավասարությունը և կանանց ու աղջիկների հզորացումն ամրագրված է որպես առանձին նպատակ (Նպատակ 5), բայց ավելի կարևոր է, որ այն կարմիր թելով անցնի բոլոր այլ նպատակների միջով:

167. Աղբյուրը՝ <http://www.unwomen.org/en/news/in-focus/women-and-the-sdgs/sdg-5-gender-equality>, <http://www.unwomen.org/en/news/in-focus/women-and-the-sdgs>, <https://sdgcompass.org/sdgs/sdg-5/>

Շրջանակ 1. ԿՉՆ 5-ի նպատակները և դրան կապակցված թիրախները

Կայուն զարգացման օրակարգը և գեոդերային հավասարությանը վերաբերող Կայուն զարգացման նպատակ (ԿՉՆ) 5-ն ուղղված է գեոդերային հավասարության ձեռքբերմանը և բոլոր կանանց և աղջիկների հզորացմանը մինչև 2030 թ.: Այն ունի ինը կապակցված թիրախներ, որոնք բոլորն էլ կապված են տնտեսական հզորացման հետ՝

- Ամենուր վերջ դնել կանանց և աղջիկների նկատմամբ խտրականության բոլոր ձևերին:
- Վերացնել կանանց և աղջիկների նկատմամբ բռնության բոլոր ձևերը հանրային ոլորտում և մասնավոր կյանքում, ներառյալ թրաֆիֆինգը, սեռական և այլ տեսակի շահագործումը:
- Վերացնել բոլոր վնասակար աշխատակարգերը, ինչպիսիք են երեխաների, վաղ և ստիպողական ամուսնությունը, ինչպես նաև կանանց սեռական օրգանների խեղումը:
- Ճանաչել և արժևորել չվճարվող խնամքը և տնային գործերը ըստ ազգային առանձնահատկությունների հանրային ծառայությունների մատուցման, ենթակառուցվածքների և սոցիալական պաշտպանության քաղաքականությունների, ինչպես նաև տնային տնտեսություններում և ընտանիքում ընդհանուր պատասխանատվության խթանման միջոցով:
- Ապահովել կանանց լիարժեք և արդյունավետ մասնակցությունը և առաջնորդության հավասար հնարավորությունները քաղաքական, տնտեսական և հանրային կյանքում որոշումների կայացման բոլոր մակարդակներում:
- Ապահովել համընդհանուր հասանելիություն սեռական և վերարտադրողական առողջությանը և վերարտադրողական իրավունքներին՝ Բնակչության և զարգացման միջազգային խորհրդաժողովի գործողությունների ծրագրին և Պեկինի գործողությունների պլատֆորմին, ինչպես նաև դրանց վերանայումներին ուղղված խորհրդաժողովների արդյունք հանդիսացող փաստաթղթերին համահունչ:

- Ստանձնել բարեփոխումներ՝ ազգային օրենսդրությանը համապատասխան կանանց հավասար իրավունքներ տալու տնտեսական ռեսուրսների նկատմամբ, ինչպես նաև հսկողություն տրամադրելու սեփականության հասանելիության, հողի ու գույքի այլ ձևերի, ֆինանսական ծառայությունների, ժառանգության և բնական ռեսուրսների նկատմամբ:
- Խթանել նպաստավոր տեխնոլոգիաների, մասնավորապես՝ տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործումը՝ աջակցելու կանանց հզորացմանը:
- Ընդունել և ուժեղացնել հստակ քաղաքականություններ և կիրարկվելի օրենսդրություն՝ գենդերային հավասարության խթանման և բոլոր մակարդակներում բոլոր կանանց և աղջիկների հզորացման համար:

ԿԶՆ-ները հիմնված են և լրացնում են Ադիս Աբեբայի Գործողությունների ծրագիրը, որն ընդունվել է 2015 թ. հուլիսին և պարտավորեցրել է պետություններին վերացնել գենդերային բռնությունը և խտրականությունը իր բոլոր դրսևորումներով և ապահովել կանանց հավասար իրավունքներից և հնարավորություններից օգտվելը բոլոր մակարդակներում՝ կապված տնտեսական մասնակցության, լսելի լինելու և ակտիվ գործունեության հետ: Այն ընդունվել է ՄԱԿ-ի Չարգացման ֆինանսավորման երրորդ միջազգային համաժողովի ավարտին, որը ներառում է միջոցառումներ՝ ուղղված համաշխարհային ֆինանսավորման աշխատակարգերի վերանայմանը և գենդերազգայուն բյուջետավորման և մշտադիտարկման խթանմանը:

Չարգացման օրակարգի նկատմամբ ԵՄ-ի (և ԵՄ անդամ պետությունների), ինչպես նաև Եվրոպայի խորհրդի և նման այլ կազմակերպությունների ամուր դիրքավորումը հստակորեն նպաստում է գենդերային հավասարության ընդունմանը որպես նոր ԿԶՆ-ի կենտրոնական տարր:

ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՅՈՐԴՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Կանանց քաղաքական հզորացումը ուղղված է քաղաքական որոշումների կայացման գործընթացում կանանց և տղամարդկանց համար հավասար հնարավորությունների ստեղծմանը և ապահովմանը: Տղամարդիկ և կանայք ունեն տարբեր կարիքներ և առաջնահերթություններ, կատարում են տարբեր դերեր, հանդիպում են տարբեր սահմանափակումների և տարբեր

պարտավորություններ ու պատասխանատվություններ են ստանձնում:

Գենդերային դերերը սահմանվում են սոցիալական մակարդակում արտացոլելով կանանց և տղամարդկանց միջև կենսաբանական տարբերությունները: Դրանք տարբեր են լինում՝ ըստ տարածաշրջանի և գործունեության ձևի, ինչպես նաև փոփոխվում են ժամանակի ընթացքում: Այս դերերը որոշիչ են դառնում սոցիալ-տնտեսական կյանքում և որոշումների կայացման գործընթացում:

Որոշումների կայացման գործընթացին կանանց մասնակցությունը մարդու իրավունք է և ժողովրդավարական հասարակության նախապայման, որտեղ թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց կարիքները և մտահոգությունները հաշվի են առնվում քաղաքական որոշումների կայացման գործընթացում: Գենդերային հավասարությունը պետք է լինի քաղաքական օրակարգի մի մասը, քանի որ կանայք թերևորկայացված են որոշումների ընդունման բուլր մակարդակներում:

Ընտրական գործընթացում կանայք տարբեր դերեր կարող են ստանձնել՝ ըստ քաղաքական հզորացման վերաբերելիության՝

- ընտրողներ,
- պատգամավորական թեկնածուներ,
- համայնքի ղեկավարներ և ավագանու անդամներ,
- ընտրական հանձնաժողովների անդամներ:

Թեկնածուների առաջադրման գործընթացում գենդերային հավասարությունն ապահովելու համար աշխարհի շատ երկրներում կիրառվում են ժամանակավոր միջոցառումներ՝ քվոտաներ: Դրանք կարող են լինել սահմանված օրենքով (Սահմանադրություն, ընտրական օրենսգիրք, քաղաքական կուսակցությունների մասին օրենքներ) կամ կամավոր սահմանվեն քաղաքական կուսակցությունների կողմից: Որոշ երկրներում Սահմանադրությամբ կամ օրենսդրությամբ ամրագրվում է պաշտոնների կոնկրետ քանակ, որոնք պետք է զբաղեցվեն կանանց կողմից: Համամասնական կամ խառը ընտրական համակարգ ունեցող երկրների 70 տոկոսը կիրառում է որոշակի տեսակի քվոտա: Իսկ միայն մեծամասնական ընտրական համակարգ ունեցող երկրներում քվոտաները կիրառվում են երկրների շուրջ 30 տոկոսի դեպքում:

Այնուամենայնիվ, քվոտայի սահմանումը դիտվում է որպես ժամանակավոր միջոց: Խորքային փոփոխությունների հասնելու համար անհրաժեշտ է բոլոր շահագրգիռ կողմերի շրջանում գենդերային հավասարության ապահովման ուղղությամբ կարողությունների զարգացում ապահովել, ինչպես նաև բարձրացնել իրազեկությունը գենդերային խնդիրների մասին և գենդերային զգայունությունը, այդ թվում՝ գենդերազգայուն բարեփոխումների միջոցով:

ԿՈՆՖԼԻԿՏԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԶԳԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ. ՀԱՄԱՌՈՏ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նյութը հիմնված է «Կոնֆլիկտագայուն մոտեցումների զարգացմանը, մարդասիրական աջակցությանը և խաղաղարարությանը. ռեսուրսային գիրք» ՀԿ-ների կոնսորցիումի կողմից մշակված աշխատության դրույթների վրա¹⁶⁸: Մանրամասն տեղեկատվության համար այցելեք www.conflictsensitivity.org կայքը:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կոնֆլիկտի նկատմամբ զգայունությունը (ԿԶ) հիմնված է այն ենթադրության վրա, որ յուրաքանչյուր նախաձեռնություն, որն իրականացվում է կոնֆլիկտի ազդեցության գոտիներում, կունենա հետևանքներ, որոնք դրականորեն կամ բացասաբար կանդրադառնան կոնֆլիկտի վրա:

Կոնֆլիկտի նկատմամբ զգայունությունը նշանակում է ձեր կազմակերպության կարողությունը.

- **հասկանալու ձեր աշխատանքի համատեքստը**
- **հասկանալու համատեքստի և ձեր միջամտության փոխհարաբերությունը**
- **գործելու՝ հասկանալով վերոնշյալ փոխհարաբերությունները (համատեքստի և միջամտության)՝ բացասական հետևանքներից խուսափելու և գործողությունների դրական ազդեցությունը մեծացնելու նպատակով:**

168. Resource Pack for Conflict-Sensitive Approaches to Development, Humanitarian Assistance and Peacebuilding, Africa Peace Forum, Center for Conflict Resolution, Consortium of Humanitarian Agencies, Forum on Early Warning and Early Response, International Alert, and Saferworld, 2015, http://conflictsensitivity.org/key_reading/conflict-sensitive-approaches-to-development-humanitarian-assistance-and-peacebuilding-resource-pack/.

ԿԶ-ն ձեր մոտեցումն է աշխատանքին և կոնֆլիկտի գոտում ձեր կազմակերպության ներկայությանը: ԿԶ-ը ներառում է պլանավորում, առաջնահերթությունների որոշում, աշխատանքի իրականացման, մոնիթորինգի և գնահատման մեթոդների սահմանում, ինչպես նաև ձեր ներկայության կամ աշխատանքի ազդեցության ընդհանուր գնահատում:

ԿԶ-ը հատուկ ձեռնարկ կամ ուղեցույց չէ: ԿԶ-ը նշանակում է, որ այս կամ այն աշխատանքն իրականացնելիս դուք համոզված եք, որ տեղյակ եք ձեր աշխատանքի համատեքստում առկա կոնֆլիկտի դինամիկային, և մտածում եք՝ ինչպես կազմակերպել և հարմարեցնել ձեր աշխատանքը, որպեսզի հնարավոր լինի՝

- խուսափել կոնֆլիկտի դինամիկայի վրա հնարավոր բացասական ազդեցություններից,
- առավելագույնի հասցնել ձեր աշխատանքի արդյունքը կոնֆլիկտի դինամիկայի վրա դրական ազդեցություն ունենալու նպատակով:

Կոնֆլիկտի նկատմամբ զգայուն լինել՝ չի նշանակում ամեն գնով խուսափել բոլոր հնարավոր կոնֆլիկտներից: Եթե դուք ներառված եք զարգացման աշխատանքներում, ապա պետք է ընդունեք, որ ձեր աշխատանքը ստեղծելու է զանազան կոնֆլիկտներ, քանի որ զարգացումը հանգեցնում է գոյություն ունեցող հարաբերությունների թարմացմանը: ԿԶ-ի խնդիրն է՝ համոզված լինել, որ դուք լիովին հասկանում եք կոնֆլիկտի դինամիկան ձեր աշխատանքի համատեքստում և կարող եք մանրամասնորեն ուսումնասիրել, թե ինչպես է ձեր ծրագիրը փոխազդելու այդ դինամիկայի հետ: Դուք պետք է նաև համոզված լինեք, որ ձեր աշխատանքը չի ավարտվի ավելի շատ վնաս, քան օգուտ հասցնելով:

ԿԶ-Ի ԿԻՐԱՌՈՒՄԸ

Ստորև տեղադրված աղյուսակում ներկայացված են ԿԶ-ի առանցքային տարրերը.

«Ինչ» և «ինչպես». ԿԶ	
Ինչ անել	Ինչպե՞ս անել
Հասկանալ աշխատանքի համատեքստը	Պարբերաբար իրականացնել կոնֆլիկտի վերլուծություն
Հասկանալ կապը ձեր աշխատանքի/ միջամտության և համատեքստի միջև	Կապել կոնֆլիկտի վերլուծությունը ձեր միջամտության ծրագրային ցիկլի հետ
Կիրառել վերոնշյալ հասկացումը բացասական ազդեցությունից խուսափելու և դրական ազդեցությունը առավելագույնի հասցնելու համար	Հաշվի առնելով ԿԶ-ն՝ իրականացնել միջամտության պլանավորում, իրագործում, մոնիթորինգ և գնահատում (անհրաժեշտության դեպքում նաև վերանայում)

Կոնֆլիկտի վերլուծության իրականացում

Կոնֆլիկտի վերլուծությունը (ԿՎ) կոնֆլիկտի առարկայի, պատճառների, դերակատարների և դինամիկայի համակարգային ուսումնասիրությունն է: ԿՎ-ն կարող է իրականացվել տարբեր մակարդակներում (օրինակ՝ տեղական, տարածաշրջանային, ազգային): Շատ կարևոր է ԿՎ համապատասխան ֆոկուսի սահմանումը, քանի որ ազգային մակարդակում առկա ինդիքները կարող են տարբերվել տեղականից: Բացի դրանից՝ նույնքան կարևոր է կոնֆլիկտի դինամիկայի մնացած փոխկապակցված մակարդակների հետ համակարգային կապի ստեղծումը:

Վերլուծություն ծրագրային ցիկլի շրջանակներում

Ծրագրային ցիկլը բաղկացած է երեք կարևոր տարրերից՝ պլանավորում, իրականացում և մոնիթորինգ ու գնահատում: Կոնֆլիկտի դինամիկայի

ընկալումը վերաբերում է բոլոր երեք փուլերին՝ ծրագրի ամբողջ ցիկլի ընթացքում:

ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԶԳԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Կոնֆլիկտի նկատմամբ զգայունության պլանավորումը կիրառվում է անկախ բռնության մակարդակից և հաճախականությունից՝ կոնֆլիկտի ազդեցության բոլոր համատեքստերում, ներառյալ այն իրավիճակները, երբ լարվածությունը դեռևս չի վերածել կոնֆլիկտի: ԿԶ պլանավորումը ուղղորդում է պլանավորման գործընթացը՝ հաշվի առնելով կոնֆլիկտի վերլուծությունը:

Միջամտության օբյեկտի սահմանում

Որոշ իրավիճակներում կազմակերպությունները կիրառում են ԿԿ-ն՝ միջամտության նպատակը սահմանելու համար (օրինակ՝ եթե ջրային ռեսուրսի անբավարարությունը կարող է մոտ ապագայում դառնալ կոնֆլիկտի լուրջ աղբյուր, ապա որպես ծրագրային նպատակ կարող է ընտրվել ջրամատակարարման բարելավումը): Այլ դեպքերում կազմակերպությունն արդեն ունի սահմանված նպատակ, և ԿԿ-ն կկիրառվի գործողությունների պլանավորման համար՝ հաշվի առնելով կոնֆլիկտի զգայունությունը:

Միջամտության գործընթացի սահմանում

Եթե Դուք սահմանել եք նախագծի նպատակները, ապա միջամտության գործընթացը կարող է պլանավորվել ԿԶ ձևաչափով՝ ներառելով այնպիսի հարցերի սահմանում, ինչպիսիք են «ո՞վ», «որտե՞ղ» և «ե՞րբ»:


ԿՎ-ի համար առանցքային հարցերը

Առարկա/պրոֆիլ

1. Ո՞րն է քաղաքական, տնտեսական, սոցիալ-մշակութային համատեքստը:
2. Որինք են քաղաքական, տնտեսական, սոցիալական խնդիրները:
3. Ի՞նչ փոխհարաբերություն ունեն կոնֆլիկտի ազդեցության տարածաշրջանները համատեքստի հետ:
4. Ինչպիսի՞ն է կոնֆլիկտի պատմությունը:

Պատճառներ

1. Որինք են կոնֆլիկտի կառուցվածքային պատճառները:
2. Ո՞ր խնդիրները կարող են դիտարկվել որպես կոնֆլիկտի անմիջական պատճառներ:
3. Ի՞նչը կարող է խթանել կոնֆլիկտի էսկալացիան:
4. Ի՞նչ նոր գործոններ կան, որոնք կարող են երկարաձգել կոնֆլիկտի դինամիկան:
5. Ո՞ր գործոնները կարող են խթանել խաղաղության հաստատումը:



Ղերակատարներ

1. Ովքե՞ր են հիմնական ղերակատարները:
2. Որինք են նրանց շահերը, նպատակները և դիրքորոշումները, ինչպե՞ս են դրանք փոխհարաբերվում:
3. Ինչպիսի՞ն է խաղաղության հեռանկարը:
4. Ո՞ր ղերակատարները կարող են համարվել «սփոյլերներ» (մարդիկ, որոնք նպաստում են կոնֆլիկտի էսկալացիային): Ինչո՞ւ: Արդյո՞ք դիտավորյալ են այդ «սփոյլերները», թե՞ ոչ:

Դինամիկա

1. Որինք են կոնֆլիկտի ներկայիս միտումները:
2. Որինք են հնարավորությունները:
3. Ի՞նչ սցենար կարելի է մշակել կոնֆլիկտի պրոֆիլի, պատճառների և ղերակատարների վերլուծության արդյունքում:

Պատկեր 1. Կոնֆլիկտի վերլուծությունը վերաբերում է միջամտության բոլոր կետերին

Ո՞վ. ծրագրի շահառուներ, աշխատակիցներ և գործընկերներ

Շահառուներին ընտրելիս պետք է հաշվի առնել ինչպես պահանջմունքների գնահատումը (կամ այլ տեսակի գնահատում), այնպես էլ ԿԿ-ն:

- Ընտրությունը հիմնված է պահանջմունքներին վրա (թե՛ հավասարության վրա):
- Ինչպե՞ս է ընտրությունը հարաբերվում հանրույթում առկա բաժանումների հետ, և որո՞նք են նման իրավիճակի պայմանները:

Տեղացի և ոչ տեղացի աշխատակիցների ներգրավումն ունի ինչպես բացասական, այնպես էլ դրական կողմեր: Որոշ ազգությունների ներգրավումը կարող է դիտարկվել որպես կողմնակալ՝ տվյալ աշխատակցի երկրի հետ քաղաքական լարվածության առկայության դեպքում, կամ կարող է դրական ընկալվել, եթե երկրների միջև առկա է բարյացակամ փոխհարաբերությունների պատմություն: ԿԶ-ի առանցքային տարր կարող է լինել տեղի լեզուներով կամ բարբառներով խոսելը, սակայն տեղացի աշխատակիցները կարող են չընկալվել որպես չեզոք: Աշխատակիցներին աշխատանքի ընդունելու մոտեցումը ԿԶ-ի առանցքային տարրերից է:

Համագործակցության զարգացման գործընթացը պետք է իրականացվի զգուշորեն: Հարցերի մեծամասնությունը պետք է ենթարկվի ԿԿ-ի, հատկապես երբ քննարկվում է, թե ովքեր են գործընկերները, և ինչպիսին են նրանց հարաբերություններն այլ դերակատարների հետ: Եղել են իրավիճակներ, երբ կոնֆլիկտի գլխավոր հերոսները լեգիտիմություն են ձեռք բերել միջազգային դերակատարների հետ համագործակցության միջոցով: Նմանօրինակ գիտելիքի կարելի է հասնել միայն դերակատարների շուրջ կենտրոնացած ԿԿ-ի միջոցով:

Որտե՞ղ. ո՞ր աշխարհագրական տարածաշրջանում պետք է իրականացվի ծրագիրը

Գործունեության աշխարհագրության որոշումը պահանջում է ԿԿ-ի և պահանջմունքների գնահատման արդյունքների միջև կապի գիտակցում: Սա պետք է որոշվի նաև հանրույթի զանազան հատվածների մասնակցությամբ: Ընտրությունը կարող է անմիջական ազդեցություն ունենալ կոնֆլիկտի համատեքստի վրա, օրինակ՝ հողային իրավունքների խախտումները սրելու, որոշակի ռազմական կամ տնտեսական շահերին (հաճախ ոչ կանխամտածված) աջակցություն ցուցաբերելու, կամ որոշակի քաղաքական խմբերի կամ անձերի լեգիտիմացման միջոցով: Սրանք իրավիճակներ են,

երբ միջամտությունը կարող է ոչ դիտավորյալ կերպով բերել կոնֆլիկտի սրմանը կամ բաց թողնել այն մեղմացնելու հնարավորությունը:

Բացի դրանից՝ միջամտությունների մեծ մասն օգուտ չի բերի ողջ բնակչությանը. անխուսափելիորեն կլինեն մարդիկ և հանրույթներ, որոնք գտնվում են շահառուների հարևանությամբ: Կարևոր է հասկանալ շահառուների խմբերի աշխարհագրական սահմանումը՝ արդյո՞ք այն կախված է բաժանման գծից: Արդյո՞ք սա կարող է վատթարացնել առկա բաժանումը կամ ստեղծել նորը: Եթե միջամտությունն իրականացվում է կոնֆլիկտի վրա ազդեցության նպատակով, ապա այն ինքնին կորոշի գործունեության աշխարհագրությունը: Այս հարցերը պետք է դիտարկել ԿԿ-ի միջոցով՝ միջամտության աշխարհագրության և առկա համատեքստի համապատասխանությունն ապահովելու նպատակով:

Ե՞րբ. միջամտության ժամանակի և տևողության որոշում

Կոնֆլիկտային իրավիճակներում ժամանակի կառավարումը կարևոր ռեսուրս է: Նախագծերից քաղված դասեր նկարագրող շատ փաստաթղթերում ընդգծվում է ժամանակի ճիշտ տնօրինման կարևորությունը: Այստեղ պետք է հատուկ ուշադրություն դարձնել ԿԿ-ի հետևյալ տարրերին՝

1. կոնֆլիկտի խթաններ,
2. կոնֆլիկտի սցենարներ:

Կոնֆլիկտի խթանները կարող են սահմանափակ լինել ժամանակի մեջ, օրինակ՝ ընտրությունները կամ եղանակի փոփոխականությամբ պայմանավորված ամենամյա լրավածությունը: Խթանների գիտակցումը կարևոր է միջամտության մեկնարկի, ավարտի և դրանում փոփոխություններ մտցնելու հնարավոր ժամանակի հետ կապված հարցերի լուծման համար: Սցենարները պետք է կապակցվեն ծրագրի ժամանակահատվածի հետ: Անհրաժեշտ է իրականացնել հեռանկարային հնարավորությունների և խոցելի պահերի գնահատում: Սա կարող է ներառել շարժառիթների արտացոլում. արդյո՞ք միջամտության տևողությունն արդարացված է կազմակերպական նպատակների, ռեսուրսների և համատեքստի պահանջների տեսանկյունից:

Նախագիծը և ծրագրերը միշտ ավարտվում են: Ծրագրային ողջ ցիկլի ընթացքում ԿԶ-ն ապահովելու համար պետք է ծրագրի ամփոփումը պլանավորել և իրականացնել՝ հաշվի առնելով զգայունությունը:

Նախագիծը ԿԶ եղանակով ամփոփելու երեք մոտեցում կա.

- ա) նախագծի ամփոփումը պայմանավորված դրա ավարտով,
- բ) նախագծի երկարաձգում,
- գ) նախագծի շարունակում նոր փուլից:

Նախագծի ավարտի ռազմավարությունը պետք է լինի բավականաչափ զգայուն, որպեսզի արտացոլի կոնֆլիկտի դինամիկայի փոփոխությունները, բայց միաժամանակ բավականին պրոակտիվ՝ շահառուների չափից բարձր սպասելիքներից խուսափելու համար:

Լուծումը պետք է համապատասխանի ԿՎ-ով և դրան հաջորդող մոնիթորինգով սահմանված դինամիկային:

Ցուցիչների սահմանում

ԿԶ ցուցիչները դասակարգվում են երեք խմբի՝

- Կոնֆլիկտի ցուցիչներ, որոնք մշակված են ԿՎ փուլում և օգտագործվում են կոնֆլիկտի գործոնների զարգացման մոնիթորինգի համար:
- Նախագծի ցուցիչներ, որոնք սահմանում են նախագծի արդյունավետությունը, ազդեցությունն ու կայունությունը:
- Փոխազդեցության ցուցիչներ, որոնք մշակված են պլանավորման փուլում՝ հաշվի առնելով ԿՎ-ի ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը:

Նախագծի և կոնֆլիկտի միջև փոխազդեցության ցուցիչներն են.

- ա) կոնֆլիկտի վրա նախագծի ազդեցության չափում (օրինակ՝ խմելու ջրի սահմանափակ հասանելիությունն այլևս հակադրություն չի ստեղծում էթնիկ փոքրամասնությունների միջև).
- բ) նախագծի վրա կոնֆլիկտային գործոնների ազդեցության չափում (օրինակ՝ զինված խմբերի կողմից փրկագնի պահանջով հափշտակված աշխատակիցների թիվը, ինչը բարձրացնում է լարվածությունը՝ բարդացնելով միջխմբային գործունեությունը):

ԿՉ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

ԿՉ իրականացումը ներառում է համատեքստի հանգամանալից ուսումնասիրում ԿԿ-ի պարբերական վերանայման միջոցով, որն օգնում է կապակցել համատեքստի ընկալումը գործունեության իրականացման նպատակների և գործընթացի հետ, ինչպես նաև պատշաճ համաձայնեցում համատեքստի հետ: ԿՉ իրականացման առանցքային տարրերն են՝

- իրականացման գործընթացի զգայուն կառավարում (միջոցառումներ, աշխատակիցներ, տեղեկատվություն, ֆինանսներ և այլն).
- համատեքստի պարբերական մոնիթորինգ և միջամտության հետ համատեքստի փոխազդեցության ապահովում՝ ԿԿ-ի ընթացքում և պլանավորման փուլում սահմանված ցուցիչների կիրառմամբ.
- Նախագծի համապատասխանեցում նոր տեղեկատվության լույսի ներքո, իրականացման նպատակի և գործընթացի շուրջ կենտրոնացված մոնիթորինգ:

ԿՉ-ի իրականացման 4 առանցքային քայլեր

Քայլ 1. Կոնֆլիկտի վերլուծության նախաձեռնում

Քայլ 2. Նախագծի պլանավորում

- ա) գործողությունների պլանի մշակում և գնահատում,
- բ) պայմանավորվածության ձեռքբերում՝ համաձայն պայմանագրի և նախագծի հարցերի,
- գ) կոորդինացում,
- դ) անվտանգության ընթացակարգերի որոշում:

Քայլ 3. Նախագծի իրականացում, մոնիթորինգ և համաձայնեցում

- ա) իրականացում և մոնիթորինգ,
- բ) համաձայնեցում համատեքստի և փոհարաբերության հետ:

Քայլ 4. Նախագծի կոնֆլիկտազգայուն ամփոփում:

ԿՉ-ի ընթացքում շատ կարևոր է ճկունությունը: Կոնֆլիկտի դինամիկայի փոփոխականությունը երբեմն հանգեցնում է անսպասելի արդյունքների: Բոլոր կողմերի հետ շարունակական երկխոսությունը և կոնֆլիկտի վերլուծության պարբերական վերանայումը նվազագույնի են հասցնում անակընկալների կամ անսպասելի իրավիճակների քանակը և մակարդակը:

Իրականացնողների կողմից այդպիսի ճկունության ապահովումը պահանջում է նաև ճկունություն դրսևորների կողմից:

ԿՈՆՖԼԻԿՏԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԶԳԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՅԱՏՈՒՄ

Կոնֆլիկտագայուն մոնիթորինգը նախագծի աշխատակիցներին հնարավորություն կտա հասնել համատեքստի, միջամտության և վերջիններիս միջև կապի խորքային ընկալման: Այն նաև հնարավորություն է տալիս հասկանալ կոնֆլիկտի դերակատարներին, առարկան, պատճառները և դինամիկան՝ նախագծի կամ ծրագրային միջոցառումների մեջ համապատասխան փոփոխություններ անելու համար: Այդպիսով, կոնֆլիկտի նկատմամբ զգայունության մոնիթորինգը օգնում է հասնել կոնֆլիկտի դինամիկայի վրա դրական ազդեցության:

Գնահատման ավանդական միջոցառումների շարքում ԿԶ գնահատումը ենթադրում է կոնֆլիկտի դերակատարների, առարկայի, պատճառների և դինամիկայի խորքային ընկալում: ԿԶ գնահատումն օգտագործվում է հասկանալու համար միջամտության վրա համատեքստի և հակառակ ազդեցությունը: Այս գնահատականը հետագայում կարող է կիրառվել մեկնարկած նախաձեռնությունների ապագա փուլերը վերանայելիս կամ դաս լինել հետագա նախաձեռնությունների համար:

Ինչպես ներկայացված է վերևում, կա ԿԶ ցուցիչների 3 տարր.

- կոնֆլիկտի ցուցիչներ,
- նախագծի ցուցիչներ,
- փոխազդեցության ցուցիչներ:

Փոխազդեցության ցուցիչները կիրառվում են, մասնավորապես, նախագծի վրա համատեքստի և հակառակ ազդեցության մոնիթորինգի համար: Օրինակ՝ եթե համատեքստը ցույց է տալիս, որ կոնֆլիկտի պատճառ է իշխանության տեղական մարմիններում առկա կոռուպցիան, իսկ նախագիծը ներառում է իշխանության տեղական մարմինների ներուժի զարգացում, ապա փոխազդեցության ցուցիչները կչափեն.

- նախագծի ազդեցությունը իշխանության տեղական մարմիններում կոռուպցիայի վրա.
- իշխանության տեղական մարմիններում առկա կոռուպցիայի ազդեցությունը նախագծի վրա:

ԿԶ մոնիթորինգ և գնահատում իրականացնելիս հանդիպող առանցքային բարդությունը հետադարձ կապի խնդիրն է: Օրինակ՝ հասարակական կազմակերպությունը կարող է աշխատել հեռավոր գյուղում՝ երկու էթնիկ խմբերի համար ջրային ռեսուրսների՝ հավասար հասանելիությունն ապահովելու նպատակով (խնդիր, որն արդեն սահմանվել է որպես առանցքային ԿԿ-ի գործընթացում): Հետևելով նախագծի հաջող իրականացմանը՝ գնահատողները, կիրառելով փոխազդեցության ցուցիչներ, բացահայտել են, որ էթնիկ խմբերի միջև ամուսնությունների թիվն աճել է: ԿԶ գնահատման բարդությունն այն է, որ անհրաժեշտ է սահմանել՝ արդյոք 1) միջէթնիկ ամուսնությունների աճը տեղի է ունեցել միջամտության արդյունքում, 2) դա նույն կամ մեկ այլ մակարդակում ուրիշ դերակատարների ծավալած գործունեության արդյունք է, թե՞ 3) դա արտաքին գործոնների հետ կապ չունեցող համատեքստի փոփոխության արդյունքն է:

ԿԶ մոնիթորինգի և գնահատման ընթացքում պետք է ընդունել, որ նախագծի և համատեքստի միջև ոչ միշտ կա պատճառահետևանքային կապ:

Այնուամենայնիվ, ցուցիչները մշակելիս հարկավոր է հաշվի առնել հետադարձ կապին առնչվող բարդությունները:

Լավ ցուցիչները սովորաբար ոչ թե մատնանշում են նախագծի և համատեքստի ուղիղ փոխազդեցությունը, այլ կենտրոնանում են այդ փոխազդեցության ավելի անուղղակի արտահայտումների վրա (օրինակ, ոչ թե՝ «արդյոք նախագիծը նպաստեց խտրականության նվազմանը», այլ՝ «կամ արդյոք շրջանի հատվածներ, որոնք առավել անվտանգ են որոշակի խմբերի, բայց ոչ բոլորի համար»):

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել այս կայքը՝ www.conflictsensitivity.org



ՕԳՏԱԿԱՐ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Կոնֆլիկտների տրանսֆորմացիա. ներածական դասախոսություն (Jam Session 30), Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, 17.03.2018, <https://epfarmeria.am/hy/video/conflict-transformation-introduction>
2. Կոնֆլիկտների տրանսֆորմացիա. գաղափարների պատմություն (Jam Session 40), Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, 11.11.2018, <https://epfarmeria.am/hy/video/conflict-transformation-the-story-of-ideas>
3. Զննադատական մտածողության և Կոնֆլիկտների տրանսֆորմացիայի դպրոցներ, Ուսուցողական կյուբերի ցանկ, Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, 2019, https://epfarmeria.am/sites/default/files/Document/CrTS_2019_Literature_Additional_Materials_as_of_April_18_2019.pdf
4. Resource Pack for Conflict-Sensitive Approaches to Development, Humanitarian Assistance and Peacebuilding, Africa Peace Forum, Center for Conflict Resolution, Consortium of Humanitarian Agencies, Forum on Early Warning and Early Response, International Alert, and Saferworld, 2015, http://conflictsensitivity.org/key_reading/conflict-sensitive-approaches-to-development-humanitarian-assistance-and-peacebuilding-resource-pack/

ABSTRACT

The capacity building programs implemented for civil society organisations (CSOs) in Armenia have been mostly focused on CSOs' organizational capacity building (i.e. strategic management, fundraising, human resources management, etc.). In addition, a number of projects have been implemented to enhance and strengthen CSO participation in public policy-making. However, participation in policy-making and implementation processes cannot be effective if CSOs do not possess theoretical knowledge, do not know the current situation in the related area, or are not able to clearly communicate relevant facts and reasoning behind their proposals. A well-reasoned and competent approach is key to success in advocacy initiatives in any policy area.

The BRIDGE for CSOs project aims to strengthen the capacity of Armenian civil society organizations to better respond to citizens' needs. To achieve this goal, the project provided a range of professional training and consulting for CSOs working in different areas (such as the environment, education, culture, social entrepreneurship, etc.). The publication of this manual is a unique wrap-up of the project as it will enable both project participants and other interested CSOs to use the accumulated resources and professional knowledge.

The manual presents key concepts and ideas in the environment, education, economics, entrepreneurship, youth, and gender equality, describing the current situation and area development trends in Armenia. The manual is

intended to assist CSOs already working or just starting their activities in the relevant field by offering basic knowledge and directions to consider for further advocacy initiatives. At the same time, it will also be useful for CSO members, state employees, and larger audience to improve their general knowledge, to become familiar with a particular field, and to give a thoughtful approach to relevant facts and developments. Current developments in Armenia’s political and economic life prove that a vibrant civil society can play a significant role and influence the reforms and decisions made, whether they are in environmental, educational, economic, or other fields. Furthermore, apart from CSOs working in specific fields, any other interested organization and or citizen should be familiar with the basic concepts, legal regulations, and the current situation in the relevant area.

The materials compiled in this manual provide general understanding of legal regulations in the environment, education, gender equality, and other topics, as well as information about the state institutions that develop and implement sector policies. The authors also highlighted relevant legislative and practical gaps that need to be addressed in each of these areas. CSOs may take these suggestions and start to work in the outlined directions, launch campaigns, or approach them critically and raise additional issues. The manual also contains educational materials on the social impact of social enterprises, gender-related concepts, definitions, and approaches to conflict sensitivity. Finally, some of the materials present statistical data, information from relevant assessments and studies in Armenia, thus serving as additional training materials and or evidence for advocacy campaigns.

The authors of the manual hope that it will enable CSOs to enhance their current advocacy campaigns or to launch new initiatives addressing the highlighted problems. We believe that Armenian CSOs will continue to be a driving force for the country’s development, human rights protection, and dialogue between the government and society.

«ԵՅՅ ԳԱՄԱԼՍԱՐԱՆ» ԽՈՐԱԳՐԻ ՆԵՐՔՈ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԱՅԼ ԳՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

- Զննադատական մտածողություն. տրամաբանական սխալներ և հռետորաբանական շեղող կիրառուկներ, 2019, <https://epfarmeria.am/hy/document/Logical-Fallacies-and-Misleading-Rhetorical-Tricks-Critical-Thinking>
- Զամակարգված մտագործունեության մեթոդաբանություն և կրեատիվ խաղեր, 2018, <https://epfarmeria.am/hy/document/MSTA-Creative-Game>
- Զասարակություն և տեղական ինքնակառավարում. կազմակերպագործունեական խաղի արդյունքները, 2018, <https://epfarmeria.am/hy/document/OAS-Highlights-CELoG-2018>
- ԵՅՅ-ն և մշակույթը, գրականությունն ու արվեստը (անգլերեն), 2018, <https://epfarmeria.am/document/EPF-Culture-Literature-Art>
- Զանդուրժողականության և անհանդուրժողականության դրսևորումները հայ գրականության մեջ, 2017, <https://epfarmeria.am/document/Manifestations-of-Tolerance-and-Intolerance-in-Armenian-Literature>
- Զրատարակչական գործընթացի ուղեցույց/ Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, 2019, <https://epfarmeria.am/hy/document/publication-algorithm>

PUBLICATIONS UNDER THE 'EPF UNIVERSITY' HEADLINE

- Critical Thinking: Logical Fallacies and Misleading Rhetorical Tricks (in Armenian). (2019) <https://epfarmeria.am/hy/document/Logical-Fallacies-and-Misleading-Rhetorical-Tricks-Critical-Thinking>
- About the Methodology of Systemic Thought Activity (MSTA) and Creative Games. (2018) <https://epfarmeria.am/document/MSTA-Creative-Game>
- Society and Local Self-Governance. Conclusions and Recommendations from Organizational Activity Seminar. (2018) <https://epfarmeria.am/document/OAS-Highlights-CELoG-2018>
- Culture, Literature and Art. (2018) <https://epfarmeria.am/document/EPF-Culture-Literature-Art>
- Manifestations of Tolerance and Intolerance in Armenian Literature (in Armenian, with English abstracts). (2018) <https://epfarmeria.am/document/Manifestations-of-Tolerance-and-Intolerance-in-Armenian-Literature>
- Publishing Guide/ Eurasia Partnership Foundation (in Armenian, with English abstracts). (2019) <https://epfarmeria.am/hy/document/publication-algorithm>

Եվրասիա համագործակցություն հիմնադրամի (ԵՀՀ) տեսլականն է նպաստել նրան, որ Հարավային Կովկասը կայանա որպես խաղաղ, հակամարտություններից զերծ և համագործակցող տարածաշրջան և աչքի ընկնի քաղաքացիների ներգրավման բարձր մակարդակով, սոցիալապես պատասխանատու ձեռներեցությամբ ու կայուն, պատասխանատու և արդյունավետ հասարակությամբ: ԵՀՀ առաքելությունն է հզորացնել մարդկանց սոցիալական արդարության և տնտեսության ասպարեզներում Էական փոփոխությունների համնելու նպատակով և իրականացնել կոնկրետ ծրագրեր, որոնք կօգնեն մարդկանց բարելավել իրենց համայնքը և կյանքը:

Eurasia Partnership Foundation's (EPF) guiding vision is a South Caucasus that is peaceful, conflict-free and cooperative with civically engaged citizens, socially responsible businesses, and sustainable, accountable and effective third sector organizations. EPF works on critical thinking issues and alternative education methods for many years within its various programs: human rights, conflict transformation and peace-building, and civil society building.

**ԱՅԺՄԵԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ ՇԱՅԵՐԻ
ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ**

Ուսումնական-տեղեկատվական նյութերի ձեռնարկ ԶՀԿ-ների համար

PRESENT-DAY KNOWLEDGE FOR EFFECTIVE ADVOCACY

Manual of informational-educational materials for CSOs

Սրբագրիչ՝ **Անժելա Ավագյան**
Խմբագիր՝ **Տաթևիկ Մարգարյան**
Էջադրումը և գրքի ձևավորումը՝ **Տաթև Եսայանի**

Չափսը. 17X25

Տառատեսակները. Arian AMU

Եվրասիա համագործակցություն հիմնադրամ

Ազատության պող. 1/2 1, բն. 23, 0037, Երևան

www.epfarmeria.am

Ուրախ կլինենք ստանալ ձեր կարծիքը ձեռնարկ

վերաբերյալ հետևյալ էլ. հասցեով

Please send your comments / feedback to

info-epf@epfound.am

Գիրքը հնարավոր է ներբեռնել հետևյալ հղմամբ.

The book can be downloaded via this link:

<https://epfarmeria.am/hy/document/Manual-for-CSOs-Bridge4CSOs>



Present-day Knowledge for Effective Advocacy Manual of informational-educational materials for CSOs

The manual is designed to help civil society organisations (CSOs) in building their knowledge on the environment, education, economics, entrepreneurship, youth, and gender equality by presenting field-specific, while also user-friendly knowledge in specific areas. The handbook can be useful for CSOs working in various areas to develop their own capacities, as well as for CSO trainers and consultants. The design, publishing, and printing of the manual has been carried out by EPF.



This publication was produced with the financial support of the European Union. Its contents are the sole responsibility of Eurasia Partnership Foundation and do not necessarily reflect the views of the European Union.



This publication is a part of the series of manuals published under the “EPF University” heading. This publication is a part of **Civil Society (CS)** direction. The series include texts which belong to four large thematic directions:

Critical Thinking (CT)

War and Peace (WP)

Civil Society (CS)

Education, methodology of history, culture and values (EMHCV)

